

ՈՌԻՔԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՆԱԻՐԱ ԳՈՂՈՍՅԱՆ

ՆԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ԹՈՒՐՔ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ
(XX դ. ԵՐԿՐՈՐԳ ԿԵՍԻՆ–XXI դ. ՄԿՉԲԻՆ)

ԵՊ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ
(XX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ–XXI Դ. ՄԿԶԲԻՆ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2016

ՀՏԴ 821.512.161.0:94(479.25)
ԳՄԴ 83.3(5ԹՌԼ)+63.3(5Հ)
Մ 537

*Հրատարակության է երաշխավորել
Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը*

*Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի
կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնոր-
հիվ՝ № SCS 13YR-6B0034 գիտական թեմայի շրջանակում:*

ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՆԱԻԲԱ ՊՈՂՈՍՅԱՆ

**Մ 537 Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրակա-
նության մեջ (XX դ. երկրորդ կեսին–XXI դ. սկզբին)/Ռ.
Մելքոնյան, Ն. Պողոսյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2016, 148 էջ:**

Գրքում ներկայացված է հայկական թեմատիկայի ուղղակի և անուղղա-
կի արտացոլումը 20-րդ երկրորդ կեսի և 21-րդ դարի սկզբի թուրք գրականու-
թյան մեջ: Քննության են ենթարկվում գրական ասպարեզում Հայոց ցեղասպա-
նության հարցի նկատմամբ թուրքական ժխտողականության դրսևորումները,
մակերեսային և այլաբանական անդրադարձները, ինչպես նաև վերջին շրջա-
նում տեղի ունեցող զարգացումները: Նախատեսված է արևելագետ-թուրքա-
գետների, գրականագետների, ազգագրագետների և ընթերցողների լայն շրջա-
նակի համար:

ՀՏԴ 821.512.161.0:94(479.25)
ԳՄԴ 83.3(5ԹՌԼ)+63.3(5Հ)

ISBN 978-5-8084-21-68-4

© ԵՊՀ հրատ., 2016

© Ռ. Մելքոնյան, Ն. Պողոսյան, 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....	5
ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ 20-ՐԴ ԴԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ	8
ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ.....	38
<i>Հայոց ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները.....</i>	38
<i>Հայկական թեմատիկայի պոստմոդեռնիստական արձարձումները.....</i>	81
<i>Թեմայի հետագա զարգացումը. թույլ գեղարվեստականության և էժանագին քարոզչության դրսևորումները.....</i>	97
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՑՈՂՈՒՄՆԵՐԸ	102
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ ԴՐԴԻՉ ՈՒԺ.....	115
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	124
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	142

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայտնի է, որ գրականության կարևոր խնդիրներից է գեղարվեստի նյութ դարձնել տվյալ պահին հասարակությանը հուզող և արդիական խնդիրները, սակայն, միննույն ժամանակ, հարկ է նշել, որ երկրում և հասարակության մեջ տիրող մթնոլորտը նույնպես ազդում է գրական թեմաների ընտրության վրա: Այս առումով փաստենք, որ Թուրքիայում արգելված մի շարք թեմաների հանդեպ 20-րդ դարի թուրք գրականությունն, ընդհանուր առմամբ, որդեգրել է նույն դիրքորոշումը: Այդ թեմաների շարքում են 1915-23 թթ. Հայոց ցեղասպանությունը, աքսորը, բռնի կրոնափոխված՝ իսլամացված, հայերի խնդիրները: Գրականությունը նաև համարվում է հասարակության մտածելակերպի, աշխարհայացքի լավագույն արտահայտիչը և Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայում տարածված ժխտման, փաստերի խեղաթյուրման, լռության մատնելու միտումը ամբողջությամբ արտացոլվել է ժամանակի թուրքական գրականության մեջ: Կարելի է ասել, որ առանձին ու հպանցիկ անդրադարձներից բացի, թուրք գրականությունը մինչև վերջերս Հայոց ցեղասպանության խնդիրն հարկ եղած ուշադրությունը չէր դարձնում: Ավելին՝ հայկական թեմատիկան թուրք գրականության մեջ առավելապես «ներկայացված» էր բացասական հերոսների, դավաճանների, թշնամիների կերպարների միջոցով:

Վերջին տարիներին Թուրքիայում տեղի ունեցող մակերեսային փոփոխությունների համատեքստում որոշակի տեղաշարժ է նկատվում նաև Հայոց ցեղասպանության և ընդհանրապես հայկական թեմատիկայի հասարակական քննարկումների հարցում: Սկսված գործընթացը նորանոր փակ էջեր է բացում և տասնամյակներով գաղտնի պահված բազմաթիվ պատմություններ ու իրողություններ են ի հայտ գալիս: Այս հարցում իր որոշակի և որոշիչ դերն ունի նաև գրականությունը. այսօր Թուրքիայում հրատարակվում են ցեղաս-

պանության ականատես-վերապրողների գեղարվեստական գունավորում ստացած հուշեր, ցեղասպանությանը ուղղակի կամ անուղղակի վերաբերող պատմություններ, եղեռնից փրկվածների երրորդ, չորրորդ սերունդների հոգեվիճակը նկարագրող ստեղծագործություններ այդ թվում և՛ հետմոդեռնիստական: Տարբեր երկերում երկրորդական կամ հպանցիկ հերոսի դերում հանդես են հայեր, իսկ որոշներում նկատվում են «հայկական անդրադարձներ» կամ շրջապատող միջավայրի նախկին հայկական պատկանելության մասին հիշատակումներ և ակնարկներ: Այս ամենի հիման վրա ժամանակակից թուրքական գրականության մեջ կարելի է ասել, որ սկսել է դանդաղորեն ձևավորվել հայկական թեմատիկա, որն ունի մի շարք առանձնահատկություններ:

Սույն ուսումնասիրության մեջ փորձ ենք արել նախ ներկայացնել 20-րդ դարի թուրք գրականության հպանցիկ «անդրադարձները» Հայոց ցեղասպանության թեմային. այս նպատակով քննության առնված տասնյակ գրական ստեղծագործություններում կամ ոչ մի հիշատակում չի եղել ցեղասպանության խնդրին, կամ հանդիպել են առանձին տողեր, մտքեր, որոնք ուղղակիորեն և երբեմն անուղղակիորեն են վերաբերել թեմային: Շատ հաճախ 20-րդ դարի թուրքական առաջադեմ արձակի լավագույն ստեղծագործություններ համարվող սովորածավալ վեպերից մեջբերել ենք ընդամենը մեկ կամ երկու նախադասություն, որով և սահմանափակվում էր «անդրադարձը»: 21-րդ դարի սկզբից ավելի աճեց թուրք գրականության հետաքրքրությունը հայկական թեմատիկայի նկատմամբ և տպագրված գրքերի թիվը արագորեն գերազանցեց մի քանի տասնյակը: Այդ գործընթացը ներկայումս էլ շարունակվում է, սակայն պակաս ինտենսիվությամբ:

Ժամանակակից թուրքական գրականության մեջ հայկական թեմատիկան մեծապես ներկայացված է կրոնափոխության միջոցով կոտորածից փրկված հայերի հուշերի հիման վրա, ուստի այդ գրքե-

ըը առավելապէս ունեն փաստագեղարվեստական բնույթ, իսկ ժանրային առումով հուշագրություններ են: Նշենք նաև, որ այս աշխատանքում քննության ենթարկված գրքերը երբեմն խիստ պայմանական ենք համարում թուրքական գրականություն, որովհետև նրանց մի մասի փաստացի հեղինակները վերապրած հայերն են, որոնց պատմությունները ուղղակի գրի են առել և գեղարվեստական ձևակերպում են տվել թուրք գրողները: Բացի այդ, այս թեմայով գրված մի քանի գրքի հեղինակները ազգությամբ քուրդ են, ուստի աշխատանքում կիրառված «թուրքական գրականություն» տերմինը երբեմն ավելի ճիշտ կլինի ընկալել որպէս թուրքալեզու գրականություն: Ավելորդ չենք համարում նաև նկատել, որ սույն աշխատանքում ներկայացված ստեղծագործությունների մեծագույն մասը հայկական իրականությունում առաջին անգամ են ենթարկվել վերլուծության և դրվել գիտական շրջանառության մեջ:

Ռուբեն Մելքոնյան
բ.գ.թ., դոցենտ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ 20-ՐԴ ԴԱՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ.
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԻ ՈՒՐՎԱԳԻԾ**

1915 թվականին նախորդած տարիներին Օսմանյան կայսրությունում ծայր առած ազգայնամոլական հիստերիան իր արտահայտությունը գտավ նաև ժամանակի թուրքական գրականության մեջ: Պանթյուրքիստ գրողներն իրենց ստեղծագործություններում քարոզում էին ազգայնամոլական գաղափարախոսության տարբեր դրույթներ և էլ ավելի բորբոքում թուրքական հասարակության մեջ եղած այլամերժությունը: Գրականության մեջ թուրքականության գաղափարախոսության քարոզիչ գրողները՝ Ջիյա Գյոքալփը (1876-1924 թթ.), Մեհմեթ Էմինը (1869-1944 թթ.), Հալիդե Էդիփ Ադըվարը (1884-1964 թթ.), Աքա Գյունդյուզը (1886-1958 թթ.), Օսեր Սեյֆեդդինը (1884-1920 թթ.), Հայոց ցեղասպանությանը նախորդած և հաջորդած տարիներին իրենց ստեղծագործություններով ասելություն էին տարածում քրիստոնյա ազգերի հանդեպ և գրողական խոսքի ոգևորիչ ներագդեցությամբ խորացնում ծայրահեղ ազգայնամոլական տրամադրությունները: Այդ ժամանակաշրջանի որոշ թուրք գրողներ ոչ միայն խոսքով և գրչով, այլև գործով իրենց մասնակցությունը բերեցին Հայոց ցեղասպանությանը: Օրինակ՝ կին գրող Հալիդե Էդիփը ակտիվորեն ներգրավված է եղել Սիրիայում և Լիբանանում որբ հայ երեխաների բռնի իսլամացնելու գործին, ինչի համար էլ երիտթուրք պարագլուխ Ջեմալ փաշայի կողմից Ստամբուլից հրավիրվել էր Լիբանան: Երեխաներին թուրքացնելու համար պատասխանատու այս տիկինը հետագայում պատմել է, որ Ջեմալ փաշան հայ երեխաներին տեղավորում էր թուրքական որբանոցում, այնուհետև փոխում նրանց կրոնն ու անունները՝ տալով թուրքական և մուսուլմանա-

կան անձնանուններ¹: Հիշատակման արժանի է թուրք լրագրող և քաղաքական գործիչ Ֆալիհ Ռըֆքը Աթայի վկայած այն դրվագը, երբ վերջինս Սիրիա մեկնող գնացքում Հալիդե Էդիփին ծանոթացել է երիտթուրք ոճրագործներից Բեհաեդդին Շաքիրի հետ, ինչից հետո տիկինը հանդիմանել է Ռըֆքըին՝ ասելով. «Ինձ ստիպեցիր անգիտակցաբար սեղմել մի մարդասպանի ձեռք»²: Ընդհանրապես Հալիդե Էդիփի հրապարակախոսական հոդվածները, որոնք լույս էին տեսնում թուրքական մամուլում 1918 թվականին և դրանից հետո, աչքի էին ընկնում երիտթուրքերին ուղղված խիստ քննադատությամբ և հայերի կոտորածները կազմակերպելու մեղադրանքներով: Ավելին, ըստ թուրք հայտնի գրականագետ Մուրադ Բելգեի, Հալիդե Էդիփը դեռևս 1909 թ. մայիսի 18-ին Թանին թերթում հանդես է եկել Ադանայի կոտորածի քննադատությամբ³: Նկատենք նաև, որ 1918 թ. Հալիդե Էդիփի երիտթուրքերին քննադատող հոդվածները առիթ են դառնում, որպեսզի ժամանակի մեկ այլ հայտնի գրող Ահմեթ Չաշիմը, որն ազգությամբ արաբ էր, մամուլում հանդես գար Էդիփի քննադատությամբ առ այն, որ նա մտերիմ լինելով Ջեմալ փաշայի հետ՝ երբեք չի անդրադարձել այդ երիտթուրքի կողմից արաբների կոտորելու հանգամանքին⁴: Այնուահանդերձ, նկատենք, որ Հալիդե Էդիփի ստեղծագործությունների մեջ ակնհայտ են այլատյացության դրսևորումները, իսկ հրապարակախոսական մակերեսային անդրադարձներից և կասկածելի ու ոչ հավաստի հուշերից բացի՝ այս գրողն իր գրականության մեջ չի անդրադարձել Հայոց ցեղասպանության փաստին:

Հալիդե Էդիփի կերպարի ուսումնասիրությունը հատկապես Հայոց ցեղասպանության խնդրի համատեքստում ցույց է տալիս, որ

¹ Özdemir H., Cemal Paşa ve Ermeni Göçmenler: 4. Ordu'nun İnsani Yardımları, İstanbul, 2009, s.187, նույն տե՛ս նաև՝ Adıvar H., Mor Salkımlı Ev, İstanbul, 2008, s. 264.

² Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013, s. 67.

³ Նույն տեղում, էջ 66-67:

⁴ Նույն տեղում, էջ 65:

այն հակասական է և շատ հաճախ նրա տարբեր տարիների կարծիքներն ու պահվածքը հակադրվում են իրար: Չնայած որ վերջին շրջանում որոշ ուսումնասիրողներ փորձ են անում ներկայացնել, թե իբր Հալիդե Էդիփը Հայոց ցեղասպանության հարցում ունեցել է օբյեկտիվ և երիտթուրքերին քննադատող տեսակետ, սակայն հենց այդ նույն ուսումնասիրողներն իրենք բախվում են գրողի հակասականության հետ և ստիպված են ներկայացնել նրա կենսագրության և գործունեության նաև այդ իրարամերժ կողմերը: Նման վերջին ուսումնասիրություններից կարելի է առանձնացնել Հուլյա Ադաքի գիրքը: Ըստ հեղինակի, Հալիդե Էդիփը մինչև 1913 թ. մտերիմ և լավ հարաբերություններ է ունեցել երիտթուրքերի հետ և հատկապես բարձր գնահատել նրանց կողմից կանանց տրված իրավունքները, սակայն 1915-1916 թթ. եղել են իթթիհադականների հետ կապերը խզելու կարևոր շրջափուլ: Ադաքն անմիջապես ստիպված է նաև ներկայացնել, որ հենց 1916-1917 թվականներին է, որ Հալիդե Էդիփը երիտթուրք պարագլուխներից մեկի՝ Ջեմալ փաշայի հրավերով զբաղվել է Սիրիայում և Լիբանանում հայ որբ երեխաներին թուրքական որբանոցներում կրթելու, իսլամացնելու գործով, չնայած, որ իբրև թե նա դեմ է եղել հայերին իսլամացնելու քաղաքականությամբ⁵: Հուլյա Ադաքն իրավացիորեն հարց է բարձրացնում, թե ինչպես կարող էր Հալիդե Էդիփը մի կողմից քննադատել Թալեաթ փաշայի ցեղասպան քաղաքականությունը հայերի նկատմամբ, Բեհաեդդին Շաքիրին բացահայտ անվանել մարդասպան, իսկ մյուս կողմից համագործակցել նրանց հանցակից Ջեմալ փաշայի հետ⁶:

Սկստենք նաև, որ Հալիդե Էդիփի երիտթուրքերի նկատմամբ հստակ քննադատական մոտեցումների առաջին և մեզանում քիչ կամ գրեթե չարձարված քայլը եղել է դեռևս 1909 թ. Ադանայի կոտո-

⁵ Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, İstanbul, 2016, s. 5.

⁶ Նույն տեղում, էջ 33:

րաձից հետո, երբ գրողը հանդես է եկել «Ներողության նամակով»⁷, որտեղ կատարել է մի շարք կարևոր շեշտադրումներ, պահանջել մեղավորների հայտնաբերում և պատժում: Այսպես, 1909 թ. մայիսի 18-ին հայտնի «Թանին» թերթում նա հանդես է եկել հողվածով, որտեղ ներողություն է խնդրում հայերից նրանց դիմելով. «Իմ խեղճ հայ քաղաքացիներ» ձևակերպմամբ: Էդիփը ներողություն է խնդրում «Համիդյան մղձավանջի ամենաանպաշտպան գոհերից» իրականացված կոտորածի համար և անգամ նշում սպանվածների թիվը՝ 30 հազար⁸:

Արդեն Առաջին համաշխարհային պատերազմից հետո Հալիդե Էդիփն անդրադառնալով Հայոց ցեղասպանության խնդրին «Վաքիթ» թերթում գրել է. «...մեր վերջին հզորության օրերին իբրև թե թուրքական տարրին որպես ծառայություն քրիստոնյաներին և հատկապես հայերին կրկին «խառը» մեթոդով աքսորեցինք: Աշխատեցինք ոչնչացնել»: Այնուհետև նշում է, որ այդ մեթոդների և կոտորածների հետևանքով «բեռը և մեղքի խարանն ազգի անմեղ ճակատին և ուսերին է մնացել»⁹:

Սակայն 1919-ից հետո, երբ Էդիփը միանում է քեմալական ազգայնամուլական շարժմանը, նրա տեսակետները Հայոց ցեղասպանության և թուրքերի պատասխանատվության հարցում էականորեն փոխվում են¹⁰: Ավելին, հետագայում հրատարակած իր հուշերում Հալիդե Էդիփը լրջորեն սրբագրում է իր մտքերը և հրաժարվում նախկինում արած տարբեր հայտարարություններից: Մասնավորապես՝ նա արդեն կասկածանքով է վերաբերում այն հարցին, թե արդյոք հայերի կոտորածները կազմակերպել են երիտթուրքերը, ինչի մասին «նշում են հայկական և օտար աղբյուրները» մոռանալով,

⁷ Նամակի ամբողջական տեքստը տե՛ս Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, s. 36:

⁸ Նույն տեղում, էջ 36:

⁹ Նույն տեղում, էջ 47-48:

¹⁰ Նույն տեղում, էջ 37-38:

որ նշողներից էր նաև հենց ինքը: «Արդյոք հնարավոր է, որ երիտ-թուրքերը, որոնք գլուխները մտցնելու մի անցք էին փնտրում, նման կոտորած կազմակերպած լինեին»¹¹: Իսկ անդրադառնալով 1909 թ. Ադանայի կոտորածին՝ այն արդեն որակում է որպես «երկուստեք հարձակումներ» այսինքն՝ իր «Ներողության նամակին» ճիշտ հակառակ ձևակերպումներ է տալիս: Էդիփը մասնավորապես նշում է. «Ես այն ժամանակ Հայկական հարցն այլ կերպ էի դիտարկում, քան այսօր: Ես չգիտեի հայերի կողմից իրականացված կոտորածի մասին և չէի կարող ենթադրել, որ ուրիշները նման հանգամանքների պարագայում թուրքերից հարյուր անգամ ավելի վատ և դաժան կարող էին վարվել»¹²: Թալեաթի մասին ձևակերպումներում ևս նկատվում էին որոշակի սրբագրումներ. Հալիդե Էդիփը արդեն նրան որակում է որպես «իդեալիստ» և պատմում հայերի կոտորածների հետ կապված նրանց միջև տեղի ունեցած զրույցի մասին: «Հայերի տեղահանությունից հետո Թալեաթին հազվադեպ էի տեսնում: Շատ լավ հիշում եմ, որ մի օր այս թեմայի մասին խոսելիս իրեն գրեթե կորցրեց և շատ կոշտ ձևով հետևյալն ասաց. «Տեսեք տիկին Հալիդե, ես էլ ձեր չափ խիղճ ունեմ և մարդկանց կրած տառապանքների հետևանքով գիշերները չեմ կարողանում քնել: Սակայն դա իմ անձնական խնդիրն է և ես այս աշխարհ եմ եկել հոգալու ոչ թե իմ անձնականի, այլ իմ ժողովրդի մասին: Եթե մի մակեդոնացի կամ հայ դեկավարի ձեռքը նման հնարավորություն լիներ և եթե պատրվակն էլ գտնվեր, ապա երբեք առիթը չէր կորցնի: Բալկանյան պատերազմի ժամանակ նույնքան թուրք և մուսուլման կոտորվեց, սակայն աշխարհը հանցագործի նման բերանը չբացեց: Ես հավատացած եմ, որ եթե այս ժողովուրդը (թուրքերը Ռ. Մ., Ն. Պ.) իր շահերի համար անի անհրաժեշտ քայլը և եթե դրանում հաջողի, ապա աշխարհը դրան հավանություն կտա և բարոյական կհամարի: Ես պատրաստ եմ իմ

¹¹ Edip H., Mor Salkımlı Ev, İstanbul, 2013, s. 159-160.

¹² Նույն տեղում, էջ 387-388:

արարքների համար մեռնել և գիտեմ, որ այդ պատճառով էլ մեռնելու եմ»¹³:

Հալիդե Էդիփն իր հուշերում անդրադարձներ ունի նաև Կոմիտաս վարդապետին նշելով իրենց մտերմությունը և պնդելով, թե Փարիզ բուժվելու համար նրան ուղարկելու հարցում Թալեաթին միջնորդել է իր ամուսին Ադնանը¹⁴, չնայած որ կան այս պնդումը հերքող տեսակետներ ևս¹⁵: Տարօրինակ է, որ Հալիդե Էդիփը Կոմիտասի ծագման հարցում ևս դրսևորում է իրեն բնորոշ հակասականությունը. նախ նշում է, որ նա հայ հոգևորական և երաժիշտ է, ավելին՝ «հայ ազգայնական է», սակայն միևնույն ժամանակ անհետք կարծիք է հայտնում, թե իբր նրա ընտանիքն ունի թուրքական ծագում և հետո է քրիստոնեության ընդունել¹⁶:

Հետագայում և՛ գրքերում, և՛ հրապարակախոսական հոդվածներում ու ելույթներում Հալիդե Էդիփը լիովին հեռանում է օբյեկտիվության դիրքերից և արդեն բացահայտ կրկնում թուրքական պաշտոնական թեզի դրույթները երկուստեք զոհերի, երկու կողմերի կազմակերպած կոտորածների, «հայկական խռովությունների» մասին ու ըստ Հուլյա Ադաքի իրավացի գնահատականի. «հայերի կոտորածի թեմայում հասնում է ժխտողականության»¹⁷:

Ամփոփելով մեջբերենք Հալիդե Էդիփի մասին խորհրդային գրականագետ Լ. Ալկանայի դիպուկ գնահատականը, համաձայն որի «Հալիդե Էդիփը ապշեցուցիչ հեշտությամբ փոխել է իր համոզմունքներն ու հայացքները»¹⁸:

¹³ Adak H., նշված աշխ., էջ 59, նույնը տես նաև Edip H., Mor Salkımlı Ev, s. 387.

¹⁴ Edip H., Mor Salkımlı Ev, s. 374.

¹⁵ Adak H., նշված աշխ., էջ 63.

¹⁶ Edip H., նշված աշխ., էջ 372.

¹⁷ Adak H., նշված աշխ., էջ 74.

¹⁸ Алькоева Л., Очерки по истории турецкой литературы 1908-1939 гг., Москва, 1959, стр. 181.

Վերոհիշյալ Մուրադ Բելզեն փաստում է, որ օսմանյան գրականության վերջին շրջանի ավարտը և հանրապետական վաղ շրջանի գրականության ծնունդը տեղի էր ունենում հենց Հայկական հարցի շուրջ ընթացող զարգացումների ժամանակ, սակայն անգամ այդ պարագան չի ստիպել, որպեսզի ժամանակի գրականությունը դրական կամ գոնե չեզոք անդրադարձ կատարի թեմային¹⁹: Սակայն հակառակ տենդենցը, այսինքն՝ հակահայկական և ընդհանրապես ոչ թուրքերի նկատմամբ ազգայնամոլական, ռասիստական տրամադրություններ արտացոլող ստեղծագործություններ հանդիպում են այդ անցումային շրջանում ևս: Այդ ուղղվածության հիմնադիրներից կարելի է համարել Օմեր Սեյֆեդդինին, որի ստեղծագործություններում այլատյացությունը բավական ցայտուն է դրսևորված²⁰: Բելզեի ընդհանրացնող բնորոշումը 1910-20-ական թթ. թուրք գրականության մեջ ազգայնամոլության և ոչ թուրքերի նկատմամբ ատելության հետ կապված բավական դիպուկ և ուշագրավ է. «Ազգային գրականություն» անվանված այդ շրջանում շատ քիչ բացառություններով փոքրամասնությունների և օտարների նկատմամբ թշնամանքը հասել էր իր գագաթնակետին»²¹: Թուրք երեք հայտնի գրողների՝ Հալիդե Էդիփ Ադըվարի, Օմեր Սեյֆեդդինի, Յաքուբ Քադրի Քարասումանօղլուի վեպերում, ընդհանուր առմամբ, հանդիպում են 230 հույն հերոս, որոնցից 226-ը բացասական են:

Բացի վերոհիշյալ ազգայնամոլ գրողներից, այդ ժամանակաշրջանի այլ թուրք հեղինակներ մեծ մասամբ լռեցին և մեղսալի չեզոքություն պահեցին, ավելին՝ Հայոց ցեղասպանությունից որոշ ժամանակ անց թուրքական գրականության մեջ հայտնվեցին գրքեր, որտեղ գովերգվում էին ցեղասպանության մեղավորները, իսկ դեպքերը նկարագրվում էին թուրքական պաշտոնական թեզին համապա-

¹⁹ Նույն տեղում, էջ 37:

²⁰ Նույն տեղում, էջ 62:

²¹ Նույն տեղում:

տասխան: 20-րդ դարի արդեն երկրորդ կեսին մասնավորապես՝ 1960-ականների վերջին, թուրքական գրականության մեջ հաճախացան 1915-ի վերաբերյալ բացասական, հակահայկական անդրադարձները: Սա հնարավոր է պայմանավորել այդ տարիներին Հայոց ցեղասպանության խնդրի միջազգային ասպարեզում ավելի լայն քննարկումների հետ²² և դա Եղեռնի միջազգային ճանաչման համար սկսված գործընթացին թուրքական գրականության ազգայնական, իշխանամետ ճյուղի յուրահատուկ պատասխանն էր:

Թուրք գրականագետ Մուրադ Բելզեն ուշադրություն է դարձնում այն հանգամանքին, որ թուրքական գրականության մեջ ընդհանրապես բացասական հերոսի, ցածր, ոչ հարգի գործով զբաղվողի դերում առավել հաճախ հանդես են գալիս ոչ թուրքերը և մասնավորապես՝ քրիստոնյաները: Այդ բացասական կերպարների շարքում հատկապես աչքի է զարնում մարմնավաճառների կամ հասարակաց տների սեփականատերերի առատությունը: Օրինակ՝ իտալուհի մարմնավաճառ Մադամ Սավարոյի կերպարին ենք հանդիպում արձակագիր Հուսեյին Ռահմիի «Բյուրեղյա սիրտ» գրքում (1926 թ.)²³: Նույն հեղինակի մեկ այլ ստեղծագործության մեջ՝ «Կուկետների դպրոցը» (1928 թ.) կրկին խոսվում է Ֆրանսիայից եկած մարմնավաճառուհիների և նրանց բացաճ դպրոցի մասին, որտեղ ըստ հեղինակի, «պոռնկություն է դասավանդվում»²⁴: Մարմնավաճառների և հասարակաց տների սեփականատերերի մեջ հանդիպում են նաև հայ հերոսներ. ի դեպ, հասարակաց տան սեփականատեր հայուհու կերպարը էլ ավելի առարկայական, ռեալիստական ու համոզիչ է դառնում կապված Թուրքիայում նման հաստատությունների ցանցի հայտնի սեփականատեր Մաթիլդ Մանուկյանի անձի հետ: Թուրք գրող Էթեմ Իզզեթ Բենիջեի «Հինգ հիվանդ կա» (1931 թ.)

²² Çilingir O., Türk romanında 1915 ve örnek eserler (1), Agos, 04, 01, 2008.

²³ Belge M., նշված աշխ., էջ 26:

²⁴ Նույն տեղում:

գրքում Ստամբուլի Ֆերիքյոյ թաղամասում հասարակաց տուն աշխատացնողը կրկին հայուհի է «Մուրփիկ Դուդու անունով»²⁵: Ազգայնական հայացքներով հայտնի թուրք գրող Փեյամի Սաֆայի «Առանց արշալույս գիշերներ» գրքում (1935 թ.), որը ստորագրել է Սերվեր Բեդի կեղծանունով, կրկին հանդիպում ենք մի հայուհու՝ մահամ Ռոզայի կերպարի, որը Ստամբուլի «Բեյոլլուի ցեխոտ փողոցներից մեկում հակասանիտարական պայմաններում մի հասարակաց տուն էր աշխատեցնում»²⁶: Նմանատիպ հերոսուհիների ենք հանդիպում Ջեմալ Աթաչի «Մի աղջիկ այսպես կործանվեց» (1935 թ.), որտեղ և՛ հասարակաց տան տերը, և՛ մարմնավաճառներից մեկը հայուհի են, որին ի դեպ Մադամը վաճառում է մեկ այլ հայուհու հասարակաց տանը²⁷: Այստեղ հարկ է հաշվի առնել նաև այն, որ հիմնական ստեղծագործություններում դեպքերը տեղի էին ունենում 1920-1930-ականներին, երբ Հայոց ցեղասպանությունից հետո որոշակի թվով հայ կանայք դարձել էին ոչ միայն թուրքական հարեմների գոհ, այլև վաճառվելով ստրկավաճառական շուկաներում՝ ակամայից համալրել էին մարմնավաճառության մեծ շուկայի գոհերի շարքերը: Այսինքն՝ բացասական գույներով պատկերված այդ հերոսուհիների մեջ, անպայմանորեն, գերիշխելու էին Հայոց ցեղասպանության տարիներին առևանգված կամ վաճառված հայ կանայք և աղջիկները: Ուշադրության է արժանի և բավական խոսուն Մուրադ Բելզեի այն դիտարկումը, թե այդ տարիներին թուրք և մուսուլման մարմնավաճառներ, բնականաբար, նույնպես եղել են, սակայն թուրք գրականության մեջ նման կերպարներ բացարձակ չեն հանդիպում²⁸:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 27:

²⁷ Նույն տեղում, էջ 29:

²⁸ Նույն տեղում, էջ 33:

Եթե պահպանողական կամ ազգայնամոլական թուրք գրողների թշնամական վերաբերմունքն առհասարակ փոքրամասնությունների և մասնավորապես՝ հայերի հանդեպ կարելի է բացատրել նրանց որդեգրած գաղափարախոսություններով, ապա առաջադեմ և սոցիալիստ համարվող թուրք գրողների լռությունը Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ առնվազն տարօրինակ է: Փաստենք, որ անցյալ դարի 30-ական թվականներից թուրք գրականության մեջ ձևավորվող ձախ, սոցիալիստական ուղղվածությունը հատկապես բուռն ծաղկում սկսեց ապրել 1940-ական թվականներին: Քննադատական և սոցիալական ռեալիզմի ուղղության շրջանակներում ստեղծագործող, մարդկանց տարատեսակ իրավունքների պաշտպանության դիրքերից հանդես եկող, սոցիալական, սեռային անհավասարությունը քննադատող մի շարք ստեղծագործություններում անգամ հայկական խնդիրների վերաբերյալ անդրադարձներ հանդիպում են հազվադեպ, այն էլ հպանցիկ ու հաճախ անուղղակի: Թուրքական ընդդիմադիր գրողների այդ լռությունը թուրք հայտնի ձախակողմյան արձակագիր Վեդաթ Թուրքալին (ծնվ. 1919 թ.) փորձում է բացատրել կամ հիմնավորել վերջիններիս անտեղյակությամբ: Մասնավորապես՝ Հրանտ Դինքի հետ զրույցում՝ պատասխանելով վերջինիս հարցին, թե ինչու թուրքական ձախակողմյա շարժումը որևէ կերպ չի արձագանքել Հայկական հարցին, Թուրքալին ասել է. «Մեր սերունդը չգիտեր, թե ինչեր են եղել»²⁹, ապա հավելել. «Ես անձամբ Հայկական դեպքի մասին մի շարք մանրամասներ ավելի ուշ եմ իմացել»³⁰: Ուշագրավ է նաև, որ այդ հարցազրույցում Վեդաթ Թուրքալին խոստանում է իր նոր գրքում անդրադառնալ հայկական խնդրին և, իրոք, կարճ ժամանակ անց տպագրված նրա «Կորուսյալ վեպեր» գրքում հանդիպում ենք որոշ անդրադարձ-

²⁹ Türkali V., “Bizim kuşağımız neler oldugunu bilmiyordu”, Agos, 28, 05, 2004, (Հրանտ Դինքի հարցազրույցը թուրք գրող Վեդաթ Թուրքալիի հետ):

³⁰ Նույն տեղում:

ների Հայոց ցեղասպանության և ընդհանրապես Հայկական խնդրին, որի մասին ավելի մանրամասն կխոսենք ներքևում: Այդ նույն համատեքստում նկատենք, որ թուրք պատմաբան Հալիլ Բերքթայն անդրադառնալով թուրքական հասարակության անտեղյակության խնդրին՝ նշում է, որ, անկախ պետական պաշտոնական դիրքորոշումից, հասարակ ժողովրդի հիշողության մեջ պահպանված են 1915-ի մասին հուշերը: Հայերի ցեղասպանությանը մասնակցած կամ դրան քաջատեղյակ շատ թուրքերի և քրդերի մոտ այդ հիշողությունները ոչ միշտ են բացասական, այլ երբեմն «հերոսական են» և ոգևորիչ: Բերքթայն ասում է, որ ներկայումս էլ Թուրքիայի տարբեր վայրերում կարելի է հանդիպել տների, որտեղ կան պատերից կախված թերեր, որոնց մասին ասում են, թե վրայի արյունը հայկական արյուն է, ընդ որում՝ ոմանք սրանով հպարտանում են, ոմանք՝ ամաչում³¹: Այս թեմայով հավելենք նաև թուրք հետազոտող Լեյլա Նեյզիի տեսակետը, համաձայն որի հայկական հիշողությունները Թուրքիայում «բաց գաղտնիք են»³²:

Վեղաթ Թուրքալիի հետ վերոհիշյալ հարցազրույցում Հրանտ Դինքը մի քննադատական հարց-եզրահանգում էլ է անում կապված թուրք հայտնի կոմունիստ բանաստեղծ Նազըմ Հիքմեթի հետ, ով երկար տարիներ որպես վտարանդի ապրել է Մոսկվայում: Ըստ Դինքի, չնայած այն հանգամանքին, որ Նազըմ Հիքմեթը Թուրքիայի ձախակողմյան շարժման մեջ ունեցել է հայազգի ընկերներ, ավելին՝ Մոսկվայում ապրելու ժամանակ ընկերություն է արել Խորհրդային Հայաստանից մի քանի հայ բանաստեղծների հետ, սակայն միևնույն է Հայոց ցեղասպանության թեմային գրեթե չի անդրադարձել³³: Ավելի ուշ անդրադառնալով թուրք մտավորականների և ընդհանրապես

³¹ Berktaş H., Nâzım, Ermeni kıyımı, bir kolej hikâyesi, Taraf, 12, 01, 2008.

³² Խառատյան Հ., Նեյզի Լ., Խոսելով միմյանց հետ՝ Անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում, Մտամբուլ, 2010, էջ 106:

³³ Նույն տեղում:

հասարակության անտեղյակության մասին առաջ քաշված թեզին՝ Հրանտ Դինքը ամբողջացրել և մանրամասնել է իր մտքերը. «1915-ից հետո, իրականում, Թուրքիայի հասարակությունն իր գյուղացիներով, քաղաքացիներով շատ լավ գիտեր, թե այդ ժամանակաշրջանում ինչեր են տեղի ունեցել: Շատերը վկան են եղել տեղի ունեցածներին, որոնք վատ և ցավալի էին ու դրա համար պետք էր լռել: Այս հարցում պետական դիրքորոշումն էլ լռությունը պաշտոնականացրեց: Այս թեման դարձավ տաբու: Ոչ միայն պահպանողականները, այլև իրենց հեղափոխական համարողներն էլ այս թեմայով երկու խոսք չկարողացան ասել: Նազրմ Հիքմետի բանաստեղծություններում Հայկական հարցի վերաբերյալ լուրջ մեկ տող է տեղ գտել, այդքանը միայն»³⁴:

Մեր կարծիքով թուրք գրողներն առաջ են քաշել անտեղյակության մասին թեզը նպատակ ունենալով թաքցնել իրենց կողմից հայկական թեմատիկային չանդրադառնալու հիմնական դրդապատճառները, որոնք կամ քողարկված ազգայնամոլական էին, կամ էլ՝ խուսափողական: Գրողի և համարձակության մասին շատ դիպուկ է նկատել Բերտոլդ Բրեխտը համաձայն որի. «Գրողը պետք է ունենա ճշմարտությունը ասելու համարձակություն»³⁵:

Այդ համատեքստում կարևոր է անդրադառնալ թուրք գրականության և ընդհանրապես Թուրքիայի ու դրա սահմաններից դուրս հասարակական-քաղաքական ասպարեզներում ընդդիմադիր սոցիալիստի, կոմունիստի համարում ունեցող հայտնի պոետի՝ Նազրմ Հիքմետի (1902-1963 թթ.) որոշ ստեղծագործություններին: Ինչպես վերը նշվեց, Նազրմ Հիքմետը ևս հայկական խնդրին հպանցիկ է անդրադարձել՝ մեկ-երկու տողով: Նրա «Կոնաստ Իսմայիլը» բանաստեղծությունում հանդիպում ենք հետևյալ տողերին.

³⁴ Kaplan S., 1915-te ne oldu?, İstanbul, 2005, 2-inci baskı, s. 77-78.

³⁵ Can H., İttihatçı-Kemalist İdeolojiden Kurtulamamış Sosyal Şoven TKP'nin Üyesi Bir Şair: Nazım Hikmet ve Kürtler, İstanbul, 2-inci Baskı, 2010, s. 9.

Իսմայիլին զորահավաքի ժամանակ,
Չնայած 16 տարեկան էր,
Բռնեցին բանակ ուղարկեցին,
Յոզղաթի կողմերը ոստիկան գնաց,
Եվ հայերին կոտորելիս
Մինչև պորտը արյան մեջ թաղվեց³⁶:

Նազրմ Հիքմեթի մեկ այլ՝ «Երեկոյան զբոսանք» բանաստեղծության մեջ խոսելով հայազգի նպարավաճառ Կարապետի մասին՝ բանաստեղծը նշում է.

Նպարավաճառ Կարապետի լույսերը վառվեցին,
Չներեց այս հայ քաղաքացին
Քրդական լեռներում հոր մորթվելը,
Մակայն սիրում է քեզ,
Քանի որ դու էլ չներեցիր
Այս սև բիծը
Թուրք ժողովրդի ճակատին քսողներին³⁷:

Այս բանաստեղծությունները հատկապես վերջին շրջանում շատ են մեջբերվում և դրանով փորձ է արվում ներկայացնել և համոզիչ դարձնել թուրք գրողի «ճշմարտության մարտիկի» կերպարը, սակայն միևնույն ժամանակ միտումնավոր անտեսվում են նույն Նազրմ Հիքմեթի այլ ստեղծագործություններում տեղ գտած անթաքույց արհամարհանքը, խտրական, անգամ՝ թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Փաստենք նաև, որ ինչպես շատ այլ գրողների, այնպես էլ Նազրմ Հիքմեթի մոտ հայ կերպարները գերազանցապես հանդես են գալիս որպես բացասական հերոսներ: Այս-

³⁶ Bertay H., նշված հոդ.:

³⁷ Նույն տեղում:

պես, Նազրմ Հիքմեթի «Իմ երկրից մարդկային տեսարաններ» պոեմում խոսելով Բուրսա քաղաքի բաղնիքների մասին նշում է, որ այնտեղ է տարել մի հայ աղջկա և հավելում. «Խորամանկ է հայ ժողվուրդը, ոչ թե մեր թուրքերի նման»: Պոեմի այդ հատվածն ավարտվում է նրանով, որ հայ աղջիկը չնայած իր հետ ունեցել է սեռական հարաբերություն, սակայն հետո ամուսնացել է քանի որ «օժիտը տեղը տեղին է, իսկ դա էլ հայտնի գյավուրական սովորույթ է»³⁸: Չնայած որ Նազրմ Հիքմեթը հռչակել է, թե դեմ է ազգային, ռասայական ձևակերպումներին և ընկալումներին, սակայն իր տարբեր ստեղծագործություններում, հողվածներում, նամակներում կան հստակ և բացահայտ ազգայնամուլական շեշտադրումներ, որոնք նաև հակասում են պատմական իրողություններին: Այսպես, 1944 թ. իր որդուն գրած նամակում նշում է. «Մեր երկրի սահմաններում ապրում են նաև հայեր, հույներ և քրդեր»³⁹: Այստեղ «այլախոհ» գրողը մոռանում է, որ այդ սահմանների առնվազն մի մասը հայկական և հունական տարածքներ են և այդ ժողովուրդները այնտեղ ապրում էին որպես իրենց նախահայրենիք, իսկ թուրքերը եկվոր են:

Սակայն կարևոր է հատուկ շեշտել, որ Նազրմ Հիքմեթը ընդհանրապես խտրական վերաբերմունք է դրսևորել Թուրքիայում բնակվող այլ ժողովուրդների հանդեպ ևս և չի անդրադարձել նրանց խնդիրներին: Մասնավորապես՝ Հիքմեթի ստեղծագործություններում չենք հանդիպում Թուրքիայում քրդական հուզումների, ապրստամբությունների վերաբերյալ անդրադարձների, չնայած, որ պոետը բավական լավ տեղյակ է եղել այդ մասին: Նազրմ Հիքմեթը չի անդրադարձել նաև Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հանդեպ պարբերաբար տեղի ունեցող հալածանքներին, ջարդարարություններին և այլն: Սակայն դրա փոխարեն բավական խորքային նկարագրել է Բուլղարիայում բնակվող թուրք փոքրամասնության

³⁸ Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013, s. 72.

³⁹ Can H., նշված աշխ., էջ 169.

անհամեմատ ավելի մեղմ խնդիրները, լուծումներ առաջարկել և բարձրաձայնել այդ մասին⁴⁰: Սա նույնպես Նազրմի կողմնապահության ավելին՝ ազգայնամոլական հայացքների հստակ դրսևորումներից է: Բավական ուշագրավ է, որ Նազրմն իր հայացքը նետել է նաև դեպի արևելք և անդրադարձել Իրանում բնակվող «ազերի թուրք եղբայրներին» և իր մտահոգությունը հայտնել. «Իրանում չորս միլիոն ազերի թուրք է ապրում, սակայն որպես ազգ նրանց ոչ մի իրավունք ճանաչված չի: Իրենց մայրենի լեզվով դպրոց անգամ չունեն»⁴¹: Այստեղ արդեն բացահայտվում են Նազրմ Հիքմեթի պանթյուրքիստական հայացքները, որոնք խորքային ու շարունակական են եղել և դրսևորվել են հետագայում ևս: Այսպես, ապրելով ԽՍՀՄ-ում 1957 թ. Նազրմ Հիքմեթը այցելել է Ադրբեջան, հանդիպել տեղի գրողների հետ և հետագայում Ադրբեջանի գրողների միության նախագահ Անար Ռեզայեր այդ հանդիպման մասին պատմել է. «Թուրքիայի համար Նազրմ Հիքմեթը միզուցե կոմունիզմի, սոցիալիզմի խորհրդանիշն էր, սակայն Ադրբեջանի համար Նազրմ Հիքմեթը թյուրքականության խորհրդանիշն էր: Դա պայմանավորված էր նաև նրանով, որ երբ նա եկավ այստեղ «թուրք» բառի կիրառումը արգելված էր, իսկ նա հայտարարում էր. «Ես թուրք եմ, դուք էլ եք թուրք, մեր լեզուն նույնն է, մենք եղբայր ենք, նույն ազգն ենք»: Այն ժամանակ Ադրբեջանում ոչ ոք չէր կարող համարձակվել նման խոսքեր ասել, սակայն Նազրմն ասում էր և քանի որ կոմունիստ էր դա նրան ներում էին»⁴²: Փաստորեն ժողովուրդների բարեկամության «անխոնջ մարտիկի» վերոնշյալ խոսքերը հետագայում դառնալու էին Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի կողմից հրապարակ նետված պանթյուրքիստական կարգախոսի հիմքը. «Մեկ ազգ երկու պետություն»:

⁴⁰ Նույն տեղում, էջ 178-180:

⁴¹ Նույն տեղում, էջ 181:

⁴² Նույն տեղում, էջ 55-56:

Այս և այլ փաստեր հիմք են սովել, որպեսզի ներկայումս որոշ ուսումնասիրողներ անդրադառնան և հետազոտեն Նազրմ Հիքմեթի ոչ այնքան «կոմունիստական» նկարագրի տարբեր շերտերը և դրանց արտացոլումը նրա ստեղծագործություններում: Նկատենք նաև, որ այս տիպի հետազոտությունները ըստ էության ժխտում են խորհրդային գրականագիտության տասնամյակներով ստեղծած Հիքմեթի ազգերի եղբայրության ջատագովի կերպարը, ինչին նվիրված կան բազմաթիվ գրքեր ու հոդվածներ, որոնք գերհագեցած են թուրք պոետին ուղղված գովեստի ու հիացմունքի խոսքերով: Նազրմ Հիքմեթի իրական կերպարը բացահայտող ուսումնասիրություններից է ազգությամբ քուրդ Հուսեյին Ջանի գիրքը, որում հեղինակը բազմաթիվ փաստերի, պոետի ստեղծագործությունների ներկայացման և վերլուծության հիման վրա ի ցույց է դնում, որ «կոմունիստ Նազրմ» անունը ստացած բանաստեղծ և քաղաքական գործիչը իրականում չի համապատասխանում այդ բնութագրմանը⁴³: Հուսեյին Ջանը իրավացիորեն նշում է, որ Թուրքիայում գրեթե բոլոր շերտերի վրա տարածված պանթուրքիզմի կամ ազգայնամոլության ազդեցությունը, որքան էլ որ զարմանալի է, տարածված է եղել նաև ձախակողմյան շրջանակների այդ թվում՝ և Թուրքիայի կոմունիստական կուսակցության ու նրա անդամների վրա⁴⁴: Նույն հեղինակը կարծում է, որ Նազրմ Հիքմեթի մոտ ազգայնամոլական հայացքների ձևավորման մեջ մեծ տեղ ունի նաև նրա ընտանիքը. այդ առումով հատկանշական է պոետի մոր պապի՝ ազգությամբ լեհ Կոնստանտին Բորժենսկու կերպարը: Նա 18-րդ դարի կեսերին տեղափոխվել է Օսմանյան կայսրություն, փոխել անունը և ազգայնամոլական շրջանակներում մինչ օրս էլ հայտնի է որպես. «Թուրքիայի պատմության մեջ առաջին մեծ պանթուրքիստներից մեկը»⁴⁵:

⁴³ Նույն տեղում, էջ 13:

⁴⁴ Նույն տեղում, էջ 29:

⁴⁵ Նույն տեղում, էջ 32:

Կարևոր ենք համարում նշել, որ Նազըմ Հիքմեթի վառ արտահայտված ազգայնամոլական անգամ՝ ռասիստական բնույթի հայացքները տեղ են գտել դեռևս նրա վաղ շրջանի բանաստեղծություններում, որոնք խորհրդային ուղղորդված գրականագիտության մեջ ակնհայտ միտումով և դիտավորությամբ անտեսվել են: Հիքմեթի վաղ շրջանի՝ 1919-1920 թթ. բանաստեղծություններից մեկում, որը վերնագրված է «Իմ ռասային», կարդում ենք.

Է՛յ իմ ռասա, դու մի ժամանակ
Դողացնում էիր Եվրոպան
Նվաճում էիր Ստամբուլը...
Մի ժամանակ Եվրոպան
Խեղդվում էիր տգիտության մեջ
Կրկին դու ո՛վ իմ ռասա
Որ հմուտ էիր գիտության մեջ
Իշխում էիր իմաստուններիին
Ինչո՞ւ այսօր Եվրոպան
Քեզ մարտահրավեր նետի
Ինչո՞ւ այսօր
Այդ տգիտության օրրանը
Քեզ գիտություն սովորեցնի⁴⁶:

Եվ այնուամենայնիվ, 20-րդ դարի որոշ թուրք գրողների՝ հիմնականում ձախ կողմնորոշման, ստեղծագործություններում, տողերի արանքում երբեմն հանդիպում են մտքեր, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանությանը և օբյեկտիվ են, սակայն հաճախ մակերեսային են ու գերիշխում են խնդրի մասին ակնարկները: Հարկ է նշել, որ 1923 թ. հիմնադրված Թուրքիայի Հանրապետությունում առաջ է եկել հողի խնդիր, ավելի կոնկրետ՝ լքված հայկական գույքի և հողե-

⁴⁶ Hikmet N., İlk Şiirler, İstanbul, 2000, s. 14.

րի խնդիրը, որը շատ հաճախ վերածվել է վեճի դրանց տիրացած մուսուլմանների միջև: Հողի մասնատման և բաժանման հարցին անդրադարձած թուրք գրողներից մի քանիսը երբեմն տողատակում խոսում են հայկական լքյալ գույքի, այդպիսով նաև Հայոց ցեղասպանության մասին:

Թուրք հայտնի գրող Քեմալ Թահիրը (1910-1973 թթ.) առաջիններից է, ով անդրադարձել է Հայոց ցեղասպանության խնդրին և «Գերված քաղաքը» եռագրության 1956 թ. հրատարակված առաջին հատորում՝ «Գերված քաղաքի մարդիկ» խոսելով Գալուստ Գյուլբենկյանի և նրան վաճառվող հողի մասին՝ Թահիրը թերևս առաջին անգամ թուրք գրականության մեջ կիրառում է «հայկական կոտորած» եզրույթը. «Գյուլբենկյան ազգանունով մեր մի քաղաքացու ես ծախելու հողը, ավելի ճիշտ կլինի ասել «մեր նախկին քաղաքացուն»: Մեր հայ քաղաքացիներից մեկն է այս Գյուլբենկյանը: Ձեր հողը մի հային վաճառելով պատերազմի ժամանակ իրագործված **հայկական կոտորածի** (ընդգծումը մերն է Ռ. Մ., Ն. Պ.) մեղքից էլ մաքրված կլինեք»⁴⁷: Քեմալ Թահիրի 1969 թ. տպագրված «Գայլային օրենք» գրքում ևս հանդիպում ենք հետաքրքիր տողերի. «Աբդուլ Համիդի ժամանակ հայկական կոտորածներում մեր հանցակիցները ռուսական ցարն ու անգլիական կառավարությունն էին: Հայկական կոտորածի գլխավոր մեղավորն էլ գերմանացիներն են»⁴⁸: Թահիրը իր ստեղծագործություններում անդրադառնում է նաև հայկական գույքի թալանին և նկարագրելով իր հերոսներից մեկին նա նշում է. «Ահա հենց այդ պահին հայկական ջարդը Հաջը Մուսթաֆային օգնության հասավ: Ոստիկանական տեղամասի կողքին գտնվող գյավուր Մկրտիչին պատկանող քարե խանութի դուռը հանգիստ բացեց՝ ասես վարձակալել էր և տեղավորվեց ներսում: Ամեն զիշեր փակոցափեղկերը փակելուց հետո, ճրագի լույսի տակ բոլոր կողմերը քանդում էր: Ի

⁴⁷ Tahir K., Esir şehrin insanları, İstanbul, 2007, 7-inci baskı, s.54.

⁴⁸ Tahir K., Kurt Kanunu, İstanbul, 2005, s. 226.

վերջո ոսկով լի երկու նավթի տարա գտավ»⁴⁹: Քեմալ Թահիրի 1970 թ. հրատարակված «Խոշոր գույքը» գրքում ևս հայկական կոտորածների փաստի ընդունման մասին ակնարկ կա. «Հայկական կոտորածի մասին հարցրեց: Է՛հ, եղել է մի բան: Եթե չլիներ՝ լավ կլիներ, բայց դե եղել է»⁵⁰:

Այստեղ հարկ ենք համարում հպանցիկ հիշատակել բավական հետաքրքիր և ինքնատիպ հեղինակներից մեկին՝ Սայիդ Ֆայիքին (1906-1954 թթ.), ով թուրքական մոդեռնիստական արձակի՝ «ճգնաժամի գրականության» հիմնադիրներից է և առավելապես անդրադառնում է սոցիալ-հոգեբանական խնդիրներին: Ուշագրավ է, որ Սայիդ Ֆայիքը բավական լավ և ակտիվ շփումներ է ունեցել Ստամբուլում բնակվող ազգային փոքրամասնությունների այդ թվում և հայերի հետ: Ինչպես նշում է Ս. Բելգեն նա իր միայնությունը կիսում էր Ստամբուլի ոչ մուսուլման փոքրամասնությունների հետ, սիրում էր նրանց, սակայն իր ստեղծագործություններում ի ցույց չէր դնում, որ տեղյակ է նրանց պատմությանը⁵¹: Բայց, այնուամենայնիվ, Սայիդ Ֆայիքի որոշ ստեղծագործություններում հանդիպում են հայ կերպարներ և ընդ որում դրական կամ չեզոք հերոսի դերում. օրինակ՝ նրա գրչին է պատկանում «Հայ ձկնորսը և կաղ ճայր» պատմվածքը, որտեղ գլխավոր հերոսը հայն է:

20-րդ դարի ամենահայտնի և տաղանդավոր արձակագիրներից Օրհան Քեմալի (1914-1970 թթ.) ևս որոշակի անդրադարձներ ունի ինչպես Թուրքիայում բնակվող ոչ թուրք փոքրամասնություններին ընդհանրապես, այնպես էլ հայերին ու հատկապես Հայոց ցեղասպանության թեմային: Խորհրդային գրականագետ Ռ. Ֆիշը նկատել է, որ Օրհան Քեմալը իր ստեղծագործություններում երբեմն տեղ է տալիս նաև ոչ թուրք հերոսների՝ հույների, գնչուների, և հաճախ՝

⁴⁹ Tahir K., Damağası, İstanbul, 2007, 2-inci baskı, s.37-38.

⁵⁰ Tahir K., Büyük Mal, İstanbul, 1970, s.161.

⁵¹ Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, İletişim Yayınları, 2013, s. 151-152.

դրական երանգներով: Այդ հանգամանքը Ֆիշը համարում է որոշակի խիզախության դրսևորում, քանի որ ոչ թուրքերի և հատկապես քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ ատելությունը և թշնամանքը խոր տեղ ունեն թուրքական հասարակության հոգեբանության մեջ⁵²: Օրհան Քեմալը նաև այն սակավաթիվ գրողներից է, որի ստեղծագործություններում տեղ գտած «հայկական անդրադարձներից» պարզ է դառնում, որ հեղինակը բավական լավ պատկերացում է ունեցել և առիթի դեպքում չի խուսափել արտահայտվել Հայոց ցեղասպանության և հայերի լքյալ գույքի մասին: Գրողի՝ հայկական խնդիրների իմացությունը, մեր կարծիքով, մի քանի աղբյուր կարող է ունենալ. առաջին՝ նա ծնվել և մեծացել է Ադանայում, ու շատ հնարավոր է՝ հենց այդտեղ է լսել ցեղասպանության մասին պատմություններ և անգամ անձամբ ականատես եղել այդ շրջանի հայերի գույքի թալանին: Բացի այդ, Օրհան Քեմալն իր ընտանիքի հետ մի քանի տարի անցկացրել է Սիրիայում և Լիբանանում, որտեղ հանդիպել է հայերի⁵³, անպայմանորեն լսել և տեսել է նրանց կրած զրկանքները: Նրա իմացությունն հայերի մասին կարող է ավելի խորացած լինել նաև 1944-ին, երբ ընտանիքի հետ տեղափոխվել է Մալաթիա՝ աշխատանք գտնելու հույսով: Այս դրվագը կարևորում ենք հատկապես այն համատեքստում, որ միգրացիոն հենց այդ ժամանակ է ավելի մոտիկից ծանոթացել հայկական և նախկին հայաբնակ նահանգներում առկա լքյալ գույքի խնդրին:

Օրհան Քեմալի մի քանի ստեղծագործություններում հայ կերպարներ երբեմն հանդիպում են կամ երկրորդական հերոսների, կամ էլ էպիզոդիկ դերերում: Օրինակ՝ «Ընկած կինը» պատմվածքում հերոսուհին դրական երանգներով է հիշում մի հայուհու, ով իրեն՝ անտուն մարմնավաճառին, ապաստան է տվել իր տան նկուղում:

⁵² Фиш Р., Писатели Турции: книги и судьбы, стр. 188-189.

⁵³ Masdar F., Türk Sinemasında Orhan Kemal Uyarlamaları, (Doktora Tezi), Van, 2011, s. 70.

Մարմնավաճառն էլ նրա հանդեպ է դրական տրամադրված, և խոսելով ինքնասպան լինելու մասին՝ նա ասում է, որ դրանով միգուցե հոգս պատճառի հայուհուն, ինչը չի ուզում⁵⁴: Հայի էպիգոդիկ պատկերման մի օրինակի ենք հանդիպում «Ամանոթյա արկած» պատմվածքում, որտեղ գործող անձինք, պատմելով իրենց ցոփ ու շվայտ կյանքը, ինքնագովեստով են խոսում այն մասին, թե ինչպես են բռնաբարել մի հայ աղջկա⁵⁵:

Սակայն հատկապես Հայոց ցեղասպանության և դրա հետևանքների մասին ուղղակի և անուղղակի անդրադարձների հանդիպում ենք Օրհան Բեմալի «Արյունոտ հողեր» վեպում: Չենք կարող պնդել, որ այս վեպը հեղինակի հաջողված գործերից է, քանի որ առկա են սյուժետային գծի անհստակություն, ավելորդ ձգձգվածություն, ուռճացում, թույլ են նաև գործողությունների զարգացման, ընթացքի, կուլմինացիայի պատկերումները: Ընդհանրապես, Օրհան Բեմալի այն գործերը, որոնք նվիրված են հողագործների, գործարանների բանվորների և նմանատիպ թեմաների, բավական թույլ են և լի ավելորդ ճիգերով: Սակայն այս վեպի արժեքը մեզ համար այլ հարթությունում է, և կարևորվում է այն, որ առաջին անգամ հրատարակվելով 1963 թ.՝ գիրքը պարունակում է բավական ուշագրավ անդրադարձներ Հայոց ցեղասպանության, հայկական լքյալ գույքի վերաբերյալ: Արդեն գրքի առաջին էջերից մեկում հանդիպում ենք հետևյալ ձևակերպմանը. «Հայերի խանութների դազգահները, որոնք դատարկվել էին աքսորից հետո»⁵⁶: Այնուհետև, նկարագրելով գրքի հերոսներից մեկին՝ մեծահարուստ Նեդիմ աղային, գրողը նշում է, որ նա կուսակցության (նկատի ունի այդ ժամանակ իշխող Հանրապետական ժողովրդական կուսակցությունը) ղեկավարների օգնությամբ շատ էժան գնով ձեռք է բերել մի մեծ գործարան, որն ընդ-

⁵⁴ Кемаль О., Мстительная волшебница, Москва, 1967, стр. 97.

⁵⁵ Kemal O., Ekmek Kavgası, İstanbul, 2013, s. 67.

⁵⁶ Kemal O., Kanlı Topraklar, İstanbul, 2012 (10. Basım), s. 10.

գրկված է եղել «լքյալ գույքերի» ցանկում կամ, իրենց ձևակերպմամբ՝ «գույք, որոնց տերերն անհայտ են»: Ավելի մանրամասնելով միտքը՝ Օրհան Բեմալը նկարագրում է հետևյալ գրույցը, որտեղ այդ գործարանատիրոջը հանդիմանում է մեկն այն մարդկանցից, որի օգնությամբ վերջինս ձեռք է բերել գույքը. «Ինչքան շուտ մոռացար այն օրերը, երբ մի տրեխով եկել էիր Չուքուրովա (Կիլիկիա - Ռ. Մ., Ն. Պ.) և տարիներով գորգ էիր կրում: Այս գործարանը հա՛յրդ էր կառուցել: **Հայկական գույք էր** (ընդգծումը մերն է - Ռ. Մ., Ն. Պ.): Մեր կուսակցության շնորհիվ ձեռք բերեցիր»⁵⁷:

Գրքում կա նաև անդրադարձ մինչև Առաջին համաշխարհային պատերազմն Օսմանյան կայսրությունում ոչ մուսուլմանների՝ հայերի, հույների տնտեսական ներկայության վերաբերյալ⁵⁸, սակայն կոպիտ ձևակերպմամբ. «Առևտուրն անհավատների ձեռքին էր»⁵⁹: Հետաքրքիր են նաև գրողի շատ հակիրճ անդրադարձներն արտրված և կոտորված հայերի ու հույների գույքի թալանի վերաբերյալ. «Ազատագրական պայքարից հետո (նկատի ունի 1919-22 թթ. քեմալական ազգայնամուլական շարժումը - Ռ. Մ., Ն. Պ.), Տեր իմ Աստված, ժողովուրդն այնպես հարձակվեց հայերից, հույներից մնացած ունեցվածքների վրա: Էլ մի ասա»⁶⁰. Կամ մեկ այլ օրինակ. «Հայերի տեղահանության ժամանակ տիրացել է կտորի խանութին: Դրա համար երևի թե մարդ է սպանել իր նմանների հետ միացած»⁶¹: «Այս ծանր ընկույզի փայտից և փորագրված հաստ ոտքերով սեղանն էլ հայերից մնացած ապրանքներից էր, որոնք հանդիպում էին տեղացիներից շատերի տներում»⁶²:

⁵⁷ Նույն տեղում, էջ 16:

⁵⁸ Նույն տեղում, էջ 92, 311:

⁵⁹ Նույն տեղում, էջ 92:

⁶⁰ Նույն տեղում, էջ 93:

⁶¹ Նույն տեղում, էջ 97:

⁶² Նույն տեղում, էջ 278:

«Արյունոտ հողեր» վեպում հանդիպում ենք նաև Կիլիկիայի տարբեր քաղաքներում մինչև ցեղասպանությունը հայերի ներկայության նկարագրությունների⁶³: Ընդհանրապես, վեպում երբեմն-երբեմն հպանցիկ նշվում է հայերի գույքի, օրինակ՝ նախկին հայկական տների, գործարանների, դրանց տիրացած նոր տերերի մասին⁶⁴: Այսինքն՝ ըստ էության, կարելի է ասել, որ գրքի նկարագրություններում կա որոշակի հայկական ֆոն⁶⁵:

Կարևորելով այն փաստը, որ Օրհան Քեմալը, լինելով առաջիններից մեկը, ով 1960-ականներին անուղղակիորեն անդրադարձել է հայկական խնդիրներին, այնուամենայնիվ, նկատենք, որ այդ ամենում հստակ և որոշակի է նաև նրա գաղափարախոսական պատկանելության՝ սոցիալիզմի ազդեցությունը: Այսինքն՝ նկարագրելով հայերի կամ հույների՝ նա շեշտը դնում է ոչ թե նրանց էթնիկ պատկանելության, այլ դասակարգայինի վրա և նրանց կրած զրկանքների պատճառը փորձում է ներկայացնել ոչ թե էթնիկ-կրոնական, այլ դասակարգային առումով: Ըստ հենց Օրհան Քեմալի խոստովանության՝ կարևորը ոչ թե էթնիկ, այլ դասակարգային շահերն են, իսկ էթնիկ պատկանելությունը կարևոր չէ⁶⁶:

Հայոց ցեղասպանության խնդրին անուղղակի անդրադարձների ենք հանդիպում նաև թուրքական արձակի մեկ այլ խոշոր ներկայացուցչի՝ Յաշար Քեմալի (1923-2015 թթ.) տարբեր ստեղծագործություններում: Օրինակ՝ «Աքչասազի աղաները» եռագրության կեր-

⁶³ Նույն տեղում, էջ 138:

⁶⁴ Նույն տեղում, էջ 163, 194, 216:

⁶⁵ Ավելորդ չենք համարում նշել, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքի բավական մեծ աղմուկ բարձրացրած «Չյունը» վեպում գրեթե նույնքան կամ ավելի քիչ կան նկարագրություններ հայկական նախկին ներկայության, հայկական տների, եկեղեցիների մասին, սակայն այն ավելի մեծ ճանաչում ունի, և ոչ մասնագիտական շրջանակներում անգամ թյուր պատկերացում կա, թե այդ գիրքը նվիրված է Հայոց ցեղասպանությանը:

⁶⁶ Gültekin M. N., Orhan Kemal'in Romanlarında Modernleşme, Birey ve Gündelik Hayat, İstanbul, 2011, s. 11.

պարներից մեկին՝ Մոսկվիմ Ռուսթեմին, գրողը հետևյալ կերպ է ներկայացնում. «Նա էր, որ գիշերվա մթին մի արծվի պես իջնում էր հայերի վրա, որոնք փորձում էին փախչել ու փրկվել, բոլորին կտորկտոր անելով կամրջից նետելուց հետո խուրջիններով նրանց ոսկիները վերցնում և տանում տալիս էր Ադանայի փաշային»⁶⁷: «Անձրևի թռչուն (քարանդր)» վեպում խոսելով հայերի լքյալ հողերի մասին՝ Յաշար Քեմալը նկարագրում է գավառապետի պաշտոն ստացած Իսմայիլի և նրա մոր գրույցը պաշտոնավարման գավառ մեկնելուց առաջ. «Մայրը Իսմայիլ աղային այսպես էր խրատում. «Մեկ էլ քեզնից խնդրանքս, որդիս, եթե գնաս այդ գյուղաքաղաք, հայերից մնացած տները, դաշտերը չվերցնես: Այն բնում, որի տերը փախել է, այլ թռչուն չի կարող ապաստան գտնել: Բույն քանդողը բույն չի ունենա: Բռնության դաշտում բռնություն է աճում»⁶⁸:

Թուրք գրող Ֆահրի Էրդինչը (1917-1986) ունի «Վարպետ Հակոբը»⁶⁹ վերնագրով մի պատմվածք, որտեղ ճիշտ է նկարագրվում է բանտում այլախոհի նկատմամբ հալածանքները և ճնշումները, սակայն միևնույն ժամանակ ներկայացվում է հայ էլեկտրիկ վարպետ Հակոբի կերպարը, ով եկել է բանտի հոսանքը վերանորոգելու և այդ ընթացքում ի ցույց է դնում իր դրական, սրտացավ և կարեկից վերաբերմունքը բանտարկյալի նկատմամբ (օրինակ՝ նրան գաղտնի ծխախոտ է հանձնում, դրական խոսքեր ասում): Պատմվածքում անգամ չի էլ նշվում վարպետի հայ կամ քրիստոնյա լինելը, սակայն ընտրված անձնանունն ընթերցողների մոտ կասկած չի թողնում նրա ազգային պատկանելության վերաբերյալ: Կարող ենք ասել, որ թեև այս պատմվածքում հայկական թեմատիկա չկա, սակայն անուղղակի ենթատեքստ կա, թե հալածյալ կալանավորի նկատմամբ մեղմ վերաբերմունք ունի հալածված ժողովրդի ներկայացուցիչը:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Kemal Y., Yağmurcuk Kuşu, İstanbul, 1980, 4-üncü basım, s. 95.

⁶⁹ Erdinç F., Agop Usta, Umut Dünyası, Sofya, 1965, s. 164-169.

Չախակողմյան գրողների շարքում իր ուրույն տեղն ունի Ումիթ Քաֆթանջրօղլուն (1935-1980⁷⁰ թթ.), ով 1974 թ. հրատարկված «Հրացանավորները» վեպում խոսում է ոչ միայն հայերի և արևելյան նահանգներում հայկական նախկին ներկայության մասին, այլև առաջին անգամ հենց այդ վեպում ենք հանդիպում բռնի իսլամացված և այդպիսով ցեղասպանությունից փրկված հայ տղամարդու՝ Աբդոյի կերպարին: Վեպում նկարագրվում է հայկական կենցաղի որոշ տարրեր և ընդ որում՝ ընդգծված դրական շեշտադրումներով: Բացի այդ, խոսելով կրոնափոխ Աբդոյի մասին և քննադատելով նրան՝ հեղինակը դա անում է կրկին հայկական նկարագիրը զովաբանելու միջոցով. «Աբդոն ասես ընդհանրապես հազարամյա հայկական մշակույթի կրողը չլիներ»⁷¹: Գրքում խոսվում է նաև Հայոց ցեղասպանության առաջ բերած վրեժխնդրության և ցավի հիշողության մասին, որը նույնպես բավական ուշագրավ է: Իսկ ձուլման երևույթի մասին խոսելիս մեկ այլ հայ հերոսի՝ Թանոյի շուրթերով հեղինակը նշում է. «Երբևէ հարցրել ես, թե ինչո՞ւ է քո անունը Աբդո: Եթե հարցնեիր կիմանայիր, որ եթե կարողանար իրեն փրկել, ապա անունը Աբդո չէր լինի, կլիներ կամ Կարապետ, կամ Գարեգին, կամ էլ չգիտեմ ինչ»⁷²:

Անցյալ դարի թուրքական արձակի հայտնի դեմքերից մեկը՝ Ֆաքիր Բայքուրթը (1929-1999 թթ.) իրենց սերնդի գրողների պատասխանատվության հարցի մասին հետաքրքիր մտքեր ունի. «Մեր սերունդն այնպիսի մի սերունդ է, որ պատասխանատու է և՛ անցյալի, և՛ ապագայի համար...Գրողին հազարավոր մարդիկ են կարողում: Եթե քեզ հարյուր հազար մարդ է կարողում, դու ուրիշ կերպ չես կարող լինել, ուզես էլ՝ չես կարող: Այդ պատճառով էլ պատասխա-

⁷⁰ Քաֆթանջրօղլուն 1980 թ. սպանվել է աջ ծայրահեղական «գորշ գայլեր» ահաբեկչական կազմակերպության կողմից:

⁷¹ Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013, s. 153.

⁷² Նույն տեղում, էջ 153:

նատու ես ոչ միայն ներկայի, այլև ապագայի համար: Սա էլ բավարար չէ, անցյալի համար էլ ես պատասխանատու: Արտերկրում ապրողները լավ գիտեն, որ նույնիսկ Օսմանյան կայսրության ղեկավարության կատարած սխալների պատասխանը մեզանից են պահանջում, «Ընկե՛ր, նրանք օսմանցի էին, մենք օսմանցի չենք», - չես կարող ասել: Պետք է տաս պատասխանը⁷³: Թվում է՝ պատասխանատվության զգացումը գիտակցած սոցիալիստ թուրք գրող Բայքուրթը պետք է նաև իր գրականությամբ ապացուցեր արտահայտած տեսական դատողությունները, սակայն համոզված «առաջադեմը» լռություն է պահպանել հայկական թեմատիկայի նկատմամբ, իսկ հազվադեպ հիշատակումները հայերի մասին առավելապես կրում են բացասական երանգներ:

Ինչպես նշվեց վերևում ձախ քաղաքական կողմնորոշում ունեցող թուրք գրող Վեդաթ Թուրքալին 2004 թ. հրատարակված իր վերջին վեպերից մեկում՝ «Կորուսյալ վեպեր» վերնագրով, մի քանի անգամ անդրադառնում է Հայոց ցեղասպանության խնդրին: Նա խոսում է օսմանյան մշակույթում, արվեստում, մամուլում հայերի ունեցած դերի մասին և ներկայացնում դրվագներ հայերի սպանողից⁷⁴: Սակայն պատմելով հայերի սպանությունների մասին՝ Թուրքալին անմիջապես փորձում է մեղմել թուրքերի մեղքը և համահավասարեցնող բնույթ տալ դեպքերին. «Եթե դաշնակցական հայերի ձեռքը ընկներ նրանք էլ նույն բանը կանեին: Առանց այդ էլ մի շարք թուրք մենական գյուղերում ուժերը ներածի չափ արել էին»⁷⁵: «Կորուսյալ վեպերը» գրքում ներկայացված է մի երկխոսություն, որի ընթացքում գրուցակիցներից մեկը պատմում է հայկական կոտորածի մասին: Այսպես, լսելով ժողովրդական մի երգ՝ գրքի հեղինակը հարցնում է իր գրուցակցին.

⁷³ Andaç F., Anadolu aydınlanmacısı Fakir Baykurt, İstanbul, 2000, s. 51.

⁷⁴ Türkali V., Kayıp Romanlar, İstanbul, 2004, s. 44.

⁷⁵ Նույն տեղում, էջ 45:

«- Ի՞նչ լեզվով է այս երգը:

-Հայերեն:

Աչքերն առանց թարթելու վրաս էր հառել:

- Ձեր դուրը չեկա՞վ,- հարցրեց:

-Ոչ, հավանեցի, ուղղակի չհասկացա, թե ի՞նչի մասին է:

-Վշտերի երգ է սա,- ասաց: - Կոտորված հինգ հարյուր հազար հայերի ողբը: Թուրքիայում այս ձայներիզն արգելված է»⁷⁶:

«Կորուսյալ վեպերը» գրքում հանդիպում ենք 20-րդ դարի սկզբի թուրք նշանավոր բանաստեղծ Թևֆիք Ֆիքրեթի վերաբերյալ մի ուշագրավ դրվագի: Ֆիքրեթը, որը հայտնի էր իր առաջադեմ հայացքներով, ոգևորվում է երիտթուրքական հեղաշրջմամբ, սակայն կարճ ժամանակ անց ինչպես շատերը՝ հիասթափվում է երիտթուրքերից՝ հասկանալով նրանց իրական կերպարը: Վեղաթ թուրքալին իր գրքում մեջբերում է մի հատված երիտթուրք պարագլուխ Թալեաթ փաշայի և Թևֆիք Ֆիքրեթի հանդիպումից. «Հայկական ջարդերի հիմնական պատասխանատու Թալեաթ փաշայի մեկնած ձեռքը Ֆիքրեթն անպատասխան է թողնում՝ ասելով. «Ես արյունոտ ձեռքերը չեմ սեղմում»⁷⁷:

Հայոց ցեղասպանության և հատկապես այդ տարիներին բռնի կրոնափոխված հայերի թեմային է նվիրված 2001 թ. լույս տեսած գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընի (ծնվ. 1952 թ.) «Քեզնով է ուրախանում սիրտս» գիրքը, որը թարգմանվեց արևմտահայերեն և արևելահայերեն: Քեմալ Յալչընը՝ լինելով ձախակողմյան հայացքների տեր, 1980 թ. սեպտեմբերի 12-ին Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո բնակություն է հաստատել Գերմանիայում և սկսել դասավանդել դպրոցում: Ուսուցիչների վերապատրաստման դասընթացներից մեկի ժամանակ ծանոթացել է հայազգի ուսուցչուհի Մելինեին և հենց այդ հանդիպումն էլ առիթ է դարձել,

⁷⁶ Նույն տեղում, էջ 124:

⁷⁷ Նույն տեղում, էջ 303:

որ նա հետաքրքրվի հայկական թեմատիկայով: Ավելին՝ նա այցելում է Արևմտյան Հայաստան, ծանոթանում ցեղասպանությունը վերապրած և բռնի իսլամացված հայերի ու նրանց սերունդների հետ: Նրանց հետ ունեցած հարցազրույցների արդյունքում էլ ծնվում է «Քեզնով է ուրախանում սիրտս» գիրքը, որի տպագրումը Թուրքիայում արգելվում է և այն լույս է տեսնում Գերմանիայում: Հարցազրույցների և վերապրածների պատմությունների պարզ փոխանցումը ներառող գրքի առաջաբանում հեղինակը դիմելով իր «հայ եղբայրներին» խոնարհվում է սպանված հայերի և ասորիների հիշատակի առաջ ու նշում. «Որպես թուրք գրագետ, իմ անունով ձեզմե եւ մարդկութենէն ներողութիւն կը խնդրեմ»⁷⁸: Սակայն հեղինակը չի մոռանում ընդհանրացում անել և հավելում է, որ գլուխ է խոնարհում նաև. «Հայ եւ Ասորիներու ճակատագրին բախտակից սպանուած, իրենց կեանքը կորսնցուցած Թուրք, Քիւրտ եւ բոլոր մարդոց առջեւ»⁷⁹: Այսինքն՝ այն թուրքական թեզը, թե 1915-ին եղել են երկուստեք զոհեր, տողատակում ցայտուն կերպով երևում է: Փաստագեղարվեստական այս ստեղծագործությունում ականատեսները պատմում են ցեղասպանության մանրամասներ, նկարագրելով և՛ արքայը, և՛ կոտորածն ու թալանը՝ երբեմն մեջբերելով հենց թուրքերի կամ քրդերի խոստովանությունները: Գրքում առանց գեղարվեստական հարստացման ներկայացված փաստերը այս կամ այն կերպ հայտնի են հայ ընթերցողին, ուստի հարկ չենք համարում ընդարձակ մեջբերումներ անել:

Ինչպես ասվեց, գրքում ծավալուն անդրադարձներ կան նաև ցեղասպանության ընթացքում բռնի իսլամացված հայերի մասին և հատկապես հետաքրքիր է արդեն հետագայում նրանց կիսագաղտնի կյանքը պատկերող դրվագները, հոգեկան և հոգեբանական խընդիրները: Գրքում անդրադարձներ կան նաև Թուրքիայի Հանրապե-

⁷⁸ Եալչըն Բ., Հոգիս քեզնով կը խայտայ, Երևան, 2003, էջ 15:

⁷⁹ Նույն տեղում:

տությունում հայության բեկորների նկատմամբ պետության վարած խտրական քաղաքականության վերաբերյալ: Վերջում Քեմալ Յալչընը «երանիների» մի շարք է ներկայացնում, որտեղ ցանկանում է, որ «այդ աղետը» չլիներ, աշխարհում ոչ մի տեղ կոտորած չլիներ, երանի թուրքերը, հույները, հայերը իրար հետ խաղաղ ապրեին և այլն: Գրքում հանդիպում ենք հեղինակի կողմից ասված շատ հատկանշական մի մտքի, որը հաստուկ էր 20-րդ դարի թուրքական գրականությանը. «Չայրույթս իմ լռության մեջ է»⁸⁰: Նշենք, որ Քեմալ Յալչընի գիրքը, անշուշտ, դրական քայլ է՝ ընդդեմ թուրք գրականության մեջ Հայոց ցեղասպանության խնդրի հանդեպ լռության, սակայն ներկայացնելով 1915-ին վերաբերող բազմաթիվ մանրամասներ՝ դեմոկրատական Գերմանիայում բնակվող հեղինակը չի տալիս այդ ամենի իրավական անվանումը՝ ցեղասպանություն:

Հայկական և ընդհանրապես Թուրքիայի ոչ մուսուլման փոքրամասնությունների հալածանքի ամենացայտուն դեպքերից մեկին 1942 թ. կիրառված այսպես կոչված «Ունեցվածքի հարկի» և դրա ծանր հետևանքներին է նվիրված Յըլմազ Քարաքոյունլուի «Տիկին Մալքըմի գարդերը» վեպը⁸¹, որի հիման վրա էլ նկարահանվեց կինոնակար: Այդ գիրքը առաջին անգամ տպագրվել է 1990 թ. և մինչև 2010 թ. վերահրատարակվել է 16 անգամ: Այդ նույն հեղինակին է պատկանում 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի դեպքերին նվիրված «Աշնանային ցավ» վեպը: Այսինքն՝ կարելի է ասել, որ Թուրքիայում ոչ մուսուլման փոքրամասնությունների դեմ իրականացված հալածանքները ևս կոնկրետ այս հեղինակի պարագայում դարձել են հիմնական թեմատիկաներից մեկը, սակայն կրկին մեր կարծիքով ունի մոդայիկ և շահ հետապնդող բնույթ:

Խոսելով թուրք գրականության մեջ հայկական թեմատիկայից՝ նկատենք նաև, որ 2015 թ. արձանագրվել է մի հետաքրքիր զարգա-

⁸⁰ Նույն տեղում, էջ 386:

⁸¹ Karakoyunlu Y., Salkım Hanımın Taneleri, İstanbul, 16. Baskı, 2010.

ցում, երբ Հայաստանում մի քանի տարի գտնված ու հայաստանյան թերթերում հոդվածներով հանդես եկած Մեհմեթ Ֆաթիհ Օզթարսուն հեղինակել է «Ֆիդայիների հեղաշրջումը»⁸² վերնագրով գիրքը, որտեղ անիրական փաստերի վրա ներկայացվում է Հայաստանում իբրև թե տեղի ունեցած քաղաքական զարգացումները: Գեղարվեստականության մակարդակով աչքի չընկնող գրքում կա մի հանգամանք, որը մինչ այդ երբևէ չի դրսևորվել թուրքական գրականության մեջ. վեպն առաջին թուրքական ստեղծագործությունն է, որտեղ դեպքերը տեղի են ունենում Հայաստանի Հանրապետությունում:

⁸² Öztarsu M. F., Fedailer Devrimi, İstanbul, 2015.

ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՀԱՅ ԿՆՈՋ ԿԵՐՊԱՐԸ

Հայոց ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները

Տարբեր ժամանակաշրջաններում Հայկական լեռնաշխարհի ներխուժած նվաճողները որդեգրել են հայերի ձուլման քաղաքականությունը, ինչի իրագործման հիմնական մեթոդներից է եղել բռնի կրոնափոխությունը: Տարածաշրջան թյուրքական տարրի ներթափանցման ժամանակ և պետական միավորներ ստեղծելուց հետո բնիկ ոչ մուսուլման բնակչությունը կազմում էր մեծամասնություն, և նվաճողները խնդիր դրեցին փոխել պատկերը ու ստեղծել իսլամադավան մեծամասնություն: Դրա համար անկյունաքարային քաղաքականություն դարձավ բնիկ ժողովուրդների բռնի իսլամացումը: Հայերը լինելով Օսմանյան կայսրության ոչ մուսուլման հիմնական ազգերից մեկը՝ պարբերաբար ենթարկվել են բռնի իսլամացման, որը տարբեր ժամանակներում տարբեր ծավալներ է ունեցել: Հայտնի է, որ հազարավոր հայերի բռնի իսլամացում է եղել նաև 1915-23 թթ. Հայոց ցեղասպանության տարիներին:

Ցեղասպանության ժամանակ առևանգման և իսլամացման թիվ մեկ թիրախը, կարելի է ասել, եղել են հայ կանայք և աղջիկները: Առևանգելով նրանց՝ մուսուլմանները նախ՝ ազատվում էին ամուսնությունների ժամանակ վճարվող «գլխագնի» ծանր ֆինանսական բեռից և, բացի այդ, համալրում իրենց հարեմները: Իսլամացված հայ կանանց մասին բավական թվով փաստեր են ի հայտ գալիս ավելի ուշ, երբ Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Օսմանյան կայսրությանը պարտադրվում է քայլեր անել մուսուլմանների տներում պահվող հայ կանանց վերադարձնելու ուղղությամբ:

Այն, որ շատ հայուհիների համար մուսուլմանների հետ ամուսնանալուց հետո կյանքը հազեցած է եղել տարատեսակ տրավմանե-

րով, կասկածի ենթակա չէ և Եվրոպայում բնակվող թուրք ուսումնասիրող Ուղուր Ունգորի կատարած դաշտային-հետազոտական աշխատանքների ընթացքում արված մի հարցազրույցում բավական ուշագրավ և խոսուն փաստի ենք հանդիպում: Ունգորի հետ գրուցած ծագումով Վանից մի քուրդ քաղաքական գործիչ ասել է, որ իր տատը հայուհի է եղել: Այնուհետև վերոհիշյալ քաղաքական գործիչը հավելել է որ ինքը. «Երբեք չէր հասկանում, թե ինչու մռայլ և ընկճված կինը (իր տատը Ռ. Մ., Ն. Պ.) միշտ իր սեփական ընտանիքն անիծելիս նրանց անվանում էր «քուրդ սրիկաներ»⁸³:

Ցեղասպանության տարիներին հայ կանանց բռնի իսլամացման հետևանքով այսօր Թուրքիայում ձևավորվել է հասարակության մի շերտ, որն ունի հայկական ծագում, հատկապես հայ տատիկներ: Հրանտ Դինքն այս առիթով ասել է. «Այսօր, երբ շրջում եք Անատոլիայով, գրեթե ամեն վայրում, մի շարք ընտանիքներում կարող եք հանդիպել մարդկանց, որոնք ասում են. «Իմ պապը, տատը հայ էին»⁸⁴: Այսօր Թուրքիայում հայ տատիկներ ունենալու հանգամանքն այնքան տարածված է, որ դարձել է նաև ժամանակակից թուրքական փաստագեղարվեստական գրականության նյութ:

Ցեղասպանությունը վերապրած և իսլամացված հայ կանանց պատմությունները, որոնք վերջին տարիներին են հայտնվում Թուրքիայի հասարակական, գիտական և քաղաքական օրակարգում, մասն են կազմում ներկայումս լայն տարածում գտնող բանավոր պատմությունների (oral history) ժանրի, որը վերջին երկու-երեք տասնամյակներին լայն տարածում է գտնում⁸⁵: Ըստ ազգագրագետ Հարություն Մարությանի, բանավոր պատմությունները լսելի են

⁸³ Ունգոր Ու., Կրոնափոխություն և փրկություն. գոյատևման ռազմավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում - Թուրքիայի հայության խնդիրների շուրջ, Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, թիվ 22, Երևան, 2008, էջ 106-107:

⁸⁴ Kayit dişi çocuklar akrabalarını arıyor, Sabah, 09.07. 2005.

⁸⁵ Մարության Հ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006, էջ 71:

դարձնում հասարակության հատկապես այն անդամների ձայները, ովքեր լուռ և արհամարհված էին⁸⁶: Թուրքիայում տասնամյակներ շարունակվող ժխտման և մոռացության քաղաքականությունն անգամ չի կարողացել հասարակական լայն խավերի հիշողությունից իսպառ ջնջել Հայոց ցեղասպանության հետ կապված տարատեսակ հիշողությունները և դրանք այսօր ի հայտ են գալիս ու երբեմն ձևավորում թուրքական հասարակական դիսկուրսը: Ինչպես դիպուկ նկատել է թուրք գրաքննադատ Օմեր Թուրքեշը. «Անցյալը ահա ինչքան ժամանակ է բաց չի թողնում Թուրքիայի հասարակության օձիքը»⁸⁷: Իսկ հետագոտող Մայքլ Սխուդսոնը անցյալը մոռացության տալու փորձերի առնչությամբ նշում է. «Անցյալը, որոշ իմաստով և որոշ պայմանների դեպքում, մեծապես դիմադրողունակ է իրենից վեր կանգնելու փորձերի նկատմամբ»⁸⁸: Հ. Մարությանի գնահատականը անցյալը մոռանալու առնչությամբ մեծապես բնութագրում է այսօրվա թուրքական հասարակության մեջ տեղի ունեցող գործընթացները. «Անցյալը դառնում է մեր մի մասը և ձևավորում է մեզ, այն ազդում է մեր գիտակցության վրա՝ անկախ մեր ցանկությունից»⁸⁹:

Ցեղասպանությունը վերապրած հայերի հիշողությունների վերլուծությունը թույլ է տալիս մասնագետներին եզրակացնել, որ դրանք մեծապես «ցեղասպանության պատճառած կոլեկտիվ և անձնական տրավմայի հիշողություն է»⁹⁰: Հայկական ընտանիքներից խլված կամ ընտանիքները կորցրած կանայք և երեխաները, փոխելով կրոնը, լեզուն, կենսամիջավայրը, ապրելով կոտորածների և աք-

⁸⁶ Նույն տեղում, էջ 72:

⁸⁷ Türkeş Ö., Hafızanın başkaldırısı, Radikal, 07.09.2007.

⁸⁸ Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը, Հատոր 1, Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009, էջ 43:

⁸⁹ Նույն տեղում, էջ 43-44:

⁹⁰ Մարության Հ., Տրավմատիկ հիշողությունն իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում - Թուրքիայի հայության խնդիրների շուրջ, Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, թիվ 22, Երևան, 2008, էջ 112:

սորի գրկանքները, բնական է, որ ենթարկվել են բազմաթիվ տրավմաների, որոնք տարիներ շարունակ ուղեկցել են նրանց:

Տրավմատիկ հիշողությունները բազմաշերտ հետևանքներ են ունենում անհատի ու հասարակության վրա և դրանցից են տրավմայի առաջացրած հոգեկան ու հոգեբանական խնդիրները: Ընդունված է կարծել, որ տրավմայից ազատվելու կամ այն բուժելու տարածված ձևերից մեկը այդ մասին պատմելն է, որը կարող է բերել հոգեվիճակի թեթևացման, սակայն այս մեթոդն ապահովագրված չէ նաև հակառակ էֆեկտներից: Օրինակ՝ Հայ Առաքելական եկեղեցու Գերմանիայի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը գերմանաբնակ թուրք գրող Քեմալ Յալչընի «Անատոլիայի զավակները. դարի վկաները» գրքում պատմում է մի դեպք, որը տեղի է ունեցել 1970-ականների սկզբին Մարսելում: Ըստ Գարեգին Սրբազանի, Մարսելի հայ համայնքում եղել են ցեղասպանությունը վերապրած հայեր, որոնցից մեկը ծագումով Էրզրումից 80-ն անց մի հայ շարունակ պատմել է իր ապրած սարսափները: Գարեգին Բեքչյանը խորհուրդ է տվել նրան իր հուշերը հանձնել թղթին, սակայն այդ ամենը գրի առնելուց մի քանի ամիս անց, ցեղասպանությունը վերապրած մարդը հոգեկան խանգարում է ստացել և երբ նրա երեխաները բժշկի են տարել՝ եզակացությունը եղել է հետևյալը. «Անցյալի ցավալի դեպքերը հիշելը խախտել է նրա հոգեկան հավասարակշռությունը»⁹¹: Ցեղասպանությունը վերապրած Էրզրումցու վիճակը հետզհետե վատացել է և ի վերջո նա ինքնասպան է եղել:

Այսօր ժամանակակից թուրք գրականության մեջ, կարելի է ասել, ձևավորվել է մի հոսանք, երբ գրականության թեմա է դառնում 1915-ին առևանգված կամ հրաշքով փրկված ու իսլամացված հայ կանանց հարցը: Տպագրվող գրքերում հատկապես աչքի է զարնում փաստագրական հիմքը: Իսլամացված հայերի խնդրի քննարկման հնարավորության մասին խոսելիս շատերը նշում են, օրինակ,

⁹¹ Yalçın K., Anadolu'nun Evlatları (Yüz yılın tanıkları), Köln, 2008, s. 132.

Թուրքիայում եվրախնտեզրման ճանապարհին նկատվող որոշ ազատություններ, սակայն թեմայի հրապարակայնացման շարժիչ ուժը համարվում են իսլամացված հայերի սերունդները, ավելի կոնկրետ՝ թոռները⁹²:

Արդեն հրապարակում կան տասնյակ փաստագեղարվեստական ստեղծագործություններ, որոնց գլխավոր հերոսը բռնի իսլամացված հայ կինն է՝ իր բարդ հոգեբանական աշխարհով: Չնայած իսլամացված հայ կանանց կերպարների միջև եղած որոշ տարբերությունների, կան նաև մի շարք ընդհանուր գծեր: Ուշադրություն է գրավում հատկապես այն, որ ամբողջ կյանքում իրենց ուղեկցող տրավմատիկ հիշողությունների մասին այդ կանայք նախընտրել են բարձրաձայնել առավելապես կյանքի վերջում: Այսինքն՝ ամբողջ կյանքում թաքցրել են դա՝ վախենալով կամ գուցե չուզենալով ցավ պատճառել իրենց զավակներին: Կա նաև անցյալի ցավալի հուշերը թաքցնելու մեկ այլ կարևոր պատճառ, այն է՝ նրանք չեն գտել մի հարմար գրուցակից, ում կկարողանային վստահել իրենց գաղտնիքը: Նմանատիպ պատմությունների համար ընդհանրական է այն, որ պատմելով ամբողջ կյանքում թաքցրած տրավմատիկ հիշողությունների մասին՝ վերապրած հայուհիները, գուցե ենթագիտակցորեն ցանկացել են ազատվել այդ բեռից կամ թեթևացնել այն: Ուշագրավ է նաև այն, որ այդ տրավմատիկ հուշերի ունկնդիր թոռները ևս դառնում են տրավմայի յուրահատուկ կրող և արդեն իրենք են ձգտում ազատվել դրա բեռից: Որպես սա հաստատող օրինակ կարող ենք դիտարկել Ֆեթիհյե Չեթինի հայտնի «Մեծ մայրս» գրքի տպագրումից հետո նրան հանդիպած բազմաթիվ իսլամացված հայերի զավակների, թոռների ապրումները, որոնցից մեկը պատմելով իր մոր դառը կյանքի պատմությունը՝ վերջում խոստովանել է. «Այս գիշեր կը կարողանամ հանգիստ քուն քնել»⁹³:

⁹² Başyurt E., Ermeni Evlatlıklar: Saklı Kalmış Hayatlar, İstanbul, 2006, 2-inci baskı, s. 11.

⁹³ Peroomian R., նշված աշխ., էջ 274:

Իսլամացված հայ կանանց վերաբերյալ գրքերում աչքի են գարնում տատեր-թոռներ հարաբերությունը, փոխադարձ կապվածությունն ու վստահությունը, ինչը, կարելի է ասել, այս թեմային բնորոշ կարևոր առանձնահատկություններից է: Տարբեր ժողովուրդների գրականությունների մեջ տարածված և գրականագիտության խընդիրներից մեկը՝ հայեր-որդիներ խնդիրը, թուրք գրականության մեջ իսլամացված հայ կանանց մասին պատմող ստեղծագործություններում վերածվել է յուրահատուկ՝ տատեր-թոռներ խնդրի: Թուրք գրաքննադատ Օմեր Թուրքեշը ցեղասպանության տրավմատիկ հիշողությունները համարում է յուրահատուկ ժառանգություն, որը տատերը թողնում են թոռներին⁹⁴: Ինչպես նշում են շատ մասնագետներ, ցեղասպանության տրավմատիկ հիշողությունն ուղեկցում է հայության տարբեր սերունդներին և դրսևորվում յուրովի՝ կախված ժամանակից և հանգամանքներից: Հրանտ Դինքն այս մասին գրում է. «Մինչև սերնդից սերունդ մեր փոխանցվող տրավմայից չազատվենք, հնարավոր չէ, որ հայկական աշխարհը հանգիստ ապագա ունենա»⁹⁵: Տրավմայի կրելը, միևնույն ժամանակ, ցույց է տալիս, որ ցեղասպանության վերապրածները «փրկվելով» հանդերձ՝ դատապարտվել են ամբողջ կյանքում տառապելու: Ազգագրագետ Հ. Մարությանի կարծիքով. «Վերապրողները նույնպես գոհեր են, քանի որ նրանք վկան են եղել բազմաթիվ դաժանությունների, իրենց հարազատների կորստյան, տեսել են տասնյակ ու հարյուրավոր դիակներ և այլն»⁹⁶: Այս առումով շատ խոսուն է լիբանանահայ գրող Գեորգ Աբելյանի 2005 թ. տպագրված գրքի վերնագիրը՝ «Ցկեանս նահատակություն»: Այս գրքում հավաքված են Հայոց ցեղասպանությունը տարբեր կերպ վերապրած և հաճախ իրենց ար-

⁹⁴ Türkes Ö, նշված հոդ.:

⁹⁵ Dink H., Türkler ve Ermeniler: İki Yakın Halk; Türkiye ve Ermenistan: İki Uzak Komşu, Ermeni Sorunu Tartışılırken..., İstanbul, 2006, s. 55.

⁹⁶ Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, էջ 58:

մատներից բռնի հեռացված իսլամացված հայերի պատմություններ: Գրքի առաջաբանում Աբելյանը նշում է. «Այսպիսիներու կեանքը կենդանի եւ երկարատեւ, ցկեանս նահատակութիւն չէ՞ր եղած»⁹⁷:

Բռնի իսլամացված հայերի մասին պատմող գրական ստեղծագործություններում աչքի է զարնում նաև այն հանգամանքը, որ փրկվածները ձգտել են գաղտնի շփվել իրենց նմանների հետ, կիսել վշտերը, հիշել անցյալը, ինչպես նաև գաղտնի շարունակել քրիստոնեական հայկական սովորույթներ: Այս երևույթի տեսական բացատրությանը ևս հանդիպում ենք Հ. Մարությանի բարձրարժեք աշխատությունում. «Նկատելի է, որ պատմելն օգնում է համերաշխության կայացմանն ավելի շատ տառապողների միջև»⁹⁸: Նա հավելում է նաև, որ իսլամացված հայ կանանց պարագայում տրավմատիկ հիշողություններին ավելացել է նաև տրավմատիկ առօրյան⁹⁹: Սա, իրոք, հետաքրքիր ձևակերպում է, և դրա դրսևորումները՝ կոնկրետ օրինակներով, կտեսնենք ստորև:

Իսլամացված հայ կանանց մասին գրված ստեղծագործություններում հատկապես աչքի է զարնում այն մեծ հեղինակությունը, որ արդեն առաջացած տարիքում նրանք վայելել են իրենց ընտանիքում և շրջապատում: Գրեթե բոլոր գրքերում իսլամացված հայ կանայք ներկայացվում են որպես խելացի, մաքրասեր, աշխատասեր և լավ տանտիկիներ: Թոռներն իրենց տատերի հեղինակության մասին փաստող բազմաթիվ հիշողություններ ունեն, որոնցից կցանկանայինք մեջբերել մեկը, որը, մեր կարծիքով, առավել քան ուշագրավ է: Թուրքիայում պաշտոնական տեսակետից տարբերվող գրքերի հրատարակմամբ հայտնի «Փերի» հրատարակչության սեփականատեր Ահմեթ Օնալի մեջ տպավորվել է իր տատի՝ իսլամացված հա-

⁹⁷ Աբելյան Գ., Ցկեանս նահատակութիւն, Այնճար-Լիբանան, 2005, էջ 6:

⁹⁸ Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, էջ 61:

⁹⁹ Մարության Հ., Տրավմատիկ հիշողությունն իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում, էջ 112:

յուհի Ֆաթեի անսահման գրքապաշտությունը. «Կարող եմ ասել, որ մեր տունը նա էր կառավարում, շրջակա բոլոր գյուղերում էլ խոսքը անցնում էր: Ջգում էի, որ մտավորական ընտանիքի զավակ էր: Մեծ կարևորություն էր տալիս երեխաների կրթությանը: Լավ հիշում եմ. մի օր դպրոցից վերադառնալիս գրքերս ու տետրերս ցեխն էին ընկել: Տատս, տեսնելով այդ, ինձ կանչեց, որպեսզի մի պատմություն պատմի. «Մերոնք մեզ պատերի տակ թողեցին, ոսկիները և փողերը հողի տակ թաղեցին, սակայն գրքերը շալակեցին ու տարան: Գիրքը շատ արժեքավոր է: Ես այս աշխարհից կգնամ, ոսկիներն ու փողերն էլ կարող են կորչել, սակայն գիրքը մարդուց էլ, փողից էլ ավելի արժեքավոր է»¹⁰⁰: Միգուցե տատի նման դաստիարակության շնորհիվ է, որ Ահմեթ Օնալը հետագայում ընտրել է գրահրատարակչության ոլորտը: Հրանտ Դինքը ևս, անդրադառնալով իսլամացված հայ կանանց հեղինակության խնդրին, ասում է. «Այդ կանայք մեկական առասպել էին, այդ տների դերվիշներն էին»¹⁰¹:

Վերջին տարիներին ավելացել են ինչպես քուրդ հեղինակների թուրքալեզու գրքերը Հայոց ցեղասպանության և հայկական թեմատիկայի մասին ինչպիսին են Յուսուֆ Բադիի, Մերթին Աքթաշի, Մերդար Ջանի և ուրիշների: Սակայն սրանից բացի, Թուրքիայում հրատարկվում են քրդերեն գրքեր հայկական թեմատիկայով, որոնց հեղինակներից են Մեհդի Ջանան, Իրֆան Ամիդան, Հեսենե Մերթեն և այլք¹⁰²:

Ուշագրավ է, որ հայ տատ ունենալու հանգամանքն առավելապես բացահայտվում է նրանց աղջկա կողմից թոռների միջոցով, այսինքն բացահայտվողներն ավելի շատ մայրական տատերն են, քան հայրական և սա միգուցե կարելի է բացատրել նաև հայրիշխանա-

¹⁰⁰ Başlangıç C., Özgürlüğün bu kadarı da fazla!, Radikal, 3.07.2006.

¹⁰¹ Dink H., Ölenlerin değil, kalanların üzerinden konuşalım, Zaman, 26.11.2005.

¹⁰² Ştu, Çelik A., Dinç N. K., Yüz Yıllık Ah: Toplumsal Hafızanın İzinde 1915 Diyarbakir, İstanbul, 2015, s. 314.

կան որոշակի ընկալումներով և հասարակության մեջ տղամարդկանց տարբերակվող դիրքի հետ:

Բազմաթիվ աղբյուրներում և ուսումնասիրություններում հանդիպում ենք իսլամացված հայ կանանց, տատիկների բացառիկ դրական հասկանիշների, գեղեցիկ, մաքրակենցաղ, հարեհաս լինելու մասին հիշողությունների¹⁰³ և դրանք անվերապահ ընդունվում են հասարակության կողմից:

Ինչպես նշվեց վերևում, սկսած 2000-ական թվականների սկզբից թուրքական գրականության մեջ տպագրվեցին մի շարք գրքեր, որոնց գլխավոր հերոսուհին կամ հերոսուհիներից մեկը Հայոց ցեղասպանության տարիներին բռնի կրոնափոխ հայուհին է: Դեռևս 2001 թ. Գերմանիայում տպագրված թուրք գրող Քեմալ Յալչընի «Քեզնով է ուրախանում սիրտս» փաստագրական վեպում հանդիպում ենք բռնի իսլամացված հայուհիների հետ կապված պատմություններ, որոնցից մեջբերենք մեկը: Ծպտյալ հայուհի Սուլթան Բաքըրչըզիլը փոխանցում է իր հորաքրոջ պատմությունը. ցեղասպանության ժամանակ մի քուրդ հորաքրոջ աչքերի առաջ սպանում է նրա ամուսնուն և իրեն առևանգում ու ամուսնանում հետը: Իր ամուսնուն սպանող քրդից հորաքույրը երկու տղա երեխա է ունենում, սակայն ապրած սարսափները ամբողջ կյանքում ուղեկցում են նրան. «Երբեք չեմ մոռնար այս դեպքը: Գիտեմ, որ այս մարդը ամուսինս սպաննեց: Իմ աչքերով տեսայ, զիս ալ պիտի սպաններ: Վախէս ամուսինս սպաննողին կինը եղայ: Երկու տղաներուս հայրը եղած այս մարդուն երբեք պիտի չներեմ, Աստուած անոր պիտի պատժէ»¹⁰⁴: Այս դրվագը լավագույնս ներկայացնում է բռնի իսլամացված հայուհու տրավմատիկ առօրյան և այն հոգեկան տանջանքները, որոնց ենթարկվել է նա ապրելով իր ընտանիքին սպանողի հետ մեկ հարկի տակ:

¹⁰³ Նույն տեղում, էջ 324-327:

¹⁰⁴ Եալչըն Ք., նշված աշխ., էջ 358:

Քեմալ Յալչընի Գերմանիայում հրատարակված մյուս գրքում՝ «Մարը Գելին» («Նորահարս»), հանդիպում ենք Ադրյամանի հայտնի Բերսումների (Պարսամ) տոհմից գեղեցկուհի Սիրանույշի պատմությանը, որին փրկել և այնուհետև նրա հետ ամուսնացել էր շրջանի հայտնի քուրդ աղաներից մեկը՝ Նուրին: Մինչ քրդի կինը դառնալը Սիրանույշը մի պայման էր դրել նրա առջև, համաձայն որի Նուրին պարտավորվում էր Սիրանույշի գերդաստանից փրկել տասը երեխայի և ահա հենց դրա շնորհիվ է, որ Բերսումների տոհմը շարունակվում է: Յալչընի գրքում Նուրի աղայի և Սիրանույշի կրտսեր որդին՝ Մեհմեթ Նուրին դրվագներ է պատմում մոր կյանքից, որտեղ ցայտուն երևում է իսլամացված հայուհու ապրած տրավմատիկ առօրյան և հիշողությունները. «Մորս իսկական անունը Սիրանույշ էր, հորս հետ ամուսնանալուց հետո նրան Հանըմ էին ասում: Մայրս երիտասարդ տարիքում հաճախ էր ինձ և ավագ եղբայրներիս ասում. «Ապա ինձ մի անգամ Սիրանույշ ասեք, լսեմ»: Երբ նրան Սիրանույշ էի ասում, փաթաթվում էր ինձ, շարունակ համբուրում ու արտասվում: Երեխա ժամանակ մորս արտասվելուն նայելով՝ ես էլ էի արտասվում, սակայն չգիտեի, թե մայրս ինչու է լալիս: Մայրս երբեմն լեռների, թռչունների, քարերի, հողի, ծաղիկների հետ էր խոսում, զրուցում: Ես չէի հասկանում այն լեզուն, որով նա խոսում էր: Երբ հարցնում էի, շոյում էր զլուխս ու ասում. «Մա մորս, հորս լեզուն է, քո քեռիների լեզուն է, հայերի լեզուն է»: Հայերի լեզուն մորս արցունքների լեզուն էր»¹⁰⁵:

Գրքի մեկ այլ հերոսուհու՝ Փազարջըքցի Սիլվայի, պատմությունը սարսռազդու մանրամասներ է պարունակում. «Երբ սկսվեց աքսորը ես արդեն մեկ տարի է, ինչ ամուսնացած էի: Տասնութ տարեկան էի: Ամուսնուս սպանեցին: Երբ քարավանը դեպի Սիրիայի անապատներն էր գնում իմ ներկայիս ամուսինը՝ Հասանն ինձ առևանգեց և տարավ իր գյուղ: Նախ փոխեց անունս, իմ անունը Սիլ-

¹⁰⁵ Yalçın K., Sarı Gelin, Bochum, 2004, s. 294.

վա էր: Ինձ ասաց. «Մրանից հետո քո անունը Հաջեր է լինելու»: Երբ Հասանը ինձ քարավանից առնանգեց ես երեք ամսական հղի էի: Ժամանակն եկավ և ես ծննդաբերեցի ու լույսի պես մի աղջիկ երեխա աշխարհ բերեցի: Հասանն ասաց. «Եթե այս աղջիկը մեծանա մեզ գլխացավանք կրերի: Կամ այս երեխային պետք է սպանես, կամ էլ ես եմ քեզ սպանելու»: Աղաչեցի, պաղատեցի, սակայն նա անդրդվելի էր: Այն ժամանակները կար մահվան վախ: Ո՞ւր պետք է փախչեի, ես ոչ մեկը չունեի: Իմ հարազատ երեխային իմ ձեռքով թունավորելով սպանեցի: Օրեր շարունակ երեխայիս պատկերը աչքերիս առջևից չէր հեռանում: Շատ զոջացի, մտածում էի. «Երանի ինքս ինձ սպանեի»: Ավելի ուշ Հասանից մի տղա երեխա լույս աշխարհ բերեցի: Մակայն այդ տղային ոչ մի կերպ իմ երեխայի նման կրծքիս չկարողացա սեղմել, իսկ Հասանին երբեք չընդունեցի որպես իմ ամուսին: Երեխայիս սպանելուց հետո ամբողջ կյանքիս ընթացքում տանջանքներ սպրեցի»¹⁰⁶:

Իսլամացված հայ կանանց թեմայով Թուրքիայում տպագրված առաջին ստեղծագործություններից է Իրֆան Փալալի «Աքսորի երեխաները. տատս հայ է եղել» հուշագրական վեպը, որը հիմնված է փաստերի վրա, սակայն տարբեր նկատառումներով այստեղ հերոսների անունները փոխված են: Այս գրքում տեսնում ենք տատի՝ իսլամացված հայ կին Ֆաթմայի և թոռան՝ Դեմիրի յուրահատուկ կապը, որի արդյունքում տատն առաջացած տարիքում հենց նրան է վստահում իր կյանքի գաղտնիքը: Այս կինը, չնայած առաջացած տարիքին, ամենայն մանրամասնությամբ հիշում է իրենց կյանքը մինչև ցեղասպանությունը, քսորի ճանապարհը, կոտորածը, հոր սպանությունը և մոր մահը: Այս բոլոր տեսարաններն ուղեկցել են նրան իր ողջ կյանքի ընթացքում: Նրա հավաստմամբ, իրենց քարավանը սկզբում 80 հոգուց է բաղկացած եղել. «Վերջում միայն ես մնա-

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 175-176:

ցի, կարծում եմ, և միգուցե ինձ նման փրկված մի քանի աղջիկ ևս»¹⁰⁷: Նա հիշում է նաև իրենց քարավանի տղամարդկանց, այդ թվում և իր հոր սպանության պահը. «Քիչ անց հերթով բոլոր տղամարդկանց սպանեցին: Երկու մարդ նրանց բռնում էր, երրորդը՝ սպանում: Ամենավերջում հորս սպանեցին»¹⁰⁸: Մորից կտրվելու պահը, ինչպես նմանատիպ շատ հերոսների պարագայում, Ֆաթմա տատիկի մեջ ևս վառ է մնացել: Տղամարդկանց սպանելուց հետո քարավանի կանանց տարել են ծառերի մոտ՝ ամենայն հավանականությամբ բռնաբարելու. «Մայրս այդ կողմ գնալուց առաջ ինձ մոտ եկավ և ինչ-որ բաներ ասաց կամ շշնջաց, սակայն չեմ հիշում, թե ինչ ասաց, միայն հիշում եմ, որ ինձ համբուրեց: Դրանից հետո այլևս մորս հետ երբեք չգրկախառնվեցինք և չհամբուրվեցինք: Ինձ մոտ եկավ, ինձ համբուրեց, միայն դա գիտեմ: Պարզվում է, որ դա նրա վերջին համբույրն էր, որովհետև հաջորդ օրը մայրս ցրտից սառչելով, մահացավ»¹⁰⁹: Ընդհանրապես նմանատիպ ստեղծագործություններում նկատելի է, որ իսլամացված հայ աղջիկ երեխաները հիշում են, որ ունեցել են բարեկեցիկ ընտանիքներ և շրջապատված եղել հոգատարությամբ, սակայն հետագայում, ճիշտ հակառակը, ենթարկվել են տարատեսակ ճնշումների, անարգանքի: Իրենց մանկությունից հուշ մնացած գուրգուրանքի կամ հոգածության մի նշույլ հիշողությունը պահել են, և գուցե դա է նրանց ուժ տվել դիմագրավելու փորձություններին:

Ֆաթման եղել է 5-6 տարեկան, երբ բախտակից մի խումբ երեխաների հետ փրկվել է, այնուհետև հասել Ուրֆա, որտեղ նրան մի մուսուլմանական ընտանիք վերցրել է որպես ծառայող, իսկ հետագայում, երբ դարձել է տասներկու տարեկան ամուսնացրել այդ ընտանիքի տղայի՝ քառասնամյա Դերվիշի հետ: Ամուսնությունից հինգ տարի հետո Դերվիշը մահանում է և Ֆաթման մնում միայնակ

¹⁰⁷ Palalı İ., Tehcir Çocukları: Nenem bir Ermeniymiş, İstanbul, 2005, s.14-15.

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 16:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 16-17:

երկու երեխաների հետ, իսկ որոշ ժամանակ անց իր ամուսնու ընտանիքը մի վեճի պատճառով նրան դուրս է հանում տնից՝ երեխաներին պահելով իրենց մոտ: Դրանից հետո Ֆաթման ստիպված սկսում է աղախինի, հավաքարարի գործ անել, որպեսզի կարողանա ապրել: Որոշ ժամանակ անց նախկին ամուսնու ընտանիքը կրկին ետ է վերցնում Ֆաթմային, քանի որ երկարատև բանտարկությունից հետո վերադարձած է լինում ամուսնու՝ Դերվիշի մեծ եղբայրը՝ Բեքիրը, ում հետ էլ և ամուսնացնում են Ֆաթմային: Այս ամուսնությունից էլ ծնվում են երեք երեխաներ, սակայն որոշ ժամանակ անց Ֆաթմայի երկրորդ ամուսինը մահանում է և կրկին այս անգամ արդեն հինգ երեխաներով նա մնում է միայնակ: Ֆաթման ստիպված սկսում է աշխատանք փնտրել և դառնում է դպրոցում հավաքարար: Հետաքրքիր է, որ Ֆաթման լինում է այդ տարիներին Ուրֆայի առաջին աշխատող կինը: Ֆաթմայի դժվարությամբ մեծացրած երեխաները, սակայն, դառնում են ազգայնամուլներ և ինչպես հաճախ է պատահում՝ խառը էթնիկ ծագումը հոգեբանորեն նրանց մղում է ծայրահեղական բնույթի գործողությունների:

Իր հարազատների սպանության տեսարանները խոր հետք են թողել Ֆաթմայի վրա, և նա ողջ կյանքում վախեցել է մահից: Այդ պատճառով էլ հետագայում նա նույնիսկ խուսափել է գնալ մերձավորների թաղմանը, քանի որ դա ծանր է եղել իր համար և հիվանդագին, սակայն այդ ամենի բացատրությունը թաքնված է հետևյալ պարզ և, միևնույն ժամանակ, խորիմաստ նախադասության մեջ. «Երբ մեկի մահվան մասին եմ լսում, հորս սպանությունն է աչքիս առաջ գալիս...»¹¹⁰:

Յուրահատուկ կապվածությունը թոռներից որևէ մեկի հետ իսլամացված հայ կանայք դիտել են որպես հենման կետ, սակայն այդ կապվածության մեջ նրանք տեսել կամ ցանկացել են նմանություն տեսնել իրենց նախկին հայկական ընտանքի հետ: Օրինակ՝ Ֆաթմա

¹¹⁰ Նույն տեղում, էջ 41:

տատիկը թոռանը՝ Դեմիրին, իրենց վերջին հեռախոսագրույցում հորդորում է շուտ գալ, որպեսզի նրան տեսնի և կարոտն առնի, միգուցե վերջին անգամ կրծքին սեղմի, քանի որ զգում է իր մոտալուտ մահը և ավելացնում. «Դու և՛ իմ զավակն ես, և՛ իմ հայրն ես: Դու գիտե՞ս, որ հայրս քեզ նման էր, միայն թե դու մի քիչ սև ես, նա ավելի բաց էր»¹¹¹:

Իրֆան Փալալըի հրատարակած մեկ այլ գրքում, որը վերնագրված է «Քարերի ողբը. աստվածածնի կործանումը» հիմնականում խոսվում է մշակութային եղեռնի մասին և մասնավորապես հայկական եկեղեցիների ու տվյալ պարագայում Մեքաստիայի Սուրբ Մարիամ Աստվածածնի եկեղեցու ավերման մասին: Գլխավոր հերոսը եկեղեցու քահանա Վարդգեսն է, ով ստիպված է լինում թողնել իր հայրենիքը և հեռանալ Ստամբուլ: Ցածր գեղարվեստականությամբ այդ գրքում ընդամենը մի փոքր անդրադարձ կա արդեն հետեղեռնյան Թուրքիայում և առավել կոնկրետ 1950-60-ականներին հայության բեկորների դեմ իրականացված բռնի իսլամացման քաղաքականությանը, որի հետևանքով փրկված հայերից շատերը ցեղասպանությունից 40, 50 տարի անց կրկին կանգնել են բնաջնջման վտանգի առջև և ինչպես նշում է վեպի կերպարներից մի վարորդ. «Հասկացանք, որ կամ այս աշխարհից հեռանալու ենք, կամ պետք է մուսուլման դառնանք: Տեր հայր, դու վստահում ես Ստամբուլին, բայց մի վստահիր, քանի որ այնտեղ էլ մեզ նմանների վիճակը ապահով չէ: Ավելի լավ է դու էլ մուսուլման դարձիր և փրկվիր»¹¹²: Ընդամենը այս փոքրիկ դրվագով հեղինակը կարևոր և լուրջ մի խնդրի է անդրադառնում. այն է՝ Հայոց ցեղասպանության շարունակական բնույթին և արդեն հանրապետական Թուրքիայում այդ քաղաքականության շարունակմանը, սակայն ցեղասպանությանը այլ անդրադարձներ գրքում չկան, իսկ գեղարվեստականության առումով այն

¹¹¹ Նույն տեղում, էջ 122:

¹¹² Palalı İ., Taşların Ağtı: Astvadžadzin'in Katli, İstanbul, 2005, s. 11.

արժեք չի ներկայացնում, ուստի հարկ չենք համարում մանրամասն վերլուծել հիշյալ ստեղծագործությանը¹¹³:

Թուրքիայում ցեղասպանության տարիներին իսլամացված հայ կանանց խնդիրը հասարակական ու գրական օրակարգ մտցնելու և հրապարակավ քննարկումներ սկսելու գործում անասելի մեծ է Ֆեթհիյե Չեթինի (ծնվ. 1950 թ.) «Մեծ մայրս» հուշագրական վիպակը, որը այս թեմայով գրված ամենաազդեցիկ գրքերից է, սակայն նմանատիպ այլ ստեղծագործություններից տարբերվում է նրանով, որ փաստերի նկարագրությունները համեմված են բարձր գեղարվեստականությամբ, ինչը գրքին հաղորդում է ոչ միայն փաստագրական, այլև գեղարվեստական արժեք: Բացի այդ, գիրքը խթանիչ դեր ունեցավ թուրք գրականության մեջ հայկական թեմատիկայի խորացման համար, մեծ ակտիվություն մտցրեց հասարակական և գրական շրջանակներում: Ֆեթհիյե Չեթինը մասնագիտությամբ իրավաբան է և երկար տարիներ եղել է Հրանտ Դինքի փաստաբանը: Լինելով ձախակողմյա հայացքների կրող՝ Չեթինը բազմիցս ենթարկվել է հալածանքների և անգամ բանտարկվել 1980 թվականի հեղաշրջումից հետո: Երիտասարդ տարիքում (25-26 տարեկան) Ֆեթհիյեն տեղեկանում է մորական տատից՝ Սեհերից, որ ամբողջ կյանքը որպես մուսուլման ապրած տատն իրականում հայուհի է Հերանուշ Կատարյան անունով, որին 1915 թ. ցեղասպանության ժամանակ աքսորի ճամփից առևանգում է մի ոստիկան, որդեգրում նրան, կրոնափոխ անում և տալիս Սեհեր անունը: Տասը տարեկան Հերանուշն ապրում է կոտորածների, աքսորի ողջ սարսափները, որոնք ամբողջ կյանքում ուղեկցում են նրան, սակայն մինչև խոր ծերություն գաղտնի է պահում դրանք: Հերանուշը խոր կապվածու-

¹¹³ Վերջին տարիներին Թուրքիայում ինչ-որ առումով մոդայիկ դարձած հայկական թեմատիկայով գրված գրքերի շարքում որոշակի շերտ են կազմում գեղարվեստականության, գաղափարական, կոմպոզիցիոն առումով չստացված գործերը և Բ. Փալալի հիշյալ գիրքը դրանցից ընդամենը մեկն է:

թուն է ունենում թոռներից մեկի՝ Ֆեթիհյեի հետ և արդեն առաջացած տարիքում (70 տարեկան) նրան է վստահում իր կյանքի ամենամեծ գաղտնիքը: Տատի և թոռան կապվածության համար կան մի քանի պատճառներ, սակայն, ինչպես Իրֆան Փալալըի տատի դեպքում, այս անգամ ևս Հերանուշը, մեր կարծիքով, տեսել կամ փորձել է թոռան մեջ տեսնել իր կորցրած ընտանիքին կապող մի բան: Ֆեթիհյեին ուղղված և հաճախ կրկնվող նրա հետևյալ բառերը դրա ապացույցն են. «Դու մեր կողմին ես նման»¹¹⁴: Ըստ Չեթինի, տատը լավ հիշողություն է ունեցել, սակայն հայկական ընտանիքի, աքսորի, կոտորածների մանրամասները հիշելու համար ողջ կյանքում ներքուստ անընդհատ կրկնել է դրանք¹¹⁵, այսինքն՝ շարունակ գտնվել տրավմայի մեջ: Նման վիճակի մեջ են եղել նաև Հերանուշի բախտակից այլ հայ կանայք ևս: «Աւելի ուշ նկատեցի, որ մեծ մայրիկիս ճակատագրակից մեծ թիւով կիներ ալ, արտայայտուելու անկարող ըլլալով, անոր նման անվերջ-անդադար զրուցած են իրենք-իրենց հետ, իրենք-իրենց մէջ»¹¹⁶: Ազդվելով նաև այդ հանագամանքից՝ Ֆեթիհյե Չեթինը հետագայում որոշում է տատի պատմությունը գրքի վերածել.

Հերանուշը Բալուի գավառի հայտնի Հավալ գյուղից Հովհաննես և Իսկուհի Կատարյանների դուստրն է եղել, ունեցել է նաև երկու եղբայր՝ Խորենը և Հրայրը: Ցեղասպանությունից առաջ Հերանուշի հայրն ու հորեղբայրը գնացել են ԱՄՆ աշխատելու: Կատարյանները եղել են բավական հայտնի մտավորականներ և մանկավարժներ, որոնցից օրինակ Հերանուշի պապի՝ Հայրապետ Կատարյանի և նրա եղբոր Անդրեաս Կատարյանի մասին վկայված են նաև

¹¹⁴ Çetin F., Anneannem, İstanbul, 2005, 5-inci basım, s. 29.

¹¹⁵ Հարցազրույց «Մեծ մայրիկս» գիրքի հեղինակ Ֆեթիհյե Չեթինի հետ, Ազգակ, 27.11.2006:

¹¹⁶ Նույն տեղում:

հայկական աղբյուրներում¹¹⁷, որպես հին հայերեն ձեռագրերի հմուտ վերծանող և կարդացող:

Ինչպես փոխանցել է տասնամյակներ անց Հերանուշ Կատարյանը, 1915 թվականի գարնանային մի օր իրենց գյուղ են ներխուժում թուրք ոստիկանները, որոնք հենց գյուղի կենտրոնում բռնորոշ աչքի առաջ սպանում են գյուղապետ Նիկողոս աղային, այնուհետև հավաքում են գյուղի բոլոր չափահաս տղամարդկանց, կապում և տանում: Այդ մարդկանցից այլևս ոչ մի լուր չի լինում¹¹⁸: Նույն օրը գյուղ են ներխուժում մի խումբ մարդիկ, որոնք առևանգում են գեղեցիկ, երիտասարդ կանանց ու աղջիկներին: Որոշ ժամանակ անց ոստիկանական և զինվորական ուժերը սկսում են ամբողջ շրջանի աքսորը և Հերանուշը իր մոր, երկու եղբայրների ու ամբողջ ազգականների հետ բռնում է գաղթի ճամփան: Աքսորյալների քարավանին, որոնց մեջ են լինում նաև շրջակա այլ գյուղերի բնակչությունը՝ կանայք, տղամարդիկ, երեխաներ, ծերեր, հավաքում են Բալոում: Աքսորյալների մեջ եղած տղամարդկանց սկսում են առանձնացնել, իսկ կանանց ու երեխաներին խցկում Բալոի եկեղեցու գավիթը: Տղամարդկանց առանձնացնելուց հետո դրսից սկսվել են լսվել սարսափազդու ձայներ և պարզվել է, որ հավաքված տղամարդկանց մորթել ու նետել են գետը: Այս դրվագը մեխվել է փոքրիկ Հերանուշի հիշողության մեջ և ամբողջ կյանքում ուղեկցել նրան: Հերանուշը պատմում է նաև դրանից հետո աքսորի ճանապարհին իրենց կրած զրկանքները. «Քանի որ մայրս չէր ուզում աքսորի ճամփին ետևի շարքերն ընկնեինք, արագ-արագ էր քայլում և որպեսզի մենք կարողանանք նրան հավասար քայլել, մեր ձեռքերից բռնած՝ քարը էր տալիս: Հաճախ ետևից ճիչեր, աղաչանքի և լացի ձայներ էին գալիս ու դրանք պատճառ էին դառնում, որպեսզի մայրս մի քիչ ավելի արա-

¹¹⁷ Այս մասին տե՛ս, Հարություն քահանա Սարգսյան, Բալո, իր սովորույթները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Կահիրե, 1932:

¹¹⁸ Çetin F., նշված աշխ., էջ 43:

գացնէր քայլերը, քանի որ չէր ուզում, որ մենք ետ նայենք: Ճանապարհի ընկնելու առաջին օրվա երեկոյան երկու մորաքույրներս ետևի շարքերից վազելով մեզ մոտ եկան, հոնգուր-հոնգուր լախս էին»: Տատս այստեղ դադար տվեց: Հոգոց հանեց: Ես նրա ձեռքը համբուրեցի: Շարունակեց. «Հարսքույրիկիս (քեռու կնոջը Ռ. Մ., Ն. Պ.), քանի որ հիվանդ էր և չէր կարողանում քայլել, ոստիկանները սվիններով սպանել էին ու դիակն էլ ճամփի եզրին նետել: Ճանապարհին ոստիկանները տարեցներին, հիվանդներին, նրանց, ովքեր չէին կարողանում քայլել, սվինահարում էին և թողնում նույն տեղում, բաց երկնքի տակ: Լեռներում գայլերի ու գիշատիչ թռչունների կերակուր էին դառնում¹¹⁹: Մադենի կամուրջն անցնելուց հետո Հավլերում հայրական տատս իր երկու թոռանը ջուրը նետեց: Այդ երեխաները հորեղբայրներիս աղջիկներն էին: Նրանց մայրերն էլ, հայրերն էլ սպանվել էին, իրենք էլ չէին կարողանում քայլել: Երեխաներից մեկն անմիջապես սուզվեց, սակայն մյուսը գլուխը ջրից հանեց: Հայրական տատս երեխայի գլուխը ջրի մեջ հրեց: Երեխան նորից գլուխը ջրից հանեց և մի վերջին անգամ էլ տեսավ աշխարհի լույսը, հայրական տատս նրան կրկին հրեց: Ապա ինքն էլ նետվեց խենթորեն ալիքվող ջրերի մեջ և աչքից կորավ»¹²⁰: Գրքի հեղինակ Ֆեթիյե Չեթինն այստեղ նկատում է հոգեբանական մի դրվագ, որը գեղարվեստորեն բավական հաջող ներկայացնում է. այդ պատմությունները պատմելիս Հերանուշը վերապրում է ամբողջ անցյալը և շարունակ նույն շարժումն է անում. «Նկատեցի, որ այս դաժան ու անհավատալի դեպքերը պատմելիս՝ տատս ինձ չէր նայում, հայացքը գորգի վրա մի կետի էր գամել, ձախ ձեռքով իմ ձեռքն էր ամուր բռնել, աջ ձեռքով անընդհատ նույն շարժումն էր անում: Ոտքի վերևից մինչև ծունկը շորն արդուկելու կամ էլ ձեռքով ուղղելու պես մի

¹¹⁹ Նույն տեղում, էջ 52-53:

¹²⁰ Նույն տեղում, էջ 53-54:

շարժում առանց զգալու շարունակ կրկնում էր»¹²¹: Ցեղասպանության ականատես վերապրողների հետ զրուցած և նրանց պատմությունները գրանցած շատ անձինք փոխանցում են, որ նմանատիպ շարժումներ են արել և այդպիսի հոգեվիճակ են ունեցել այդ արհավիրքն ապրած շատերը: Դրանից հետո՝ աքսորի ճանապարհին, ոստիկանության մի տասնապետ խլում է Հերանուշին մորից, իսկ նրա եղբորը՝ Խորենին խլում է մեկ այլ մուսուլման գյուղացի: Նրանք բռնի կրոնափոխ են լինում: Հերանուշը դառնում է Սեհեր, իսկ Խորենը՝ Ահմեթ: Որոշ ժամանակ անց մոտիկ գյուղերում ապրող Հերանուշն ու Խորենը գտնում են միմյանց և գաղտնի հանդիպում: Տարբեր աղբյուրներից նրանք իմանում են, որ իրենց մայրը՝ Բսկուհին և մորաքույրներից մեկը՝ Տիրուհին կարողացել են հասնել Հալեպ ու ԱՄՆ-ում գտնվող Հերանուշի հայրը՝ Հովհաննեսը 1920 թ. եկել է ու գտել նրանց: Իմանալով, որ իր երկու զավակները առևանգվել են մուսուլմանների կողմից և ողջ են՝ Հովհաննեսը 1928 թ. տարբեր մարդկանց միջոցով սկսում է փնտրել նրանց և ի վերջո Թուրքիայի ու Սիրիայի սահմանին մաքսանենգությամբ զբաղվողների օգնությամբ գտնում է Խորենի ու Հերանուշի հետքը: Նամակ ուղարկելով իր երեխաներին՝ Հովհաննեսը հայտնում է, որ սպասում է նրանց Հալեպում: Որոշ ժամանակ անց Խորենը կարողանում է փախչել և գնալ հոր մոտ, սակայն Հերանուշը, որին մինչ այդ արդեն ամուսնացրել էին մի մուսուլմանի հետ, չի կարողանում գնալ, քանի որ ամուսնու ընտանիքն արգելում է: Խորենը հոր հետ գնում է ԱՄՆ ու այնտեղից շարունակում կապ պահել քրոջ հետ, նամակներ ուղարկում, իսկ ավելի ուշ նրան հրավիրում է ԱՄՆ, սակայն այս անգամ էլ անձնագրի հետ կապված խնդիրների պատճառով Հերանուշին չի հաջողվում այցելել և տեսնել կորցրած հարազատներին: Իր հայկական ընտանիքը գտնելու միտքն ու հույսը Հերանուշին ուղեկցել են ամբողջ կյանքում և հենց այդ է պատճառը, որ արդեն առաջացած

¹²¹ Նույն տեղում, էջ 53:

տարիքում նա խնդրել է թոռանը՝ Ֆեթիյեին գտնել ԱՄՆ-ում ապրող իր ազգականներին ու նաև այդ առիթով է բացել իր կյանքի գաղտնիքը: Ֆեթիյեն ուղիներ է փնտրում Ամերիկայում բնակվող Կատարյաններին գտնելու համար և ի վերջո նրան հաջողվում է գտնել Խորենին ու նրա ընտանիքին՝ աղջիկներին, որոնցից մեկին ի պատիվ իր քրոջ անվանել էր Հերանուշ: Իմանալով եղբորը գտնելու լուրը՝ Հերանուշը շատ է ուրախանում և մանկական հրճվանքով ու անհամբերությամբ սպասում է նրանցից լուրի այդ ընթացքում, ըստ Ֆեթիյեի, նա դառնում է անճանաչելի կենսախինդ: Մակայն ճակատագրի հեգնանքով այդ ժամանակ Խորենը կաթված է ստացած լինում և կարճ ժամանակ անց մահանում է, իսկ նրա ընտանիքը չի ցանկանում կապ հաստատել Թուրքիայում բնակվող իրենց հորաքրոջ ընտանիքի հետ: Սա լինում է Հերանուշի կյանքի մայրամուտի խոշոր տրավման, որը գրքում վարպետորեն ներկայացնում է Ֆեթիյե Չեթինը՝ ասելով, որ այդ օրվանից հետո այլևս երբեք և ոչ մեկ տատին երգելիս չտեսավ: Տատի մահից հետո Չեթինը մահազո է տալիս Ստամբուլի «Ակօս» թերթին, որտեղ շատ համառոտ նշում է Հերանուշ-Մեհերի պատմության որոշ դրվագներ և հենց այդ միջոցով էլ գտնում է ԱՄՆ-ում բնակվող Կատարյանների ընտանիքի մեկ այլ ճյուղին: Հերանուշի մայրն ու հայրը հաստատվելով ԱՄՆ-ում՝ այնտեղ ունեցել են ևս երկու զավակ՝ Հարոլդ և Մարգարետ Կատարյաններին: Ահա հենց Մարգարետ Կատարյանի ընտանիքի հետ էլ Ֆեթիյեն կապ է հաստատում ու անգամ այցելում նրանց՝ այդպիսով իրականացնելով տատի ցանկությունը:

«Մեծ մայրս» գրքում հանդիպում ենք նաև իսլամացված հայ կանանց տրավմատիկ առօրյան պատկերող փաստերի: Հատկապես ուշագրավ են Հերանուշի և բախտակից այլ իսլամացված հայուհիների ջանքերը՝ գաղտնի շարունակել հայկական քրիստոնեական որոշ սովորույթներ, օրինակ՝ տոնել Ջատիկը, թխել դրա համար նախա-

տեսված խմորեղենը¹²²: Ի դեպ, նախկին կրոնի՝ քրիստոնեության որոշ այլ սովորույթների ուղղակի կամ անուղղակի պահպանման մասին էլ ենք փաստեր հանդիպում գրքում: Այսպես, հայտնի է, որ հայերի մեջ տարածված է ամուսնության ժամանակ յոթ պորտի հեռավորություն պահպանելու սովորույթը, և երբ Հերանուշի առևանգված ու իսլամացված, քրդացած Սիրանույշ մորաքույրը ցանկանում է Հերանուշի աղջկան ուզել իր տղային, Հերանուշի պատասխանը լինում է. «Ես ազգականի աղջիկ չեմ տա»¹²³: Հերանուշ Կատարյանի և նրան բախտակից բազմաթիվ բռնի կրոնափոխված հայերի մոտ քրիստոնեական, հայկական սովորույթների պահպանման այս օրինակները կարելի է տեղավորել վրացի ուսումնասիրող Իվա Մինդաձեի տված «մշակութային հիշողություն» եզրույթի շրջանակներում: Ըստ Մինդաձեի. «Մշակութային հիշողության գոյության համար պահանջվում է հուշերի անընդհատ վերականգնում և ամրապնդում, այլ կերպ ասած մշակութային հիշողության խորհրդանիշների և կերպարների «շրջանառություն», որը կկանխի դրանց մոռացության մատնվելը»¹²⁴: Հեղինակը եզրակացնում է, որ մշակութային հիշողությանը անհրաժեշտ են որոշակի վայրեր և հանգամանքներ, որոնց մեջ առաջնային են տարատեսակ տոները:

Ուշագրավ է նաև Ֆեթիիյե Չեթինի հոգեվիճակը տատի պատմությունները լսելուց հետո և նկատենք, որ դա մի մարդու արձագանք է, ով մեծացել է թուրքական ժխտողականության քարոզած ստի միջավայրում: Այսպես, տատից լսելով նրա հետ պատահածները՝ Ֆեթիիյեն մեծ ցնցում է ապրում. «Ինձ հազիվ էի զսպում, որ փողոց չնետվեմ ու ձայնս գլուխս գցած չլացեմ: Եթե պատմողը տատս չլիներ, չէի կարողանա հավատալ: Այն ինչ լսեցի, ընդհանրապես չէր

¹²² Նույն տեղում, էջ 78:

¹²³ Նույն տեղում, էջ 60:

¹²⁴ Миндадзе И., Коллективная память и самобытность группы – Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа, Тбилиси, 2005, стр. 155.

համապատասխանում իմ իմացածներին: Երևակայությանս մեջ կենդանացած մի քանի տեսիլքներ աչքերս բաց լինեին, թե փակ, միննույն է առջևիցս չէին հեռանում. եկեղեցու զավթում սպասող ամբոխի, հատկապես երեխաների աչքերը, ջուրը նետված մանուկները և նրանց՝ ապրելու բնագոյով ջրից հանած գլուխները, Հերանուշին մորից խլելու պահը: Սրանց զուգահեռ, ակամայից ինձ էի վերհիշում՝ ամեն տոն օրերին դպրոցում բանաստեղծություններ արտասանելիս: Քանի որ ես ամենալավ սովորողներից մեկն էի, ուսուցիչներս ամեն տոնին հերոսական բանաստեղծություններն ինձ էին կարդալ տալիս: Սրտաբուխ բացականչություններով արտասանածս «փառավոր անցյալի» մասին բանաստեղծությունները բախվելով վախից չուված մանկական աչքերին, ջրում կորած երեխաների գլուխներին, օրեր շարունակ կարմիր արյուն հոսած գետի ջրերին փշուր-փշուր էին լինում¹²⁵: Իմ իմացածներն այդ օրերին անկարող եղա որևէ մեկին պատմել, ապրածս ցնցումը չկարողացա ոչ մեկի հետ կիսել: Չգիտեմ՝ տատս էր այդպես կամենում, դրա համար, թե ամոթից, սակայն լսածներս ես էլ ուրիշներից էի թաքցնում, ջանում ապրածս զգացմունքային բուռն խառնաշփոթը ու ծանր ապրումները միայնակ հաղթահարել¹²⁶: Այս ամենը ցույց է տալիս, որ տասնամյակներով թաքցված ճշմարտության ի հայտ գալը գիտակից մարդկանց մոտ հայացքների հեղաշրջման կարող է հասցնել: Բացի այդ, այս օրինակով ևս մեկ անգամ հաստատվում է այն հանգամանքը, որ տրավման կրողից փոխանցվում է նաև նրան ում հետ կիսել է այդ գաղտնիքը: Ինչպես ասել է իր հարցազրույցներից մեկում Չերթինը. «Գրելիս իրականում և՛ գրում էի, և՛ լացում: Քունս փախել էր: Երբ գիրքն ավարտեցի նոր միայն կարողացա նորմալ քնել»¹²⁷:

¹²⁵ Çetin F., նշված աշխ., էջ 55:

¹²⁶ Նույն տեղում, էջ 52:

¹²⁷ Güven Ö., “Adı Seher değil Heranuş’tu”, Milliyet (Pazar eki), 26.12.2004.

Ինչպես նշվեց վերևում, «Մեծ մայրս» գիրքը մեծ աշխուժություն է մտցրել Թուրքիայում իսլամացված հայերի և ընդհանրապես Հայոց ցեղասպանության խնդրի քննարկման հարցում: Ինչպես փոխանցում է Չեթինը, գրքի հրատարակումից հետո շատերն են մոտեցել նրան և ներողություն խնդրել: Այս ամենը ի ցույց է հանում գրականության ազդեցիկ ուժը. «Շատ տեղեր, ուր գիտական կամ քաղաքական բանավեճերը չեն յաջողիր, պատվածքներն ու գրականությի-նը կը յաջողին: Օրինակի համար՝ Թուրքիոյ մեջ շատ վաճառող թերթերէն մէկուն մեջ երիտասարդ գրող մը, «Մեծ մայրս»-ը եւ Էլիֆ Շաֆաքի վէպը¹²⁸ ընկալելէ ետք, այս մասին իր գրութիւնը կ'աւարտէ ըսելով. «Ես իմ կողմէս ներողութիւն կը խնդրեմ»¹²⁹:

Իսլամացված հայ կանանց թեմատիկայով գրված հաջորդ գիրքը, որը կցանկանայինք ներկայացնել, ազգությամբ քուրդ Յուսուֆ Բադիի (ծնվ. 1956 թ.) «Աղջիկ» հուշագրական վիպակն է, որը կրկին հենված է ականատես վերապրողի պատմած հուշերի վրա և գրքի հենց սկզբում հեղինակը նշում է, որ ամեն ինչ իրականությունն է և ոչ թե երևակայություն կամ գեղարվեստական հնարանք: Ճաթմա վերանվանված Մարիամը տասնամյակներով թաքցրել է ապրած վիշտը և միայն առաջացած տարիքում է գտել մի վստահելի գրուցակցի՝ ի դեմս իր թոռան՝ գրքի հեղինակ Յուսուֆ Բադիի, որին պատմել է իր հիշողությունները: Փոքր հասակում ցեղասպանության սարսափներն ապրած Մարիամը բավական լավ հիշել է իր ծննդավայրը՝ Էրզրումի նահանգի Կարսքափը գյուղը, իրենց բարեկեցիկ և երջանիկ ընտանիքը, հորը, մորը, երկու եղբայրներին, որոնց բոլորին կորցրել է: Ինչպես գրում է գրքի հեղինակ Յուսուֆ Բադին. «Ճաթման իր ինքնության հետ կապված այս տեղեկությունները ոչ

¹²⁸ Այստեղ խոսքը վերաբերում է թուրք հայտնի կին գրող Էլիֆ Շաֆաքի «Հայրը և ապօրինի գավակը» վեպին:

¹²⁹ Հարցազրույց «Մեծ մայրիկս» գիրքի հեղինակ Ֆեթիյե Չեթինի հետ, Ազրակ, 27.11.2006:

մեկի հետ չէր կարող կիսել, միայն ինձ էր վստահում, և երբ ես հարցեր էի տալիս, ինձ չէր կոտորում և որոշ բաներ պատմում էր»¹³⁰: Մակայն, ըստ երևույթին, ապրած վախն է եղել պատճառը, որ նույնիսկ առաջացած տարիքում Մարիամը խնդրել է, որ պատմածը հրապարակվի միայն իր մահից հետո:

Նրա հիշողությունում վառ է մնացել իրենց ընտանիքի փախուստի նախապատրաստական փուլը: Ցեղասպանության ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ զգալով մոտալուտ վտանգը՝ հայերը որոշել են փախչել կամ թաքնվել և, որպեսզի լրացուցիչ դժվարություններ չծագեն, երբեմն թողել են մանկահասակ երեխաներին՝ նաև նրանց անվտանգությունից ելնելով: Մարիամը պատմում է, որ մի գիշեր հանկարծակի արթնանալով՝ տեսնում է տան անցուդարձը և փախուստի պատրաստվող իր ծնողներին: Տեղի տալով նրա արտասուքին՝ ծնողները որոշում են նրան նույնպես վերցնել իրենց հետ, սակայն թաքցնում են գյուղացիներից կազմված քարավանից, քանի որ արդեն պայմանավորվել էին երեխաներին չվերցնել: Մարիամը պատմում է, որ փախստական հայերի քարավանը ցերեկները թաքնվում էր, իսկ գիշերները քայլում: Ինչպես նշում է նա. «Մենք փախչում էինք և՛ կառավարությունից, և՛ հասարակ ժողովրդից»¹³¹: Տասնհինգ օր տևած փախուստից հետո վերջանում է սննդամթերքը, ջուրը և բացի այդ պետության համար աշխատող որոշ քրդեր իմանում են փախստական հայերի մասին ու սկսում հետապնդել նրանց: Քարավանի առաջնորդները, այդ թվում և Մարիամի հայրը, որոշում են հեռանալ, որպեսզի ուտելիք հայթհայթեն և միգուցե կանխեն մոտալուտ վտանգը: Նրանց գնալուց հետո քարավանը շրջապատվում է ձիավոր զինվորների և քաղաքացիական հագուստով մարդկանց կողմից: Տղամարդկանց ձեռքերն անմիջապես ձեռքերը կապում են և ամբողջ քարավանին չորսական

¹³⁰ Bağı Y., Ermeni kızı. Ağçik, İstanbul, 2007, s. 7.

¹³¹ Նույն տեղում, էջ 9:

հոգի շարքի ձևով դասավորելով՝ հրամայում քայլել: Այդպես մի քանի օր քայլելուց հետո հասնում են Մարդինում տեղակայված հավաքատեղի, ուր բերել էին տարբեր վայրերից աքսորյալ հայերի: Մի քանի օր այդ ճամբարում ահավոր պայմաններում մնալուց հետո մի առավոտ զինվորները սկսում են ճամբարից մոտ 60 մարդ առանձնացնել և կապկպելով տանել անհայտ ուղղությամբ: Քիչ հետո պարզվում է, որ այդ մարդկանց տանում էին սպանելու: Փոքրիկ Մարիամի մոտ վառ է մնացել իր ընտանիքի սպանողի տեսարանը. «Երեկոյան կողմ փոքր մի խումբ էինք մնացել, սպասում էինք, թե երբ են գալու մեզ վերցնելու: Գիտակցելով մահվան էինք գնում: Ես փոքր էի, չէի գիտակցում, սակայն քարավանի մյուս մարդիկ շատ լավ գիտեին, թե վերջը ինչ է լինելու: Հավաքատեղիից 500 մետրի չափ հեռացանք: Հավաքատեղին հսկող զինվորները մեզ հանձնեցին դահիճներին: Դահիճները ձեռքներին ունեին թրեր, իսկ գոտկատեղին՝ դաշույններ: Գոտիների տակի դաշույնների և թրերի վրայի արյունը աչքերիս դիպավ: Մեր խումբը վերցրած դահիճը քառասուն տարեկան, կարճահասակ, շավվար և ժիլետ հագած, հաստ և սև ունքերով, մուգ մաշկով, սև բեղերով, գլխին համալիլով մի մարդ էր: Այդ մարդը իմ մորը և երկու եղբայրներին սպանեց»¹³²: Դահճի կերպարը ամենայն մանրամասնությամբ տպավորվել է Մարիամի հիշողությունում և ամբողջ կյանքում ուղեկցել նրան: Այդ ամենի պատճառով նա կյանքի տարբեր տարիներին խոր հոգեկան ապրումներ է ունեցել, սակայն դրանք թաքցրել է անգամ իր երեխաներից: «Եղբայրներիս աչքերիս առաջ թրով հարվածելով գլխներին՝ սպանեցին և մարմինն ու գլուխը իրարից բաժանելով նետեցին հորը: Մինչև սպանելը նրանց միայն մի հարց էին տալիս. «Իսլամ ընդունո՞ւմ եք»: Նրանց բացասական պատասխանից հետո դահիճը իջեցնում էր սուրը: Գլուխը մի կողմ, մարմին մեկ այլ կողմ էին նետում: Այդ ընթացքում ես շարունակ լալիս էի, ինձ մորս գրկից վերցրին: Մորս և

¹³² Նույն տեղում, էջ 11:

եղբայրներին աչքի առաջ սպանեցին: Ես շոկի ենթարկվեցի: Շարունակ լալիս էի, սակայն միայն ես չէի, որ լալիս էի: Հարյուրավոր հայեր իրենց մահվան հերթին սպասելիս մեկը պապանձվել էր, մեկը լացում էր: Մեկի եղբորը, մեկի հորը, մեկի սիրելիին նրանց աչքի առաջ գլխատում էին: Մարդ ինչպես կարող է չլացել, որդիս»¹³³: Նկատելի է, որ սպանության տեսարանը խոր հետք է թողել Մարիամի վրա, և նա բազմիցս դա կրկնում է: Փոքրահասակ աղջկա հիշողության մեջ տպավորվել է նաև այն հանգստությունը, որով դահիճները կատարում էին իրենց գործը: Հետևյալ տողերը լավագույնս ներկայացնում են ամբողջ տեսարանը. «Ես իմ այս ապրածների շոկի մեջ էի, երբ մի ձիավոր մեզ մոտ եկավ: Հորի մոտ գտնվող դահիճներին ասաց՝ «գործերին հաջողություն», և դահիճապետ Իբրահիմն ընդհատեց գործը, գնաց ձիավորի մոտ: Նստեցին, խոսեցին, հռհռում էին, կարծես սպանդանոցում անասուն էին մորթում: Առանց վախենալու, ամաչելու պատմում էին իրենց արածները, ծիծաղում: Պարզվեց՝ այդ ձիավորն էլ է դահիճ և մի այլ հորի մոտ է աշխատում»¹³⁴: Այս ամենը տեղի է ունենում փոքրահասակ երեխաների աչքի առաջ, որոնք լալիս են և սպասում իրենց ճակատագրին: Մինչ դահիճները գրուցել են իրար հետ, նրանցից մեկը նկատել է փոքրիկ Մարիամին և հարցրել մյուսին. «Այս փոքրիկ աղջիկը ի՞նչ գործ ունի այստեղ»: Դահիճ Իբրահիմն էլ պատասխանել է. «Մալիհ, եթե ուզում ես, դու նրան քեզ վերցրու, իմ տանը լիքը կան սրանցից: Թե չես ուզում, ես կվերցնեմ»: «Լավ, շատ սիրուն աղջիկ է, ես ինձ կվերցնեմ»¹³⁵: Ահա այսպես 7 տարեկան Մարիամը բաժին է հասնում դահիճ Մալիհին, որը նրան տանում է իր տուն, այնուհետև իսլամացնում և տալիս Ֆաթմա անունը: Սակայն երեխան երկար ժամանակ մղձավանջի մեջ է եղել իր տեսածների ազդեցությունից, գիշերները սարսափներ

¹³³ Նույն տեղում, էջ 13:

¹³⁴ Նույն տեղում, էջ 14:

¹³⁵ Նույն տեղում:

տեսել, չի կարողացել քնել, ինչպես ինքն է ասում՝ իր ընտանիքի դահիճ Իբրահիմի պատկերը չի հեռացել հիշողությունից: Հետաքրքիր է, որ դահիճն այն աստիճան է տպավորվել նրա մեջ, որ տարիներ անց էլ պատահաբար տեսնելով նրան՝ անմիջապես ճանաչել է և կրկին վերապրել այդ ամբողջ սարսափները: Սակայն կրկին իր մեջ է պահել ապրումները, այսինքն՝ ենթարկվել նոր տրավմաների և այդ մասին ոչ մեկին չի պատմել. «Իհարկե, ոչ մեկին չասացի, իմ մեջ մնաց: Եվ ոչ մեկն էլ չունեի, որն ինձ գաղտնընկեր կլիներ, ես ոչ մեկին չէի վստահում և գաղտնիքներս չէի ասում»¹³⁶: Դահիճի հետ հանդիպման մեկ այլ դրվագ էլ է ներկայացված գրքում, որտեղ միևնույն ժամանակ ի ցույց են հանվում Մարիամի հոգեկան տանջանքները: Մի օր Մարիամի հարևանի տանը հյուրեր են գալիս և նրանից խնդրում են օգնել սեղան պատրաստելու հարցում: Գնալով հարևանի տուն՝ Մարիամը տեսնում է, որ հյուրն իր ընտանիքի դահիճն է՝ Իբրահիմ Հովհանն և Մարիամը կրկին վերապրում է մանկության սարսափները. «Երբ նայում էի հյուրի դեմքին վերհիշում էի այն պահը, երբ կանգնել էր հորի գլխին: Երբ նա խոսում էր աչքիս առաջ էր գալիս այն պահը, թե ինչպես բարձր ձայնով բղավում էր մորս վրա: Երբ ժպտում էր հիշում էի այն պահը, երբ մյուս դահճի՝ Սալիհի հետ նստած գրուցում էր: Երբ ծխախոտը բերանն էր դնում միտքս էր գալիս այն պահը, երբ հորի մոտ գլխատեց իմ եղբայր Մելքին: Դե հիմա արի ու ճաշ պատրաստիր ու կերակրիր այս մսագործին»¹³⁷:

Մարիամի գաղտնապահության մեջ կարևոր դեր է խաղում նաև միջավայրը, որտեղ հայ լինելը, մեղմ ասած, հարգի չէր, և ինչպես ասում է ինքը՝ Մարիամը. «Որևէ մեկին իմ վիշտը չէի կարող ասել, որովհետև եթե ասեի, ինձ կոչնչացնեին, կասեին՝ Ֆաթման դեռ հայ է»¹³⁸: Կյանքի վերջում թոռանը՝ Յուսուֆին պատմելով իր կրած տա-

¹³⁶ Նույն տեղում, էջ 36:

¹³⁷ Նույն տեղում:

¹³⁸ Նույն տեղում:

ռապանքները՝ նա ասում է բնութագրական մտքեր, որոնք ցույց են տալիս թե՛ տրավմատիկ հիշողությունների առկայությունը և թե՛ այն միջավայրի բացակայությունը, որը կօգնեք ազատվել դրանցից. «Իմ ամենամեծ ցավը գիտե՞ս որն է, Յուսուֆ, տղաս: Ես այս գաղտնիքներն այսքան տարի թաքցրել եմ, քանի որ ոչ մի գաղտնիկեր չեմ կարողացել գտնել, ոչ մեկը չկար, որին վստահեի: Ես էլ ձգտեցի մոռանալ, սակայն սրանք մոռացվող դեպքեր չէին»¹³⁹:

Իսլամացված հայ կանանց թեմայով գրված ստեղծագործությունների շարքին է դասվում Գյուլչիչեք Գյունել Թեքինի «Սև պատանք» փաստագրական գիրքը, որտեղ հեղինակը հավաքել է իսլամացված մի քանի հայ կանանց պատմություններ: Գրքի ենթավերնագիրն արդեն խոսում է. «Իսլամացված հայ կանանց դրաման»: Գրքում առկա մի քանի պատմություններն ունեն որոշակի ընդհանրություններ, որոնք բնորոշ են թեմատիկային, ուստի կցանկանայինք անդրադառնալ այդ պատմություններից մի քանիսին: Հատկապես ուշագրավ է Խարբերդի Քուլվենք գյուղից Վարթեր Թումաջանյանի պատմությունը. ցեղասպանությունից կարճ ժամանակ առաջ Վարթերի ավագ եղբայրը փախչում է Ռուսաստան այնտեղից էլ Ամերիկա, իսկ Վարթերի ամբողջ ընտանիքը, ինչպես նաև նրանց քարավանը կոտորվում է Հիզուլ կոչված գետի մոտ: Աքսորի ժամանակ Վարթերին փախցնում և մահից փրկում է դերսիմցի Ջաֆեր Թան անունով քուրդ զինվորը, որը լինում է հայերի քարավաններն ուղեկցողների շարքում: Ջաֆեր Թանն ամուսնանում է Վարթերի հետ, փոխում նրա կրոնը, անունն էլ դարձնում է Ջեյնեփ: Ուշագրավ է հատկապես այն, որ որոշ ժամանակ անց Վարթերը և նրա ամուսինը, բնակություն են հաստատում ցեղասպանությունից առաջ բավական բարեկեցիկ կենցաղ ունեցող Վարթերի հայրական տանը, տեղ կանգնում այգուն, դաշտին, քանի որ Վարթերը մնացել էր Թումաջանյանների ընտանիքի միակ օրինական ժառանգը: Սակայն իսլա-

¹³⁹ Նույն տեղում, էջ 37:

մացված Վարթերի համար հարազատ գյուղ և տուն վերադառնալն ու ապրելը եղել է փոքրիկ սփոփանք և, միննույն ժամանակ, տանջանք, ինչը ստեղծված պայմաններում ավելի նախընտրելի է եղել: Մի կողմից՝ այդ ամենը նրան շարունակ հիշեցրել է կորցրած ընտանքի մասին, սակայն, մյուս կողմից, նրան կարոտն առնելու հնարավորություն տվել: Այս մասին հետագայում նա ասել է աղջկան՝ Շիրին Թանին. «Ամեն դաշտում, ամեն ծառի տակ, ամեն աղբյուրում, ամեն առվակում մորս, հորս, եղբայրներիս հետքը կար: Ամեն անգամ տուն մտնելիս պատկերացնում էի մորս, հորս, եղբայրներիս: Կարծես նրանց տեսնում էի, կարծես ձայներն ականջներիս ձայն էին տալիս»¹⁴⁰: Սակայն որոշ ժամանակ անց, երբ ստիպված են լինում լքել Վարթերի հայրական գյուղը և տունը, նա ապրում է երկրորդ տրավման: Ինչպես այլ հերոսներ, Վարթերը նույնպես կապ է պահպանել ճակատագրակից հայուհիների հետ, և անշուշտ, նրանց միավորողն իրենց անցյալի և ապրած սարսափների հետ կապված հիշողություններն էին: Ինչպես նշում է Շիրին Թանը, մայրը մտերիմ է եղել կրկին իսլամացված հայուհի Մելեքի հետ. «Երբեմն-երբեմն զրուցելիս նրանք լալիս էին: Մեկ օր անգամ մտքներովս չանցավ հարցնել, թե ինչո՞ւ էին լալիս»¹⁴¹: Վարթեր Թանը, թեկուզ գաղտնի, ձգտել է պահպանել հայկական քրիստոնեական որոշ սովորույթների տարրեր՝ դրանք թաքցնելով անգամ երեխաներից և ամուսնուց: Այդպիսի մի սովորույթի տարրերից է եղել հաց թխելիս խմորի վրա խաչի գաղտնի նշան անելը: Սակայն մի օր ամուսինը, պատահաբար տեսնելով դա, բարկացել է և ծեծել նրան՝ ասելով. «Հայի աղջիկ, տարիներ անցան, սակայն դու դեռ քո հայությունից չես հրաժարվել»¹⁴²:

¹⁴⁰ Tekin G., Kara kefen, İstanbul, 2008, s. 12.

¹⁴¹ Նույն տեղում, էջ 17:

¹⁴² Նույն տեղում, էջ 19:

Տարիներ անց՝ 1955 թ., ԱՄՆ-ի Չիկագո քաղաքում հաստատված Վարթերի եղբայրը գտնում է քրոջ հետքը և նրան նամակ ուղարկում: Այդ նամակները ևս Վարթերի համար դառնում են թանկարժեք իրեր, «անասելի երջանկության աղբյուր»¹⁴³ և իր նախկին ընտանիքի հետ կապող բարակ կամուրջ: Նրանց մեջ սկսվում է նամակագրություն և Վարթերի եղբայրը նրան հրավիրում է ԱՄՆ՝ հույս հայտնելով մինչև մահը հանդիպել. «Քո բոլոր ծախսերը ես կհոգամ, միայն թե դու արի, մինչև մահանալս թեկուզ մեկ անգամ քեզ տեսնեն»¹⁴⁴, - գրում է եղբայրը: Սակայն Վարթերի ամուսինը կտրուկ դեմ է լինում ԱՄՆ այցելելու խնդրին և արգելում նրան: Սա Վարթերի համար լինում է ևս մեկ լուրջ տրավմա, որը կրկին թարմացնում է նրա նախկին տրավմաները: Ամուսինը, ըստ երևույթին, վախենում էր, որ այցելելով ԱՄՆ և վերագտնելով իր հարազատներին՝ Վարթերը այլևս չէր վերադառնա Թուրքիա: Ինչևէ, որոշ ժամանակ անց Վարթերի եղբայրը մահանում է, իսկ նրա ընտանիքի հետ կապը ընդհատվում:

Վարթերի այս միայնակ, չհասկացված և իր ստեղծած ներքին աշխարհում փակված մնալը տարիներ հետո պետք է ցավ պատճառեին նրա զավակներին, որոնք խղճի խայթ են զգում նրան չհասկանալու, հոգսակից չլինելու, ցավերը չկիսելու համար: Ինչպես ասում է նրա դուստր Շիրինը. «Մենք նրան երբեք չկարողացանք հասկանալ, երբեք չկարողացանք ցավերը կիսել: Մայրս միշտ միայնակ էր և տառապում էր, և ոչ մեկն էլ նրա ցավով չէր հետաքրքրվում»¹⁴⁵: Ինքը՝ Վարթերը, կյանքի վերջում, որպես իր տառապանքների վկայություն, ասել և մահից առաջ իր երեխաներից խստորեն պահանջել է հետևյալը. «Ես օր ու արև չեմ ունեցել, իմ օրերը սև էին: Անընդհատ ցավեր եմ ապրել, կյանքս սև է եղել: Երբ մեռնեմ, իմ պատանքն էլ

¹⁴³ Նույն տեղում, էջ 13:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 14:

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 5:

թող սև լինի: Գերեզմանս էլ չսարքեք, թող հարթ հող լինի»¹⁴⁶: Սև պատանքը, որը դարձել է նաև գրքի վերնագիր, խորհրդանշում է ոչ միայն Վարթերի, այլև նման ճակատագիր ունեցող իսլամացված շատ հայուհիների կյանքը:

Նույն գրքի մեկ այլ հերոսուհի՝ Հաճընից Չարուրեն, որը հետագայում անվանափոխվում և դառնում է Մելեք, ցեղասպանության ժամանակ եղել է 7-8 տարեկան: Կոտորածի մասին լուրը առնելուց հետո գյուղացիները սկսում են անկանոն փախչել, նրանց մեջ է լինում նաև Մելեքի ընտանիքը՝ հայրը, մայրը և եղբայրները: Փախուստի ժամանակ փոքրիկ Չարուրեն կորցնում է ընտանիքին և իր նման բախտակից երեք երեխաների հետ մի քանի օր փախչելուց հետո պատսպարվում են մի քարանձավում: Նրանց է միանում նաև բարուրի երեխայով մի փախստական հայուհի: Որոշ ժամանակ անց շրջակա գյուղերից քրդերն իմանում են նրանց թաքստոցի տեղը և գալիս վերցնում են նրանց: Այդ ընթացքում մահանում է հայ կնոջ մանկահասակ երեխան: Այդ կնոջը, ինչպես և փոքրիկ Չարուրեին իր տանն ապաստան է տալիս Գեզբել գյուղի գյուղապետ Էթեմ Օզքանը¹⁴⁷: Որոշ ժամանակ անց զինվորականներին մատնում են, որ գյուղապետի տանը կան թաքնված հայեր և նրանք գալով գյուղ պահանջում են փախստականներին: Ի վերջո, գյուղապետը ստիպված հանձնում է հայ կնոջը՝ նշելով, թե մյուսները իր հարազատ երեխաներն են: Զինվորականները վերցնում են հայուհուն և հենց գյուղի մոտակայքում սպանում նրան: Չարուրեին փրկած գյուղապետը լինում է քուրդ ալևի, նրան բավական լավ է վերաբերվում, մի քանի տարի անց էլ Չարուրեին ամուսնացնում են Կեսարիայի Օրդեքլի գյուղից մի մուսուլմանի հետ, ումից նա ունենում է ինը երեխա: 1940-ականների կեսերին պարզվում է, որ Չարուրեի հայրը ողջ է, բնակվում է Բեյրութում և շուրջ երեք տասնամյակ փնտրել է իր կո-

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 21:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 27:

րած աղջկան: Սահմանին մաքսանենգ ապրանքների ներմուծմամբ զբաղվողներին հարցուփորձ անելու ժամանակ պատահաբար հանդիպում է Ջարուրեի գյուղից մի մաքսանենգի և նրա միջոցով էլ իմանում աղջկա մասին: Նրանց մեջ սկսվում է նամակագրություն և հայրը Ջարուրեին հրավիրում է Բեյրութ: Այդ ժամանակ Ջարուրեի ամուսինը մահացած է լինում, և նա իր երեխաներից մեկի հետ այցելում է հորը՝ Բեյրութ: Այնտեղ նա իմանում է, որ իրենց ամբողջ ընտանիքին փախուստի ժամանակ սպանել են և միայն հայրն է կարողացել հրաշքով փրկվել: Սկզբում նա փախել է Սիրիա, իսկ այնտեղից Բեյրութ, որտեղ նոր ընտանիք է կազմել և ունեցել երեխաներ: Հոր հետ հանդիպումը մեծ լիցք է տալիս Ջարուրեին և իր բախտակից կանանց մեջ նա համարվում է երջանիկ, քանի որ տարիներ անց, ի վերջո, կարողանում է գտնել իր ընտանիքին և անգամ հանդիպել նրանց, մի բան, որը չի վիճակվել հազարավոր իսլամացված հայուհիների:

Ցեղասպանությունից փրկված մեկ այլ հայուհու ճակատագիրը նման է իր բախտակից շատերին. Քոզլուք գավառից Փիրե Հաթունի մասին նշվում է, որ չնայած բարեկեցիկ կենցաղին՝ նա ընդհանրապես երջանիկ չի եղել. «Կարծես սրտի ամբողջ ցավը, ամբողջ հոգսերը դեմքին էին արտահայտված: Ասես բոլոր դիմագծերը լի էին իր կրած տառապանքով»¹⁴⁸: Փիրե Հաթունը՝ ինչպես շատ ուրիշներ, իր անցյալի ցավերի մասին շատ չի խոսել և միայն կյանքի մայրամուտին է համարձակվել վիշտը կիսել հարազատների հետ: Այս դեպքում ևս հարմար գաղտնընկեր է դարձել նրա թոռը՝ Սեբահաթը. «Իմ հորական տատս՝ Փիրե Հաթունը, ինձ հետ շատ էր կապված, ինձ շատ էր սիրում: Փոքր հասակում մայրս մահացել էր, ես որք էի մնացել, երևի նաև դրա համար իմ հանդեպ վերաբերմունքն առանձնահատուկ էր: Երբ ես մի քիչ մեծացա նա արդեն վատառողջ էր: Արդեն չէր կարողանում մանկաբարձություն անել: Հետո տատիս աչքերը

¹⁴⁸ Նույն տեղում, էջ 76:

կուրացան, ձեռքից-ուռքից ընկավ: Ես աշխատում էի նրան օգնել: Երբեք չեմ մոռանա՝ նստում էր մի անկյունում և ինձ իր մոտ էր կանչում: Ես գնում նստում էի մոտը և նա ինձ պատմում էր իր հետ պատահած ամեն ինչ: Իր ապրած բոլոր ցավեր, վշտերը»¹⁴⁹: Ըստ Փիրե Հաթունի պատմածների, իր ամուսնությունից մեկ ամիս անց սկսվել է ցեղասպանությունը, որին զոհ են գնացել իր ամուսինը, հայրը, եղբայրները և գրեթե բոլոր ազգականները, իսկ իրեն փախցրել է Շաթ գյուղից Խալիլ-ե-Դերվեշ անունով մի քուրդ և ամուսնացել հետը: Ինչպես շատ այլ հայուհիներ Փիրե Հաթունը ևս մարդկանց հուշերում մնացել է իր մաքուր կենցաղով, իր եփած ճաշերով, հարեհասությանը և բացի այդ, նրա կարևոր առանձնահատկությունն է այն, որ նա եղել է Քոզլուք գավառի մանկաբարձուհին և բազմաթիվ երեխաների օգնել լույս աշխարհ գալու:

«Մն պատանք» գրքում հավաքված պատմությունները ևս մեկ անգամ փաստում են, որ ցեղասպանության իրագործման մեջ մեծ դեր են ունեցել քրդերը և գրքի հերոսուհի առևանգված բոլոր հայուհիները բռնի իսլամացվել են հենց քրդերի կողմից: Նկատելի է նաև, որ բոլոր հայուհիները ունեցել են ձգտում գտնել իրենց ազգականներին կյանքի տարբեր տարիներին, անգամ խոր ծերության ժամանակ և նրանց շրջանում իրենց ազգականներին գտածները համարվել են «երջանիկներ»: Այս երևույթը ևս նրանց հոգեկան աշխարհի կարևոր բաղկացուցիչ մասերից է:

Բռնի իսլամացված հայուհու և նրա որդու բարդ հոգեբանական խնդիրներն է վեր հանում 2007 թ.-ին հրատարակված Ֆիլիզ Օզդեմի (ծնվ. 1965 թ.) «Վախն է իմ տերը» վեպը: Կարելի է ասել, որ վեպի հիմքը կրկին փաստագրական է, սակայն ի տարբերություն մյուս նմանատիպ ստեղծագործությունների՝ ավելի մեծ տեղ է տրված հերոսների հոգեբանական աշխարհի պատկերմանը: Բարդ սյուժետային միախուսումներով, մանվածապատ պատումներով հագեցած

¹⁴⁹ Նույն տեղում, էջ 89-90:

գիրքը դժվար է բնութագրել որպես զուտ փաստագրական վեպ, այն ավելի շատ հոգեբանական ստեղծագործություն է՝ փաստական հիմքով: Գրքի գլխավոր հերոսներից է Մուդեն, ով պատահաբար իմանալով իրենց ծագման մեջ հայկականության առկայության մասին՝ սկսում է էթնիկ ինքնության փնտրտուքները, որի ընթացքում ի հայտ են գալիս բազմաթիվ փաստեր: Մայրական պապի մահից հետո Մուդեի մայրը ինքն էլ իր համար պատահաբար պարզում է, որ հայրը իրականում հայ է եղել ու դա նրա համար բացասական ազդեցություն է ունենում, որը գրքի հեղինակը բավական վարպետորեն ներկայացնում է. «Մայրս լացելով սենյակս մտավ: Աչքերի կանաչ բիբերը էլ ավելի ցայտուն էին դարձել ընդհանուր կարմրածության ֆոնին: Ակնախոռոչներն ասես դուրս թռած լինեին. «Պարզվում է մենք հայ ենք եղել» ասաց: Ես տասնութ տարեկան էմ: Պապս նոր էր մահացել: Եթե հայ էինք, ապա ինչո՞ւ այդ մասին չգիտեինք, կամ էլ եթե հայ ենք դրա մեջ ի՞նչ կա լացելու»¹⁵⁰: Դրանից հետո տասնութամյա Մուդեի մոտ տարատեսակ հարցեր են ի հայտ գալիս, որոնց պատասխանը մայրը չի կարողանում տալ, սակայն հերոսուհու համար մի բան ակնհայտ է դառնում դա այն է, որ իր պապը ապրել է ինքնության երկվություն՝ ունեցել է իր արտաքին և ներքին աշխարհները, որոնցից յուրաքանչյուրում ինքը լիովին տարբեր մարդ է եղել: Թոռան համար առաջնային խնդիր է դառնում պապի երկրորդ՝ թաքնված ինքնության գտնելը: Դրանից հետո է, որ Մուդեն սկսում է ինքնության, արմատների փնտրտուքները, որն այդքան էլ չի խրախուսվում իր ազգականների, ընտանիքի կողմից և դրանով էլ ավելի բարդացնում աշխատանքները: Տասնութամյա աղջկա հետաքրքրությունն իր արմատներով հատկապես բարկացնում է մորական տատին, որը նրան խստորեն քննադատում է միաժամանակ նշելով, որ իրենք թուրք են և մուսուլման: Սակայն Մուդեն ավելի տրամաբանված բացատրություն է տալիս իր ցանկությանը. «Իմ

¹⁵⁰ Özdem F., Korku Benim Sahibim, İstanbul, 2007, s. 53.

մայրական կողմի ցեղի մի ճյուղը կոտորված է, ես ուզում եմ այդ ճյուղի մասին իմանալ: Կարելի է, իհարկե, մտածել, թե մահացած մի շարք մարդկանց անունները իմանալով ի՞նչ եմ անելու: Մակայն նրանք լոկ մահացած մարդիկ չեն. նրանք իմ պապերն են, ապուպապերը, տատերս են, մեծ տատերս»¹⁵¹: Պրպտումները նրան ստիպում են ի մի բերել անցյալում իր լսած և ներկայում հավաքած տարբեր իրողություններ և փնտրտուքի համար որպես սկիզբ է դառնում մորական պապի մոր՝ Գյուլի պատմությունը: Սուդեն վերհիշում է, որ իր տատը պատմել է, թե իր սկեսուրը այսինքն՝ Գյուլը ծնվել է 1888 թ. և իր առաջին երեխային ունեցել է 16 տարեկանում, սակայն Սուդեն հաշվելով պապի տարիքը՝ պարզում է, որ դա չէր կարող լինել նա, քանի որ պապը 1910 թվականի ծնունդ էր եղել, այսինքն՝ պապին ծնելիս Գյուլը եղել է 22 տարեկան: Այս ամենից հետո Սուդեն սկսում է ենթադրել, որ Գյուլը 16 տարեկանում լույս աշխարհ է բերել իր առաջին որդուն, որը 1915-ին հոր հետ կիսել է նույն դառը ճակատագիրը¹⁵²: Այս բարդագույն հոգեկան տանջանքների և փնտրտուքների ժամանակ Սուդեի քեռին նրան է հիշեցնում Գյուլ տատիկի գործած ասեղնագործ բարձի երեսները, որոնք էլ օգնում են գտնել այդ հանելուկի բանալին: Գյուլ տատի ձեռագործի վրա պատկերված է մի կին, որի երկու կողմում երկու երիտասարդ տղաներ են՝ ձեռքներին փայտեր ու երեքն էլ իրար ձեռքից բռնած: Ամենաուշագրավը, սակայն այն է, որ բոլորի կրծքին պատկերված են երեքական խաչեր: Սրանով բռնի իսլամացված, սակայն իրականում քրիստոնեությունը պահպանած Գյուլ տատիկը խորհրդանշել է իր կորսված ընտանիքը, իր երկու որդիներին, որոնցից մեկին ըստ երևույթի կորցրել է աքսորի ճանապարհին: Ինչպես տեսնում ենք, սա ևս տրավման արտահայտելու յուրահատուկ մի ձև է, որին դիմել է Գյուլը. չկարողանալով կիսել իր հույզերը և գաղտնիքը որևէ մեկի

¹⁵¹ Նույն տեղում, էջ 54:

¹⁵² Նույն տեղում, էջ 75:

հետ՝ նա այդ ամենն արտացոլել է ձեռագործում: Սուղեի որոնումները խիստ բարդանում են, քանի որ իր շրջապատում չի կարողանում գտնել մարդկանց, որոնք ամբողջական տեղեկություն կարող են տալ իր պապի և նրա մոր մասին, սակայն նա լի է վճռականությամբ ավարտին հասցնել սկսած գործը և իր շրջապատից ումանց կոչերին դադարեցնել անիմաստ որոնումները նա ինքն իր համար հետևյալ կերպ է պատասխանում. «Ինչո՞ւ հրաժարվեմ փնտրելուց: Ո՞վ գիտե, թե ես նրանցից ի՞նչ եմ ժառանգել. միգուցե մազերիս հետ գցելու ձևը, քնելիս ձախ ոտքս փորիս կպցնելու սովորույթը, վաղուց հող դարձած մեկի նման միգուցե ստամոքսի ցավ ունեմ, գուցե սիրում եմ ճիշտ մեկի նման, ում անունն իսկ չգիտեմ, ո՞ւմ եմ պարտական համբերատար լինելուս համար»¹⁵³: Փշրանքներով հավաքելով տեղեկություններ պապի և նրա մոր մասին՝ Սուղեն վեր է հանում հետևյալ իրականությունը. երկուսն էլ մինչև 1915-ը եղել են հայ քրիստոնյաներ, ունեցել են մեծ ընտանիք, աքսորի ժամանակ կորցրել են ընտանիքի հորը և ավագ որդուն, այսինքն Սուղեի պապի եղբորը: Դրանից հետո Գյուլը միայնակ է մնացել իր փոքր որդու հետ և ստիպված է եղել ամուսնանալ մի մուսուլմանի հետ: Իրենց մնացած ամբողջ կյանքում մայր ու որդի նախ եղել են յուրահատուկ կապվածության մեջ և դա ավելին է եղել քան ծնողի ու զավակի կապը. դրան ավելացել է նաև նույն գաղտնիքը կրելու, նույն սարսափները տեսած լինելու հանգամանքը: Մայր ու որդի ամբողջ կյանքում ստիպված թաքցրել են իրենց հայ լինելու փաստը և ներկայացել որպես մուսուլման թուրքեր: Շատ դիպուկ է Սուղեն ներկայացնում այս իրողությունը. «Նրանք մահացան որպես չորս մարդ, սակայն թաղվեցին որպես երկու մարդ»¹⁵⁴: Սուղեի պրպտումները վեր են հանում նաև այն իրողությունը, որ իր պապի և նրա մոր շրջապատում շատերն իմացել են նրանց հայկական ծագման մասին, ավելին՝ ոսկե-

¹⁵³ Նույն տեղում, էջ 85:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ 85:

րիչ պապի ածականը եղել է «գյավուր Հաջը»: Սուդեն գտնում է իր պապի ծանոթ հայազգի Հրանտուհի մորաքրոջը, որը մի ժամանակ եղել է պապի տան վարձակալը: Լինելով հայուհի՝ ենթադրվում էր, որ նա ավելի շատ բան կարող է իմանալ պապի և նրա մոր մասին: Հրանտուհի մորաքրոջ փոխանցած տեղեկությունները ևս փոքր ինչ ամբողջացնում են պատմությունը. Գյուլ տատիկը ունևոր ընտանիքից է եղել, լավ կրթություն ստացած և 27 տարեկանում նրա կյանքը գլխիվայր շուռ է գալիս՝ կորցնում է ընտանիքին, այնուհետև ստիպված ամուսնանում է մուսուլմանի հետ և փոխում է կրոնը: Մուսուլման ամուսնուց Գյուլը ունենում է մեկ աղջիկ: Գրքի հեղինակ Ֆիլիպ Օզդենն այս ամբողջ տեղեկությունը, Սուդեի պապի և նրա մոր ճակատագրի հետ կապված հարցերը չի նկարագրում միանգամից, ժամանակագրորեն ճիշտ դասակարգված, այլ՝ հատված առ հատված, տողերի արանքում, երբեմն փոքր-ինչ այլաբանորեն է ներկայացնում դրանք և ընթերցողից ուշադրության կենտրոնացում է պահանջվում, որպեսզի ամբողջանան պատկերն ու հերոսների կերպարները: Փնտրտուքների ժամանակ Սուդեն գտնում է իր պապի 83-ամյա նախկին աշակերտին, որը ևս որոշ մանրամասներ է պատմում պապի մասին: Ըստ նրա պատմածների՝ պապը ունեցել է հայ ազգականներ Բեյրութում, որոնք հետագայում գտել են նրան և անգամ այցելել Թուրքիա: Բացի այդ, պապի շրջապատում եղել են հայեր, որոնք ցանկացել են վերադարձնել նրան հայկականության, սակայն պապը վախի պատճառով շարունակել է ապրել թուրք մուսուլմանի «արտաքին ինքնությամբ»: Այս ամենի բացատրությունը Սուդեն համարում է վախի մթնոլորտը և հենց այդտեղից է բխում գրքի վերնագիրը՝ «Վախն է իմ տերը», այսինքն՝ վախն է կանխորոշել պապի քայլերը: Ուշագրավ է նաև Սուդեի այն դիտարկումը, թե պապի մայրը՝ Գյուլը հիմնականում փակված է եղել տանը, երբեք չի ժպտացել և դեմքին դրոշմված է եղել խոր թախիծ, որի պատճառը հասկացել են միայն պապի մահից հետո, երբ պարզվել է, որ նրանք

հայեր են¹⁵⁵: Սուդեն իր պապի և նրա մոր մասին տեղեկություններ գտնելու համար անձնագրային բաժնից վեր է հանում նրանց արխիվային փաստաթղթերը, համաձայն որոնց Գյուլ տատիկը մինչև 1915-ը եղել է քրիստոնյա և առաջին անգամ ամուսնացած է եղել հայ քրիստոնյայի հետ, իսկ երկրորդ անգամ ամուսնացել է մուսուլմանի հետ և փաստաթղթերում փոխել են նաև անունը՝ կոչելով Այշե: Գյուլի առաջին ամուսնու անունն էր Մելքոն, Մելքոնի հոր անունը՝ Ավետիս, մորինը՝ Եղսաբերթ, որի հոր անունը Կարապետ, մորինը՝ Նազլը: Գյուլի հոր անունը եղել է Հակոբ, մորինը՝ Մարիամ¹⁵⁶: Այս ամենը գտնելով հանդերձ՝ Սուդեն չի կարողանում գտնել պապի և նրա մոր հայկական անուններն ու ազգանունները: Մա թվում է, թե փոքր դրվագ է, սակայն այս երևույթը հանդիպում ենք իսլամացված հայ կանանց մասին պատմող մի շարք գրքերում, երբ փոխելով կրոնը և ինքնությունը, այդ կանայք վախից ելնելով՝ ձգտել են մոռացության տալ իրենց հայկական անունը: «Վախն է իմ տերը» գրքում ևս անվան մոռացության հարցը դիտարկվում է իրական հայկական ինքնությունից խուսափելու համատեքստում: Սուդեն իր ձեռք բերած ամբողջ տեղեկությունները ամբողջացնելու համար ձգտում է վեր հանել նաև պապի և նրա մոր անունները. «Լավ, պապիս անունն ի՞նչ է եղել: Նրա մայրը ինչպե՞ս է նրան կանչել օրորոցային երգելիս»¹⁵⁷: Այս հարցում պարզություն է մտնում շատ պատահական. վերոհիշյալ Հրանտուհի մորաքրոջ հետ հերթական զրույցի ժամանակ հանկարծակի խոսքի մեջ վերջինս նշում է, որ ժամանակին դերձակ Գյուլբենքից, որը Սուդեի պապի մանկության ընկերն է

¹⁵⁵ Ի դեպ, հարկ է նկատել, որ բռնի կրոնափոխված շատ հայուհիներ ունեցել են նմանատիպ նկարագիր, որը պայմանավորված է նաև տրավմատիկ առօրյայով, իսկ նրանցից մեկի հետևյալ միտքը շատ բնութագրական է. «Մենք խնդալիք ոչ մեկ բան ունինք: Մենք դատապարտուած ենք նստելու և տեսապես մտածելու» (տե՛ս, Եալչըն Ք., նշված աշխ., էջ 358):

¹⁵⁶ Նույն տեղում, էջ 93:

¹⁵⁷ Նույն տեղում:

եղել, լսել է, որ պապի իսկական անունը եղել է Մաժակ, իսկ ազգանունը Մարդինյան: Գյուլ տատիկի իրական անունը եղել Գուլունիա, իսկ ազգանունը Նաքքաշյան¹⁵⁸. պատմությունն այսպես մասնիկներով ամբողջանում է:

Գիրքն ունի նաև յուրօրինակ ավարտ. Սուդեն իր աղամանդե մատանին, ոսկե ճարմանդը և վզնոցը, որոնք նրան էր նվիրել պապը, տանում է ոսկերչի մոտ և պատվիրում դրանց փոխարեն իր համար պատրաստեն ձեռքի մեծության երկու ոսկե խաչեր. «Մեկի վրա գրված է Մաժակ Մարդինյան, մյուսի վրա՝ Գուլունիա Նաքքաշյան: Օննդյան թիվ չկա, մահվան թիվ նույնպես: Առանց սկզբի և վերջի»¹⁵⁹: Պապի և նրա մոր իրական անունները կրող ոսկե խաչերը Սուդեն տանում է նրանց գերեզման և թաղում գերեզմանաքարերի տակ, այդպիսով մահից հետո նրանց «վերադարձնելով» իրենց իրական էթնիկ և կրոնական պատկանելությունը:

Թուրք գրող Վեդաթ Թուրքալիի «Կորուսյալ վեպեր» գրքին վերևում անդրադարձել էինք՝ փորձելով վեր հանել Հայոց ցեղասպանության մասին անդրադարձներ, սակայն պետք է նշել, որ այդ նույն գրքում հանդիպում ենք նաև իսլամացված հայ կնոջ կերպարին և տրավմատիկ առօրյային վերաբերող դրվագներ: Այսպես, վեպի հերոսներից մեկի՝ Վազգենի մայրը եղել է ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայուհի, որին առևանգել և նրա հետ ամուսնացել էր մի քուրդ: Տարիներ անց հայուհուց և առևանգիչ քրդից ծնված որդու՝ Վաքքասի մոտ գերակա է դառնում հայկական ինքնությունը, և նա տեղափոխվելով Եվրոպա՝ որոշում է սովորել հայերեն, փոխում է անունը՝ դառնալով Վազգեն, որը նրա ֆիդայի քեռու անունն է եղել: Միևնույն ժամանակ Վազգենը լինում է թուրքական կոմունիստական կուսակցության անդամ և նրա կուսակցական ընկերները նրան անվանում են «արհեստական հայ»: Եվրոպա-

¹⁵⁸ Նույն տեղում, էջ 104:

¹⁵⁹ Նույն տեղում, էջ 120:

յում հանդիպելով իր գաղափարակից ընկերոջը՝ գրույցի ընթացքում նա պատմում է իր մոր, նրա կրած տառապանքների մասին և իր անթաքույց աստելությունն է արտահայտում բռնակալ քուրդ հոր հանդեպ: Հայ մոր նկատմամբ տածած սերը և քուրդ հոր հանդեպ աստելությունը նրա հայկական ինքնության կարևորման համար, միգուցե, լուրջ խթան են հանդիսացել: Խոսելով գրքի մեկ այլ հերոսի՝ Դոկտորի, հետ՝ նա նշում է. «Իմ սիրելի մայրիկը հայ էր, գիտե՞ս: Հայրս տգետ ու բռի շաֆի¹⁶⁰ քուրդ էր: Քառասուն տարեկանում առանանգել էր տասնչորս ամյա մորս և իսլամացնելով՝ փակել տանը: Մորս ծնողներին, եղբայրներին, ազգ ու տակին կոտորել էին գյուղում: Այդ ամենն իրականացնողներից մեկն էլ հայրս է եղել: Մասնկուց հայր կոչված այդ մարդու հանդեպ աստելություն էի զգում, որը տարիների ընթացքում ավելի մեծացավ: Մորս բերանից եթե հանկարծ հայերեն մի բառ դուրս գար նրան անխղճաբար ծեծում էր: Ես վախի հետևանքով մինչև հինգ տարեկանս չէի կարողանում մեզս պահել. մի քույր էլ ունեի, որը մահացավ դեռ տարեկանը չլրացած: Մայրս մի օր օրորոցային էր երգում երկչոտ, դողդոջուն, թույլ ձայնով: Հայրս այդ ժամերին երբեք տանը չէր լինում, սակայն այդ օրը մեկ էլ հանկարծ գազանի նման ներխուժեց սենյակ և ձեռքով, ոտքով այնպե՛ս էր ծեծում մորս: Երբ սկսեցի վախից լացել մի քացի էլ ինձ տվեց, մի հատ էլ օրորոցին: Կատաղածի նման բղավում էր սրիկան. «Հայկական օրորոցայինո՞վ էս քնացնելու աղջկան, պոռնի՛կ»: Պարզվում է մորս երգածը հայերեն օրորոցային էր»¹⁶¹:

Վազգենի մոր մոտ քրիստոնեության գաղտնի պահպանման մասին է վկայում հետևյալ հետաքրքիր մանրամասնը. «Մորս և հորս մահճակալի վերևում, կողքի պատին, բարձի երեսի մեջ փաթաթած մի Ղուրան էր կախված: Մորս մահից հետո բացեցին և տեսան, որ

¹⁶⁰ Շաֆիականությունը իսլամական սունիական դպրոցի չորս ուղղություններից մեկն է:

¹⁶¹ Türkali V., նշված աշխ., էջ 525:

մեջը ոչ թե Ղուրան էր, այլ՝ Աստվածաշունչ: Գժվել էր այդ ստորը: Ասում էր. «Ես այս պոռնիկին չեմ թաղի մուսուլմանական գերեզմանատանը, վիրավոր մի շան նման գնում-գալիս էր»¹⁶²:

Ինչպես նշվեց, Ֆեթհիյե Չեթինի «Մեծ մայրս» հաջողված գրքից հետո Թուրքիայում սկիզբ առավ մի շարժում և ինքնության հարցում կասկածներ ունեցողներից շատերը սկսեցին փնտրել իրենց արմատները: Նմանատիպ հուշեր ունեցող մարդիկ կամաց-կամաց թոթափելով վախը՝ սկսեցին ավելի համարձակ պատմել իրենց հայ նախնիների մասին: Տասնամյակներով ձևավորված տաբուն ճաքեր տվեց. թուրքական ամենահեղինակավոր թերթերում անգամ հայկական արմատներ՝ գերազանցապես հայ տատիկներ, ունենալու թեման սկսվեց լայնորեն քննարկվել: Այս ամենի կիզակետում էր նաև Ֆեթհիյե Չեթինը, որին այցելում կամ նամակներ էին ուղարկում հարյուրավոր իր նման պատմություններ ունեցող մարդիկ: Սրա արդյունքում Չեթինը և Թուրքիայի Մաբանջը համալսարանի դասախոս, ազգագրագետ Այշե Գյուլ Ալթընայը սկսեցին հավաքել հայկական ծագում ունեցող տարբեր անձանց պատմություններ, որոնք տեղ գտան 2009 թ. նրանց կողմից հրատարակված «Թոռները» վերնագրով գրքում: Այդ գրքում ներկայացված են տարիքային տարբեր խմբերի պատկանող 25 անձանց պատմություններ: Գիրքն իրականում չի կարելի համարել գեղարվեստական ստեղծագործություն և ավելի շատ հիշեցնում է ռեպորտաժների հավաքածու, սակայն, այնուամենայնիվ, սառը փաստագրության կողքին երբեմն նկատելի են գեղարվեստական շեղումներ: «Թոռները» գրքում ներկայացված է բավական հարուստ փաստագրական շերտ, կոնկրետ անձանց՝ երբեմն ականատես-վերապրողների, հուշերը: Հարկ է նկատել, սակայն, որ ի համեմատություն Չեթինի նախորդ՝ «Մեծ մայրս» գրքի «Թոռները» չունի գեղարվեստական արժեք և երբեմն նկատելի են քարոզչական բնույթի տարրեր: Նախաբանում նշվում է, որ ցեղաս-

¹⁶² Նույն տեղում, էջ 527:

պանությունը վերապրած և հաճախ բռնի իսլամացված հայերի թոռների մեջ առկա է վախի խոր զգացում. նրանցից ոմանք խոսելով գրքի կազմողների հետ՝ հաճախ թաքցրել են իրենց իսկական անունները, ոմանք հարցազրույց տալուց հետո պահանջել են այն չստեղատրել գրքում: Հեղինակների խոսքը դիպուկ գնահատական է տալիս սերնդեսերունդ փոխանցված վախի մթնոլորտի վերաբերյալ. «Հայ պապի ցավը «անցած» մի ցավ չէր թողնի համար, երեք սերունդ հետո էլ շարունակում է ձևավորել այսօրն ու անգամ ապագան»¹⁶³: Հավաքված պատմությունները ի ցույց են հանում այն հանգամանքը, որ ցեղասպանությունից անգամ հարյուր տարի անց ապրած վախը, սարսափը շարունակում է մնալ և տարածվել վերապրողների երրորդ, չորրորդ սերունդների շրջանում: Ուշագրավ է նաև այն, որ իրենց տատերի կամ պապերի հայ լինելու փաստը տարբեր կերպ է ազդել նրանց սերունդների վրա, սակայն բոլոր դեպքերում դա համարվել է փակ թեմա, որի մասին ցանկալի չէր խոսել: Գրքում հավաքված պատմությունների աշխարհագրությունը ցույց է տալիս նաև իսլամացված հայերի սփռվածությունը: Այսպես, պատմությունները հիմնականում հավաքվել են պատմական Հայաստանի կամ նախկին հայաբնակ վայրերում ներկայումս բնակվող կրոնափոխ հայերի սերունդներից. Ադանա, Ադրյաման, Արդվին, Բինգյոլ, Դիարբեքիր, Խարբեթ, Երզնկա, Էրզրում, Կեսարիա, Մալաթիա, Մուշ, Մարդին, Սղերդ, Սեբաստիա, Թոքթաթ, Դերսիմ, Վան, Ուրֆա և այլն: Ստորև այդ գրքից ներկայացնենք մի քանի վկայություններ, որոնք ևս մեկ անգամ հաստատում և ամբողջացնում են խնդրի վերաբերյալ մեր գնահատականները:

21-ամյա Բարըշը նշում է, որ ինքը նոր է իմացել, որ մայրական տատի մայրը հայուհի է եղել՝ Աղավնի անունով, որին բռնի իսլամացնելուց հետո տրվել է Նադիրե անունը: Իր մեծ տատի մասին պատմելիս՝ Բարըշը, որպես նրա կարևոր առանձնահատկություն

¹⁶³ Altınay A., Çetin F., Torunlar, İstanbul, 2009, s. 11.

նշում է, որ Աղավնին միշտ լուռ է եղել, երբեք չի ծիծաղել և շարունակ թաց են եղել նրա աչքերը¹⁶⁴: Կարևոր վկայություն է նաև այն, որ Բարըշի հոր թուրք տատը փոքր հասակում իր թոռանը չքողարկված հպարտությամբ պատմել է, թե ինչպես է իր ամուսինը գնացել հայկական գյուղերը՝ հայերին կոտորելու նպատակով: Գրքի մեկ այլ պատմության մեջ ևս հանդիպում ենք ինքնախոստովանական մի դրվագի. մայրական կողմից հայկական արմատներ ունեցող 45-ամյա Արիֆը պատմում է, որ իր քուրդ հոր կողմը խոսելով 1915-ի մասին՝ հաճախ ասել է. «Մենք քրդերս էլ ենք սպանել հայերին, փողի համար կոտորել ենք»¹⁶⁵: Հայկական ծագում ունենալը տարբեր ընտանիքներում հաճախ կիրառվել է վիրավորական շեշտադրումներով, օրինակ՝ 22-ամյա Ռոյան պատմում է, որ իր հոր տատը հայ է եղել և երբ իր մուսուլման մայրը բարկացել է ամուսնու կամ նրա ազգականների վրա՝ նրանց վիրավորել է ասելով «հայի վիժվածքներ»¹⁶⁶: Նմանատիպ մեկ այլ օրինակ է պատմում 33-ամյա Ասլըն, որի հոր կողմն ունի հայկական ծագում, իսկ մոր կողմը քրդեր են: Ըստ նրա պատմածի. «Երբ մայրս մեր կամ հորս վրա բարկանում էր ասում էր. «ԱՄԱԼԱ-ի վիժվածքներ»»¹⁶⁷: Գրքում առկա են նաև պատմություններ, որոնք փաստում են, որ ընտանիքը կորցնելուց և բռնությամբ իսլամացվելուց հետո անգամ, շատ հայեր ձգտել են ամեն կերպ պահել իրենց ազգային նկարագիրը: 38-ամյա Գյուլչինը պատմում է, որ ցեղասպանությունից առաջ Դերիքում բնակվող իր հայրական տատը և նրա մեկ որդին մի կերպ փրկվում են կոտորածից, սակայն հետո տատին փախցնում է մի քուրդ և բռնությամբ ամուսնանում հետը: Դառնալով մուսուլմանի կին՝ խիզախ հայուհին մահվան վտանգը աչքի առաջ ունենալով՝ ամեն կերպ պահպանում է իր

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 23:

¹⁶⁵ Նույն տեղում, էջ 45:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 48:

¹⁶⁷ Նույն տեղում, էջ 164:

կրոնը և ազգային գիտակցությունը: Ավելին՝ իր փրկված տղային ամուսնացնում է իրենց նման վերապրած մի հայ ընտանիքի աղջկա հետ, որպեսզի էթնիկ նկարագիրը ևս մաքուր մնա: Մահվան մահճում անգամ նրա մոտ վառ է մնում ազգային և կրոնական ինքնագիտակցությունը և կանչելով իր հայ հարսին՝ խստորեն պատվիրում է, որպեսզի ուշադրի լինի, որ մահանալուց հետո իր մուսուլման ընտանիքը իրեն իսլամական սովորույթների համաձայն չթաղեն և նա մահանա որպես քրիստոնյա հայուհի¹⁶⁸:

Հայկական թեմատիկայի պոստմոդեռնիստական արծարծումները

Թուրքական ժամանակակից արձակում այսօր ամենահայտնի կին գրողներից է Էլիֆ Շաֆաքը (ծնվ. 1971 թ.): Նրա ստեղծագործությունները հիմնականում տեղավորվում են այսօր գերիշխող համարվող հետմոդեռնիզմի (postmodernism) գրական ուղղության շրջանակներում: 2006 թ. Թուրքիայում հրատարակվեց Էլիֆ Շաֆաքի «Հայրը և ապօրինի զավակը» վեպը, որը հետմոդեռնիզմի դիրքերից քննության է առնում Հայոց ցեղասպանությունը վերապրած ընտանիքի երկրորդ, երրորդ սերունդների կյանքն ու հոգեկերտվածքը: Այս գիրքը Թուրքիայում շատ կարճ ժամանակում դարձավ հասարակական ամենալայն շրջանակների քննարկման նյութ, ավելին՝ մեծ հնչեղություն ստացավ թուրքական քաղաքական դաշտում և սրա հիմնական պատճառն այն էր, որ վեպում քանիցս կիրառվում է ցեղասպանություն բառը և այդպիսով՝ «վիրավորում» թուրքական ինքնասիրությունը: Շաֆաքի դեմ հարուցվեց քրեական գործ Թուրքիայի ՔՕ-ի հայտնի 301-րդ հոդվածով, սակայն մեղադրյալի աթոռին հայտնված գրողը շատ տարօրինակ բացատրություն տվեց իր «հանցանքին»: Նա նշեց, որ ցեղասպանություն և այլ հակաթուրքա-

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 55:

կան մտքերի հեղինակներն իր գրքի հերոսներն են և ոչ թե ինքը: Բացի այդ նշվեց, որ գիրքը չի հավակնում լինել փաստագրական և հենց այդ նպատակով էլ վեպի ամենասկզբում հանդիպում ենք «Եղել է չի եղել...» տողերի, որոնք էլ հենց ապահովելու էին գրքի «հեքիաթային» ֆոնը: Ինչևէ, «Հայրը և ապօրինի զավակը» գիրքն արգելվեց Թուրքիայում, այն հավաքեցին գրախանութներից և այրեցին, իսկ գրողի դեմ մամուլում սկսվեց հալածանքի ալիք, սակայն, այնուամենայնիվ, Էլիֆ Շաֆաքը չդատապարտվեց: Ավելորդ չէ նշել, որ ինչպես Նոբելյան դափնեկիր Օրհան Փամուքը, այնպես էլ Էլիֆ Շաֆաքը չեն կիրառում ցեղասպանություն բառը, ավելին՝ Շաֆաքն իր բազմաթիվ հարցազրույցներում շատ հստակ ասում է. «Ես 1915-ին տեղի ունեցածները չեմ համարում ցեղասպանություն, այդ պատճառով էլ ցեղասպանություն բառը երբեք չեմ կիրառում»: Այս հարցում թուրք գրողը կիսում է պետական տեսակետը՝ դա համարելով աքսոր: Նշենք նաև, որ հայաստանյան հասարակությունում և՛ Օրհան Փամուքի, և՛ Էլիֆ Շաֆաքի դատական գործերի հետևանքով տարածվեց այն թյուրընկալումը, թե իբր այդ գրողները պայքարում են Հայոց ցեղասպանության ճանաչման համար, սակայն իրականությունն փոքր ինչ այլ է:

«Հայրը և ապօրինի զավակը» վեպում ներկայացվում է ցեղասպանությունից փրկված և ԱՄՆ-ում բնակվող հայկական ու Թուրքիայում ապրող թուրքական գերդաստանների պատմությունները, որոնք որոշակի ժամանակ խաչվում են իրար և ի հայտ է գալիս, որ այս ընտանիքներն ունեն, իրենց համար էլ անհայտ, ազգակցական կապ: Գրքում կարևոր տեղ է հատկացված հիշողությանը և դրա դրսևորումներին. այսպես, դասական սփյուռքահայի ընտանիք համարվող ամերիկաբնակ Չաքմաքչյանները մեծապես տարված են անցյալի և հատկապես ցեղասպանության հիշողություններով, ինչը երբեմն նրանց խանգարում է ապրել ներկայով: Մյուս կողմից Թուրքիայում բնակվող Քազանջը ընտանիքն է, որը չի հիշում անցյալը,

ասես չունի հիշողություն և ապրում է միայն ներկայով: Հիմնական հերոսներն այդ երկու ընտանիքներից երիտասարդ աղջիկներ են՝ ամերիկաբնակ Արմանուշ Չաքմաքչյանը և ստամբուլաբնակ Ասյա Քազանջըն: Հեղինակը շարունակ ստեղծում է այնպիսի վիճակներ, որտեղ խաչվեն հայերի և թուրքերի ճանապարհներն ու այդպիսով նրանք շփվեն իրար հետ և փորձեն հասկանալ միմյանց: Գրքի տարբեր էջերում ցայտուն դրսևորվում է հետմոդեռնիզմին հաստուկ «պատահական գուգադիպությունների» շղթան: Ավանդապահ հայկական ընտանիքի գավակ Պարսամ Չաքմաքչյանն ամուսնանում է ամերիկուհի Ռոզիի հետ և նրանից ունենում մի աղջիկ՝ Արմանուշ Չաքմաքչյանին, որին դաստիարակում են հայկական ավանդույթներով: Աղջկա դաստիարակության և մտածողության ձևավորման մեջ մեծ տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության հիշողությունը. «Հորս անունը Պարսամ Չաքմաքչյան է, մեծ քեռուս անունը Տիգրան Իսթանբուլյանը, նրա հոր անունն էլ Երվանդ Իսթանբուլյան, իմ անունն Արմանուշ Չաքմաքչյան է, ամբողջ տոհմս այսինչ այսինչյան է... Ես ցեղասպանությունը վերապրած մի տոհմի ժառանգ եմ, ում բոլոր ազգականներին 1915-ին կոտորել են մսագործ թուրքերը»¹⁶⁹, - այսպես է իրեն ներկայացնում Արմանուշ Չաքմաքչյանը: Սակայն որոշ ժամանակ անց Արմանուշի հայ հայրն ու ամերիկուհի մայրը բաժանվում են և, որպեսզի յուրահատուկ վրեժ լուծի իր հայ նախկին ամուսնու ընտանիքից, ամերիկուհի Ռոզին երկրորդ անգամ ամուսնանում է մի թուրքի՝ ԱՄՆ-ում ուսման համար գտնվող Մուսթաֆա Քազանջըրի հետ: Սա լուրջ հարված է լինում Չաքմաքչյանների գերդաստանի համար, քանի որ իրենց թոռը փաստորեն հայտնվում է թուրքի խնամակալության տակ: Հենց այդ դեպքով էլ սկսվում է «պատահական գուգադիպությունների» շղթան: Վեպի նկարագրություններից պարզ է դառնում, որ չնայած Արմանուշի խորթ հայրը լինում է թուրք, սակայն աղջիկը կարողանում է պահպանել իր հայ-

¹⁶⁹ Şafak E., Baba ve Piç, İstanbul, 2006, s. 63-64.

կական ինքնագիտակցությունը, որին նպաստում են հայրական ընտանիքի՝ Չաքմաքչյանների հետ շարունակական շփումները:

Դիպաշարային մյուս գիծը Ստամբուլում բնակվող Քազանջը ընտանիքն է, որում շատ է տարածված ճակատագրապաշտությունը և ընտանիքի տղամարդիկ միջին տարիքի հասնելուց հետո հանկարծակի մահանում են: Քազանջը ընտանիքի պապը՝ Ռըզա Սելիմը, ժամանակին զբաղվել է կաթսայագործությամբ և այդտեղից է ծագել նրանց Քազանջը (կաթսայագործ) ազգանունը: Ռըզա Սելիմը իր առաջին կնոջից ունենում է մեկ տղա՝ Լևենթ Քազանջըն, սակայն կինը որոշ ժամանակ անց լքում է իր ամուսնուն և երեխային: Քազանջը ընտանիքում այս փաստը պարուրված է եղել խորհրդավորության մշուշով և այդ մասին երբեք չի քննարկվել: Երկրորդ անգամ ամուսնանալուց հետո Ռըզա Սելիմը երեխաներ չի ունենում և հասնելով Քազանջը տոհմի տղամարդկանց համար ճակատագրական տարիքին՝ նա հանկարծամահ է լինում: Նրա որդին՝ Լևենթը, ունենում է հինգ երեխա չորս աղջիկ՝ Բանուն, Ջևրիյեն, Ֆերիդեն, Ջելիհան և մեկ տղա՝ Մուսթաֆան, որը երիտասարդ տարիքում գնում է ուսանելու ԱՄՆ-ում: Տղային հեռացնելով Թուրքիայից՝ Քազանջը ընտանիքը փորձել է «խաբել» ճակատագրին և վերջ դնել միջին տարիքում ընտանիքի տղամարդկանց տարօրինակ վախճաններին: Ստամբուլում մնացած չորս քույրերից ամենափոքրը՝ Ջելիհան տարիներ առաջ լույս աշխարհ է բերում ապօրինի մի աղջիկ երեխա՝ Ասյային, որը ևս ապրում է նրանց հետ: Քազանջըների ընտանիքում հայտնի չի լինում, թե ով է երեխայի հայրը:

Ահա այս երկու ընտանիքների ուղիները խաչվում են և ԱՄՆ-ում գտնվող Մուսթաֆա Քազանջըն ամուսնանալով Արմանուշ Չաքմաքչյանի մոր հետ՝ դառնում է Արմանուշի խորթ հայրը: Տարիներ անց Արմանուշը գաղտնի պահելով և՛ իր մորից, և՛ հորից՝ կապ է հաստատում խորթ հոր Թուրքիայում գտնվող ընտանիքի հետ ու ցանկություն հայտնում այցելել Ստամբուլ, որպեսզի գտնի իր մեծ

պապի՝ Հովհաննես Իսթանբուլյանի տունը: Ինչպես հաճախ է պատահում հետմոդեռնիստական գրականության մեջ, ինչ-որ բանի փնտրտուքը դառնում է սյուժեի հիմնական շարժիչ ուժը: Ստամբուլ այցելած Արմանուշը հյուրընկալվում է Քազանջըների տանը և սկսում շփվել իր տարեկից Ասյա Քազանջըի հետ: Ահա այս երկու աղջիկների շփման արդյունքում էլ շատ իրողություններ ի հայտ են գալիս: Գրքում հեղինակ Էլիֆ Շաֆաքը վարպետորեն պատկերել է թուրքական և հայկական հասարակությունների միմյանց հետ շփման հիմնական խնդիրները, որոնց մեջ առաջնային տեղ է զբաղեցնում Հայոց ցեղասպանության հարցը: Բացի այդ, հեղինակը ի ցույց է հանել թուրքական հասարակության անտեղյակությունը պատմության որոշակի փուլերի և մասնավորապես՝ Հայկական հարցի վերաբերյալ: Այս երևույթը աչքի է զարնում երիտասարդ հայուհի Արմանուշ Չաքմաքչյանի և Քազանջը ընտանիքի անդամների գրույցների ժամանակ: Երբ Արմանուշին հարցնում են Ստամբուլ իր այցելության իրական նպատակի մասին, նա նշում է, թե ցանկություն ունի գտնել իր տատի հոր՝ Հովհաննես Իսթանբուլյանի տունը և պարզաբանում. «Տատիս հայրը՝ Հովհաննես Իսթանբուլյանը, շատ հայտնի բանաստեղծ և արձակագիր է եղել: Հայ համայնքում մեծ հարգանք վայելող, կարևոր անձ է եղել: Ինչպես ինձ են պատմել, մեծ պապս՝ Հովհաննեսը, աշխարհում ամենից շատ սիրել է կարդալ, գրել, մտածել, սակայն ցավոք նրա անունը եղել է ցուցակում», -ասաց Արմանուշը մթնոլորտը ստուգելով: «Ի՞նչ ցուցակ», -հարցրեց Ջերիյե մորաքույրը: «Այն հայ մտավորականների ցուցակը, որոնք պետք է ոչնչացվեին: Քաղաքական լիդերներ, բանաստեղծներ, արձակագիրներ, լրագրողներ, հոգևորականներ...Ընդհանուրը՝ 234 հոգի»¹⁷⁰: Այնուհետև Արմանուշը պատմում է ցեղասպանության այլ դրվագների, աքսորի, տեղահանության, կոտորածների մասին: Հավելում է, որ այդ ամենին ենթարկվել է նաև իր տատի ընտանիքը, որը Հով-

¹⁷⁰ Նույն տեղում, էջ 169:

հաննես Իսթանբուլյանի սպանությունից հետո արքայություն է: Տատի մայրը ճանապարհին մահանում է, իսկ տատը՝ Շուշանը, կորում է: Տատի երեք եղբայրները հրաշքով փրկվում և հասնում են Լիբանան, այնուհետև սկսում են փնտրել իրենց կորած քրոջը: Ի վերջո, տարիներ անց Շուշանի ավագ եղբայր Երվանդը նրան գտնում է Ստամբուլում և տանում ԱՄՆ, որտեղ արդեն հաստատվել էին նրա ողջ մնացած ազգականները: Այս ամենը լսելուց հետո՝ Քազանջը քույրերից մեկը՝ Ջևրիյեն հարցնում է, թե ո՞վ է այդ ամենն իրականացրել, ինչին հետևում է Արմանուշի սառը և չոր պատասխանը. «Թուրքերն են արել»¹⁷¹: Գրողը հետաքրքիր է պատկերել այդ պահին նաև Արմանուշի հոգում տեղի ունեցածները. «Հետո, կամաց-կամաց հասկացավ, որ նրանցից ներողություն է սպասում, սակայն ո՛չ դա եղավ, ո՛չ էլ մեղքի ընդունումը: Չէ որ թուրքերն էին 1915-ին այդ ամենն արել հայերին, ինքն էլ հայ է, նրանք էլ թուրք, արդյոք չպե՞տք է ներողություն խնդրեին»¹⁷²: Շաֆաքը ցույց է տալիս նաև, թե այդ ամենը լսելուց հետո ինչ է մտածում Ասյան՝ որպես Արմանուշի տարեկից թուրք աղջիկ. «Ասյային իրականում հետաքրքրում էր այլ բան՝ Արմանուշի հիշողությունը: Երբեք չէր տեսել այս աստիճան **ձեր հիշողության** (ընդգծումը մերն է Ռ. Մ., Ն. Պ.) տեր մի երիտասարդի»¹⁷³: Տարեկից երկու աղջիկների՝ Արմանուշի և Ասյայի երկխոսության միջոցով վեր են հանում երկու հասարակությունների մտածելակերպերի և մտեցումների տարբերությունները: Այսպես, Արմանուշը խոսում է սուլթան Աբդուլ Համիդ երկրորդից, պանթուրքիզմից, պանիսլամիզմից, 1909 թ. Ադանայի կոտորածից և ի վերջո 1915-ից և հարցնում Ասյային. «Սրանք քեզ ինչ որ բան ասո՞ւմ են: Երբևէ լսե՞լ ես Հայոց ցեղասպանության մասին»¹⁷⁴, ինչին ի պատաս-

¹⁷¹ Նույն տեղում, էջ 172:

¹⁷² Նույն տեղում:

¹⁷³ Նույն տեղում, էջ 173:

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 185-186:

խան Ասյան ասում է. «Ես ընդամենը տասնինը տարեկան եմ» և հավելում «Դու պատմության գերին ես դարձել»¹⁷⁵: Հատկանշական է, որ աղջիկները միմյանց վիրավորելու համար կիրառում են պատմություն և հիշողություն եզրերը. Արմանուշը Ասյային համարում է հիշողությունից զուրկ, պատմությունից անզետ մարդ, իսկ Ասյան Արմանուշին մեղադրում է, որ նա ֆետիշացրել է հիշողությունը: Նրանց բանավեճի սահմաններն ավելի են լայնանում, երբ Ասյան Արմանուշին ծանոթացնում է իր ընկերների հետ: Ասյայի ընկերներին հեղինակը չի կոչում անուններով, այլ տալիս է նրանց մասնագիտությունը, կողմնորոշումը բնութագրող անուններ, օրինակ՝ Հարբեցող Ծաղրանկարիչ, Կյանքի Հետ Անհաշտ Կին, Ուլտրաազգայնամուլական Ֆիլմերի Ոչ Ազգայնամուլ Սցենարիստ, Արտասովոր Անտադանդ Բանաստեղծ, Ծպտյալ Համասեռամուլ Մյունակագիր և այլն: Ասյան և Արմանուշը հիշյալ հերոսների հետ հանդիպում են սրճարանում և որոշ ժամանակ անց բացվում է Հայոց ցեղասպանության թեման, որին ներկաները տարբեր կերպ են արձագանքում: Ուլտրաազգայնամուլական Ֆիլմերի Ոչ Ազգայնամուլ Սցենարիստը պնդում է, որ նման բան չկա և առաջ քաշում թուրքական պաշտոնական թեզը, թե հայերն էլ կոտորել են թուրքերին: Ջրույցի մասնակիցներից ոմանք խոստովանում են, որ մանրամասներ չգիտեն այդ թեմայի վերաբերյալ և, միգուցե, Արմանուշի տեսակետները համապատասխանում են իրականությանը: Ջրույց-քննարկումը հետզհետե թեժանում է և վերածվում ծեծկռտուքի հենց թուրքերի միջև: Սրանով Շաֆաքը, փոքր ինչ այլաբանորեն, ձգտել է ներկայացնել թուրքական հասարակության մեջ վերջին տարիներին նկատվող հայացքների, տեսակետների բախումը, այսինքն՝ այս բանավեճը և տուրուղմիոցը, ինչ-որ տեղ, Թուրքիայում Հայկական հարցի վերաբերյալ քննարկումների մանրապատկերն է հիշեցնում: Բացի իրական քննարկումներից, հայ-թուրքական հարաբերությունները վեպի

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 186:

հերոսուհի աղջիկները քննարկում են նաև համացանցային ֆորումում:

Գրքում սյուժետային գիծը երբեմն ընդհատվում է և հեղինակը նկարագրում է շուրջ 100 տարվա վաղեմության դեպքեր, Արմանուշի տատի հոր՝ Հովհաննես Իսթանբուլյանի կյանքը, մտորումները, գրույցները, տատի ընտանիքի աքսորի տեսարանները և այլն:

Արմանուշի ԱՄՆ-ում բնակվող ծնողներ այս ընթացքում պարզում են, որ իրենց աղջիկը գտնվում է Թուրքիայում և իրենց խաբել է հորը ասելով, թե գնում է մոր մոտ, իսկ մորը՝ հակառակը: Արմանուշի մայրը իր երկրորդ ամուսնու՝ Մուսթաֆա Քազանջըի հետ անմիջապես պատրաստվում է ԱՄՆ-ից գնալ Թուրքիա և հետ բերել աղջկան: Սա դառնում է մեծ իրադարձություն Քազանջը ընտանիքի համար, քանի որ իրենց տոհմի միակ տղամարդը՝ Մուսթաֆան 20 տարի առաջ մեկնելով ԱՄՆ՝ երբեք չի այցելել նրանց և հիմա 20 տարի անց նա դեպքերի բերումով վերադառնում է Թուրքիա: Գրքի վերջում բացահայտվում են երկու ընտանիքներին իրար կապող և նաև Քազանջը ընտանիքին վերաբերող մեծ գաղտնիքները: Նախ՝ Քազանջը քույրերից մեկը՝ Բանուն, որն ուներ պայծառատեսի հատկություններ, կարողանում է պարզել, թե ով է իր քրոջ՝ Զելիհայի ապօրինի աղջկա՝ Ասյայի հայրը. պարզվում է, որ երիտասարդ ժամանակ իր քրոջը «պատահաբար» բռնաբարել է հարազատ եղբայրը՝ Մուսթաֆան և հենց նա է Ասյայի հայրը: Վերադառնալով Մտամբուլ՝ Մուսթաֆան շատ կարճ ժամանակ անց հիվանդանում է և արագ մահանում, այդպիսով՝ շարունակելով Քազանջն ընտանիքի տղամարդկանց ճակատագիրը: Նրա մահով ճակատագրապաշտությունը էլ ավելի ազդեցիկ է դառնում Քազանջն ընտանիքում, քանի որ նրանց կարծիքով հենց ճակատագիրն էր Մուսթաֆային իրենց ընտանիքի տղամարդկանց համար «վտանգավոր» տարիքում հետ բերել Մտամբուլ: Մինչ այդ, ԱՄՆ-ում մահանում է նաև Արմանուշի տատը՝ Շուշան Իսթանբուլյանն և գրողը կրկին խախտելով

դեպքերի բնականոն զարգացումը՝ տեղափոխվում է 20-րդ դարի սկզբները և պատմում, որ Շուշան Իսթանբուլյանը աքսորի ժամանակ կորում է, այնուհետև նրան վերցնում են որբանոց և անվանափոխելով՝ կոչում Շերմին: Տարիներ անց որբանոցում նրան պատահաբար հանդիպում է իր քեռու՝ կաթսայագործ Լևոնի նախկին աշկերտ է Ռըզա Սելիմ Քազանջըն, որն անմիջապես ճանաչում է իր վարպետի զարմուհուն և վերցնում նրան: Ռըզա Սելիմն այնուհետև կրոնափոխ է անում Շուշանին և ամուսնանում նրա հետ: Որոշ ժամանակ անց նրանք տղա երեխա են ունենում, որին՝ ի պատիվ իր վարպետի, Ռըզա Սելիմը ցանկանում է անվանել Լևոն, սակայն անձնագրային բաժանմունքում այն պատճառաբանությամբ, թե դա մուսուլմանական անուն չէ երեխային կոչում են ոչ թե Լևոն, այլ Լևենթ Քազանջը: Այդ ընթացքում, ցեղասպանությունից փրկված և ԱՄՆ-ում հաստատված Երվանդ Իսթանբուլյանը գալիս է Ստամբուլ, գտնում քրոջը՝ Շերմին Քազանջը դարձած Շուշան Իսթանբուլյանին և առաջարկում իր հետ գնալ ԱՄՆ: Մի քանի օր հոգեկան ծանր ապրումների և մտածմունքներից հետո՝ Շուշանը որոշում է լքել իր մուսուլման ամուսնուն ու նրանից ծնված երեխային և փախչել Ամերիկա: Ինչպես նշում է հեղինակը. «Ձեռք բերած նոր անունը, նոր կրոնը, նոր ազգությունը, նոր ընտանիքը, նոր ինքնությունը չէին կարողացել ջնջել նրա անցյալը»¹⁷⁶: Շուշանը գաղտնի հեռանում է և թողնում մի նամակ, որով բացատրում է ամեն ինչ և ամուսնուց խնդրում թողություն տալ իր մեղքերին:

Փաստորեն՝ զուգահեռ ընթացող պատմությունները նմանատիպ հանգուցալուծում են գտնում և պարզվում է, որ գլխավոր հերոսներ Արմանուշ Չաքմաքչյանը Շուշան Իսթանբուլյանի թոռն է, իսկ Ասյա Քազանջըն Շուշանի՝ ծոռը: «Հայրը և ապօրինի զավակը» գիրքը, միևնույն ժամանակ, փաստում է, որ իսլամանալու գնով վերապրած հայուհիների ճակատագրերի մասին պատմող զուտ նկա-

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 342:

րագրողական, փաստագրական գրքերից բացի, այդ թեման դառնում է իրական գեղարվեստի նյութ և պայմանավորում թուրքական գրականության մեջ հայկական թեմատիկայի հաստատումն ու զարգացումը:

Թուրք հայտնի գրող, արվեստաբան, ՄԱԿ-ի և Յունեսկո-ի դեսպան Զյուլֆու Լիվանելիի 2011 թվականին հրատարակված «Մերենադ» վերնագրով վեպը շատ արագ հայտնվեց ընթերցողների և մասնագետների ուշադրության կենտրոնում: Գիրքը հայտնի գրողի հաջողված ստեղծագործություններից կարելի է համարել, որտեղ ուշագրավ սյուժետային առանցքի մեջ ներառված են և՛ պատմական որոշ անցքեր, և՛ այդ անցքերի դեդեկտիվ ուսումնասիրությունը: Բացի այդ, դեպքերի ետնաբեմում կա ռոմանտիկ ու դժբախտ սիրո՝ տասնամյակներ առաջ տեղի ունեցած պատմության, նկարագրում: Վեպում առկա են նաև պոստմոդեռնիզմի ուղղության որոշակի և ցայտուն դրսևորումներ: Գրքի շուրջ քննարկումներում կամ հողվածներում նշվում էր, որ այն, ինչ որ առումով, վերաբերում է հայկական թեմատիկային, սակայն վեպի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ոչ թե հայկական թեմատիկային է վերաբերում, այլ հայերի նկատմամբ թուրքական բռնապետական քաղաքականության շարունակականության մի դրվագի վեր հանումը դարձել է գլխավոր հերոսի կերպավորման և նրա գործողությունների շարժառիթի ներկայացման հիմքերից մեկը: Հեղինակը գլխավոր հերոսին ըմբոստ, արդարամիտ ներկայացնելու համար նրա կերպարին հաղորդել է որոշ չափով հայկական ծագում ունենալու հանգամանք:

Գրքում դեպքերը պատմվում են մեծ մասամբ գլխավոր հերոսի՝ Ստամբուլի համալսարանի ռեկտորի օգնական տիկին Մայայի կողմից, ընդ որում՝ ընտրված է բավական հետաքրքիր մեթոդ. հերոսը հետագայում պարզվում է, որ որոշում է գրի առնել իր հետ պատահածը և այն սիրո ռոմանտիկ պատմությունը, որի հանգուցալուծմանը նա մասնակցել է: Գիրքը շարադրվում է Ֆրանկֆուրտից դեպի

Բոստոն ինքնաթիռի մեջ՝ օդային երկար ճամփորդության ընթացքում: Դիպաշարի հիմնական առանցքը ԱՄՆ-ից Ստամբուլի համալսարան՝ որպես հրավիրյալ պրոֆեսոր ժամանած Մաքսիմիլիան Վազների հետ կապված առեղծվածային և գաղտնիության քողով պատված պատմությունն է: Ռեկտորի օգնական Մայան հայտնվում է իրադարձությունների կիզակետում, քանի որ նախ նրան է հանձնարարվում դիմավորել և ուղեկցել հյուրին, և երկրորդ՝ նրանց շփումները կարճ ժամանակում վերածվում են բարեկամականի: Դրանից հետո Մայան ակամայից դառնում է պրոֆեսոր Վազների անձնական գաղտնիքի կրողը, ավելին՝ սկսում է տարվել այդ թեմայով և գնում տարբեր գոհողությունների խնդրի հանգուցալուծմանը հասնելու համար: Դիպաշարային ոչ աստիճանական զարգացումը, ժամանակային տարբեր հարթությունների շարունակական միահյուսումը ընթերցողին ցույց է տալիս, որ հերոսուհի Մայայի համար պրոֆեսոր Վազների պատմությունը և գաղտնիքը դարձել են ոչ միայն նրա հետագա կյանքի վրա ազդող լրջագույն գործոն, այլև պատճառ են դարձել այս վեպի ծնունդի, որի հեղինակը փաստորեն հենց Մայան է: Այստեղ ցայտուն երևում է պոստմոդեռնիստական «դասական հեղինակի բացակայության» մեթոդը, որի պարագայում գրքի հերոսներից մեկը դառնում է և՛ հերոս, և՛ գրքի հեղինակ:

Վարպետորեն և հետզհետե դետեկտիվ տարրերի համադրմամբ կառուցված դիպաշարից պարզ է դառնում, որ պրոֆեսոր Վազները Թուրքիա այցելում է ոչ առաջին անգամ. նա 1940-ականներին կրկին եղել է Ստամբուլում և հենց այդ քաղաքում կամ դրա մերձակա ջրային տարածքներում է թաքնված Վազների գաղտնիքի ռոմանտիկ և միևնույն ժամանակ կարևոր բաղադրիչը: Պարզվում է, որ գերմանացի երիտասարդ գիտնական Վազները 1930-ականների վերջին սիրահարվում և ամուսնանում է ազգությամբ հրեա Նադիային: Սակայն Գերմանիայում սկսված հակահրեական հետապնդումների պատճառով նրանք որոշում են հեռանալ Թուրքիա, որտեղ

Վազներին հրավիրել էին դասավանդելու: Սահմանային ուղեկալում Վազների հրեա կնոջը գեստապոյականները հանկարծակի ձերբակալում չնայած որ նա փոխել էր ազգանունը: Հանկարծակիի եկած Վազները ստիպված շարունակում է ճանապարհը, հասնում Թուրքիա ու զբաղվում կնոջը գտնելու և ազատելու հարցերով: Ավելի ուշ պարզ է դառնում, որ Նադիայի ընտանիքը հեռանում է Ռումինիա, իսկ այնտեղից էլ հայտնի «Ստրումա» նավով ուղևորվում դեպի Պաղեստին: Պրոֆեսոր Վազները ծրագրում է կնոջը հանդիպել Ստամբուլում և ի վերջո վերագտնել ընտանեկան նոր ձևավորվող երջանկությունը: Սակայն ինչպես հայտնի է, լրջագույն տեխնիկական խնդիրներ ունեցող նավը Բոսֆորի նեղուցում, Ստամբուլի մերձակայքում փչանում է և թուրքական իշխանությունները թույլ չեն տալիս ուղևորներին իջնել նավից: 1942 թ. փետրվարի 24-ին նավը անհայտ պայմաններում խորտակվում է և բոլոր ուղևորները բացառությամբ մեկի զոհվում են: Սա թուրքական կառավարության հակամարդկային քայլերից էր, որը նաև հենված էր թուրք-գերմանական սերտ հարաբերությունների տրամաբանության վրա, ինչի պարագայում հակահրեական քաղաքականությունը նման դրսևորում ունեցավ: Նավի զոհված ուղևորների մեջ է լինում նաև Վազների երիտասարդ կինը, ում փրկելու բոլոր ջանքերն անարդյունք են ավարտվում: Գերմանացի գիտնականը ընկնում է լրջագույն հոգեբանական խնդիրների մեջ և ի վերջո, արտաքսվում է Թուրքիայից:

Գրքի վերնագիրը՝ Մերենադը, այն երաժշտությունն է, որը Վազները նվիրում է իր կնոջը և նվագում նրա համար: Տարիներ անց գալով Թուրքիա՝ Վազները խնդրում է Մայային իրեն տանել Ստամբուլի ծովափնյա շրջաններից մեկը, որտեղ նայելով Բոսֆորի ջրերին սկսում է ջութակով նվագել մի մեղեդի, որը պարզվում է իր վաղամեռիկ կնոջը Նադային նվիրված սերենադն է: Ծովափին պրոֆեսոր Վազները ցրտից գրեթե կորցնում է գիտակցությունը և Մայան նրան մի կերպ տեղափոխում է հիվանդանոց: Դրանից հետո է, որ պրոֆե-

սորը սկսում է Մայային պատմել իր կյանքի պատմությունը, «Ստրումա» նավի դեպքը, իսկ ծովափնյա այն վայրը, որտեղ նա խնդրել էր տանել իրեն Բոսֆորի հենց այն հատվածն է, որտեղ ջրատույզ է եղել «Ստրուման»: Մայան ամբողջովին տարվում է Վազների պատմությամբ, իրեն նվիրում է այդ դեպքի հետ կապված տարբեր դետալների վեր հանման գործին, այցելում Գերմանիա, ԱՄՆ, կատարում, ըստ էության, հետաքննություն և կարողանում իրար կապել փաստերն ու ստանալ ամբողջական պատկեր: Ավելի ուշ նա այցելում է արդեն ԱՄՆ վերադարձած և հիվանդանոցում գտնվող պրոֆեսոր Վազներին, պատմում իր ձեռք բերած փաստերի մասին ու հետո ի կատար ածում նրա վերջին ցանկությունը. ծանր հիվանդ Վազները շուտով մահանում է և Մայան համաձայն նրա կտակի վերջինիս աճյունասափորը բերում և լցնում է Բոսֆորի ջրերի մեջ ճիշտ այն հատվածում, որտեղ 1942 թ. սուզվել էր «Ստրումա» նավը: Դրանով տասնամյակներ անց Մայան ասես փորձում է «վերամիավորել» Վեզներին և Նադիային:

«Մերենադ» վեպում առկա հայկական թեմատիկ ենթաշերտը սկսվում է այն պահից, երբ թուրքական հատուկ ծառայությունների աշխատակիցները պահանջում են Մայայից իրենց տեղեկություն տալ պրոֆեսոր Վազների մասին, քանի որ նա ժամանակին արտաքսված է եղել Թուրքիայից և համարվում էր կասկածելի: Մակայն Մայան խուսափում է ենթարկվել հետախուզական ծառայության աշխատակիցների կարգադրություններին և նրանք սկսում են շանտաժի լեզվով խոսել: Մասնավորապես՝ աշխատակիցներից ավագը հարցնում է, թե արդյոք Մայան ունի համապատասխան անցյալ, որը նրան թույլ կտար աշխատել Ստամբուլի համալսարանի պես հեղինակավոր կառույցի ռեկտորի օգնական¹⁷⁷: Դրանից հետո ակնարկում են, որ գիտեն, թե նրա հայրական տատը հայ է և եթե իրենց հետ չհամագործակցի, ապա այդ մասին կհայտնեն իր աշխատա-

¹⁷⁷ Livaneli Z., Serenad, İstanbul, 2011, s. 77.

վայրում: Այսինքն՝ հեղինակը շատ հստակ ի ցույց է դնում, որ հայկական ծագում ունենալը վատ և պարսավելի երևույթ է ոչ միայն Թուրքիայի պետական համակարգի ընկալմամբ, այլև հասարակության լայն շերտերի՝ այդ թվում և համալսարանական շրջանակների համար:

Այս միջադեպը նկարագրելուց հետո հեղինակը սկսում է անդրադառնալ հերոսուհու տատի առեղծվածային կյանքի համառոտ պատմությանը, որը նա իր թոռանը, Ժանրի կանոններին հավատարիմ, պատմել էր կյանքի վերջին տարիներին: Տատը առողջական խնդիրներ է ունենում և նրան տեղափոխում են զինվորական հոսպիտալ, քանի որ թոռը այսինքն՝ Մայայի եղբայրը բարձրաստիճան սպա է եղել: Անհրաժեշտ ստուգումներից հետո հիվանդին է այցելում հոսպիտալի գլխավոր բժիշկը և որոշ հարցեր տալիս և այդ ընթացքում էլ հենց պարզվում է տատի գաղտնիքը կամ դրա մի մասը: Բժիշկը որպեսզի պարզի հիվանդության ժառանգականության հարցը հարցնում է, թվում է թե, պարզ մի հարց. «Ինչի՞ց են մահացել ձեր ծնողները»¹⁷⁸: Տատը լռել է և այդ լռությունը բավական երկարել է, բժիշկը կրկին հարցրել է և նորից պատասխան չի ստացել: Արդեն բավական կոպիտ տոնով հարցին նույնպես տատը չի պատասխանել, այլ ընդամենը դեմքի խեղճ արտահայտությամբ նայել է և սկսել արտասվել: Որոշ ժամանակ անց տատը ի վերջո ուժ հավաքելով՝ կարողացել է պատասխանել. «Նրանք ոչ մի հիվանդությունից էլ չեն մահացել»: Եվ այդ բառերը ասելիս ձայնում հանդիմանանքի տոն է նկատվել ու բժշկի հարցին ի պատասխան, թե ինչ է դա նշանակում, տատը բարկացած և կրակոտ աչքերով պատասխանել է. «Պարոն բժիշկ, հորս և մորս սպանել են: Նրանք չկարողացան այնքան մեծանան, որ հիվանդությունից մեռնեն»¹⁷⁹: Այնուհետ տատը, ասես ինքն իր հետ խոսելով՝ արտասանում է բառեր, որոնք երկար տարիներ

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 89:

¹⁷⁹ Նույն տեղում, էջ 90:

չէին ջնջվելու հերոսուհու՝ Մայայի հիշողությունից. «Եթե այնուամենայնիվ ինչ-որ հիվանդություն եք փնտրում, ապա դա նրանց սպանած մարդ արարածի դաժանությունն է»¹⁸⁰: Այս տեսարանին, որի ժամանակ թոռան մտքում, բնականաբար, առաջանում են հարցեր, հետևում է ժանրի համար կրկին դասական դարձած տատի խոսքն ուղղված թոռանը. «Այն, ինչ մինչև այսօր ոչ մեկին չեմ պատմել քեզ կպատմեմ»¹⁸¹: Դրան հետևում է բնականաբար գլխավոր հերոսուհու ապրած շուրջ, ցնցումը, որ այն մարդը, ում թվում է, թե ճանաչել է, իրականում ուրիշն է և ամբողջ կյանքում կրել է մի մեծ գաղտնիք, որը չի կարողացել և չի ուզել կիսել որևէ մեկի հետ:

Պարզվում է տատը եղել Ակնից, ունևոր հայ ընտանիքից և վեց տարեկան հասակում նրանց ողջ գերդաստանին, ինչպես նաև բոլոր հայերին, աքսորել են ու նրա մայրը իրեն և եղբայրներին ի պահ է տվել մուսուլման հարևաններին, քանի որ վստահ չի եղել, թե աքսորի ճանապարհին կարող էին դիմանալ և ապրել: Մակայն որոշ ժամանակ անց պետության պահանջով և սպառնալիքով թաքցված հայ որբերը հանձնվել են պետությանը և տատին՝ Մարիին անվանափոխելով Սեմահաթ տեղափոխել են Ստամբուլի որբանոցներից մեկը: Այդ ընթացքում նրան բաժանել են իր եղբայրներից և այլևս որևէ տեղեկություն նրանցից չի կարողացել ստանալ: Տարիներ անց գնալով Ակն՝ հանդիպել է իրեն ապաստանած մուսուլման հարևաններին և պարզել, որ իր ծնողներին ու հայերի քարավաններին քաղաքի մոտակա մի վայրում չեթեները կոտորել են և ոչ մեկը չի փրկվել¹⁸²: Ավելի ուշ մուսուլման մի ընտանիք նրան որդեգրել է որբանոցից և ամուսնացրել. բնականաբար փոխել են Մարիի կրոնը, իսլամացրել և դա գրանցվել է համապատասխան փաստաթղթերում և կառույցներում: Զրույցի հաջորդ օրը տատը թոռանը հանձնում է իր գրողի

¹⁸⁰ Նույն տեղում, էջ 91:

¹⁸¹ Նույն տեղում:

¹⁸² Նույն տեղում, էջ 92-93:

բանալին և նշում, որ այնտեղ է պահում այն իրը, որը մայրը մինչև արքայազնը նվիրել է իրեն և ուզում է, որ դա լինի նվեր իր նախնիներից Մայային: Այսինքն՝ այս պարագայում ևս տատը իր համար սրբազան իրը փոխանցելու համար հարմար է գտնում այն թոռանը, որին վստահում է: Դրանից մեկ շաբաթ հետո տատը հիվանդանոցում վախճանվում է և Մայան բացելով գրքոցը՝ գտնում է մի վզնոց և հին խաչ, որը տատը տասնամյակներ շարունակ պահել է: Փաստորեն՝ տատը փաստաթղթերով լինելով մուսուլման, ինչ որ կերպ գաղտնի պահել է կապ և հիշողություն քրիստոնեության հետ և իր խոսքում էլ թոռանը ի պատասխան, թե նա մուսուլման է, պաս է պահում և մզկիթ գնում, ասել է. «Բոլորը նույն Աստծուն չե՞ն աղոթում, աղջիկս, լինի դա եկեղեցում, թե մզկիթում: Ի՞նչ տարբերություն»¹⁸³: Սակայն տատը իրավացի էր և իր կապվածությունը թոռներից հենց Մայայի հետ արդարացված է, քանի որ մյուս թոռը՝ Մայայի եղբայրը իմանալով տատի հայ լինելու մասին լուրը՝ տխրել է նախ, որ դա կազդի իր զինվորական ծառայության վրա, և մյուսը ըստ պետական քարոզչության, որի ազդեցության տակ է եղել նա. «Իրենց արյունը փչացած է»¹⁸⁴: Գլխավոր հերոսուհու՝ Մայայի ընդդիմադիր կերպարը, նկարագիրը ի հայտ է գալիս տարբեր դրվագներում, ներքին մենախոսությունների ժամանակ և տարիներ հետո էլ նա քննադատում է իր բարձրաստիճան զինվորական եղբորը՝ տատի հայկական ծագման վերաբերյալ ունեցած բացասական վերաբերմունքի համար¹⁸⁵, ինչին եղբայրը պատասխանում է թուրքական պաշտոնական քարոզչության կաղապարված թեզերով¹⁸⁶:

Ամփոփելով նկատենք, որ «Մերենադ» գրքում Հայոց ցեղասպանության խնդիրը ներկայացվում է ի թիվս այլ ողբերգությունների և

¹⁸³ Նույն տեղում, էջ 94:

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 95:

¹⁸⁵ Նույն տեղում, էջ 144:

¹⁸⁶ Նույն տեղում, էջ 146-147:

դա հեղինակի գիտակցված նախընտրությունն է, ինչի մասին վերջինս պատմել է «Ակոս» շաբաթաթերթին տված հարցազրույցում¹⁸⁷:

***Թեմայի հետագա զարգացումը.
Թույլ գեղարվեստականության և էժանագին
քարոզչության դրսևորումները***

Հայոց ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացված հայերի և հատկապես հայ կանանց և աղջիկների մուսուլմանների հետ ամուսնացնելու հարցը թուրք գրականության մեջ դարձավ, ինչպես արդեն նշել էինք, մոդայիկ՝ իր վրա բևեռելով ոչ միայն ձիրք ունեցող գրողներին և անձանց, այլև մարդկանց, ովքեր հետևելով մոդային և ունենալով կամ ծանոթ լինելով նմանատիպ պատմությունների փորձեցին հայտ ներկայացնել գրականության ասպարեզում: Մինչույն ժամանակ հրատարակված որոշ գրքերում հստակ երևում է թուրքական պաշտոնական թեզի ու քարոզչության տարրերը. մասնավորապես այն, թե իբրև հայերն ու մուսուլմանները շատ լավ հարաբերություններ են ունեցել, որ հայերի բռնի իսլամացումը երկու հասարակությունների միջև ոչ թե խնդիրներ է առաջացրել, այլ առիթ է դարձել բարիդրացիական հարաբերությունների դրսևորման համար: Այսինքն՝ հայ երիտասարդ աղջիկներին և կանանց բռնի ամուսնացնելը մուսուլմանների հետ, նոր ինքնության պարտադրումը համարվել է հայերի և կոնկրետ հայ աղջիկների նկատմամբ բարյացկամ տրամադրության դրսևորում: Նմանատիպ մի քանի գրքերից կարելի է առանձնացնել 2014 թ. Թուրքիայում հրատարակված Այսել Քըլըչ Քարալըի «Վարդանուշի Ալին» վեպը, որը թերևս առանց որևէ հիմքի հավակնում է կոչվել փաստագեղարվեստական: Վեպում պատմվում է արաբկիրցի Գանձանակյան ընտանիքից Վար-

¹⁸⁷ Zülfü Livaneli: Geçmiş “Olmuş bitmiş canım, unut!” demekle unutmaz, Agos, 01, 04, 2011.

դանուշի մասին, ով հենց իր հարսանիքի օրը ամբողջ ընտանիքով և գյուղով ենթարկվում է արքայի: Այդ ճանապարհին գավառապետը տեսնելով, որ նա հարսի շորով է առանձացնում է նրան քարավանից և տանում իր տուն որպես աղախին: Այս դրվագը ներկայացվում է որպես թուրքական բարյացկամության և բարեգթության օրինակ: Որոշ ժամանակ անց Վարդանուշին կրոնափոխում են և տալիս կնության իրենից մոտ 20 տարի մեծ մուսուլման մի գյուղացու, որի կինը մահացած է լինում: Կենցաղային և երբեմն նատուրալիստական դրվագներով գերհագեցած, հակազեղարկեստական այս գրքում ներկայացվում է նաև Վարդանուշի (անվանափոխված Սուլթանի) ծանր կյանքը մուսուլման ամուսնու տանը, նրա անվերջ հալածանքները, բռնությունները և այս ամենի մեջ ուշադրության արժանի են միայն այն դրվագները, երբ նկարագրվում է ամուսնու կողմից Վարդանուշի հայկականության և հայկական կենցաղի հետ կապված հիշողությունների պատճառով հալածանքները: Գրքում հանդիպում են նաև մի քանի այլ հայ կերպարներ, որոնք ցեղասպանությունից փրկվել են կրոնափոխ լինելու միջոցով, քանի որ ունեցել են բժշկի կամ այլ պետքական մասնագիտություն¹⁸⁸:

Գեղարվեստական արժեք չունեցող այս գրքում հերոսը՝ բռնի իսլամացված Վարդանուշը շնորհակալություն է հայտնվում իրեն «փրկած» գավառապետին, որը նրան հանել է արքայալ հայերի քարավանից¹⁸⁹: Նմանատիպ հնարքներով զիրքը դառնում է նաև թուրքական էժանագին քարոզչության դրսևորման հարթակներից մեկը: Այս վեպում երբեմն ի հայտ են գալիս հայերի ձուլման շարունակականության որոշ օրինակներ նաև կենցաղային մակարդակում, երբ բացի պետական ծրագրված քաղաքականությունից հարցին միջամտում են հայ կանանց և աղջիկներին առևանգած ու նրանց հետ ամուսնացած մուսուլմանները: Հայկական թեմատիկայով գրված

¹⁸⁸ Karsh A. K., Vartanus'un Ali'si, İstanbul, 2014, s. 72.

¹⁸⁹ Նույն տեղում, էջ 84:

փաստագեղարվեստական գրականության մեջ այդ «ամուսինների» կերպարներին հատուկ է իրենց կանանց մոտ հայկականության հետ կապված բոլոր տարրերի հետևողական արգելումը և ոչնչացումը. բացի այդ, նրանք հետամուտ են, որպեսզի իրենց երեխաներին ևս որևէ հայկական սովորություն չփոխանցվի: Կարսլի գրքում նման դրվագ կա, երբ Իսմայիլը կնոջը ծեծում է և խստորեն զգուշացնում իր երեխաներին չսովորեցնել «հայերեն և քրիստոնեություն»¹⁹⁰: Տղամարդկանց այս պահվածքը նաև արտացոլումն է այն երևույթի, որ հենց իրենց առևանգած և բռնի կրոնափոխած հայերին անգամ նրանք չեն ընդունել որպես իրական մուսուլման և շարունակ կասկածով են վերաբերվել: Այդ հանգամանքը նաև ստիպել է բռնի իսլամացված հայուհիներին վարել գաղտնի ու տրավմատիկ կենցաղ:

«Վարդանուշի Ալին» գրքում մեկ-երկու դեպքում հանդիպում ենք հոգեբանական իրավիճակ ներկայացնող և որոշակի հուզականություն արտահայտող տողեր, որոնք էլ հենց կարելի է համարել վեպի միակ և եզակի հաջողված տողերը: Օրինակ՝ հեղինակը նկարագրում է Վարդանուշի մահից տարիներ հետո նրա որդու՝ Ալիի և մորաքրոջ այսինքն Վարդանուշի քրոջ՝ Ջեմիլեի հանդիպումը: Ջեմիլեն նույնպես քսոթի ճանապարհին առևանգվել և բռնությամբ իսլամացվել է: Հեղինակը փոքր ինչ սենտիմենտալ, սակայն այնուամենայնիվ հաջողված պատկերում է ներքին հոգեբանական վիճակի մի բաղադրիչ. «Երկուսն էլ միմյանց դեմքերի վրա փնտրում էին Վարդանուշի հետքերը»¹⁹¹:

Այսպիսով «Վարդանուշի Ալին» գիրքը գալիս է լրացնելու թուրք գրականության մեջ հայկական թեմատիկայով գրված այն գրքերի ցանկը, որոնք ունեն ավելի պարզունակ, ոչ գեղարվեստական բնույթ և լի են էժան քարոզչական հնարքներով:

¹⁹⁰ Նույն տեղում, էջ 94:

¹⁹¹ Նույն տեղում, էջ 176:

2013 թ. Ստամբուլում տպագրված Ահմեթ Աբաքայի «Հոշանայի վերջին խոսքը» գիրքը, որն արդեն ունեցել է երկրորդ հրատարակությունը, նույնպես բավական մեծ աղմուկ բարձրացրեց մամուլում: Գրքում հեղինակը պատմում է իր մոր՝ Հոշանայի կյանքի գաղտնիքը, որը գրեթե չի տարբերվում համանման ճակատագիր ունեցող կանանց մասին պատմող գրքերում առկա պատմություններից: Հենց նախաբանում հեղինակը փաստում է, որ իր մոր դեպքը եզակի չէ և որ «մեր երկրում հազարավոր Հոշանաներ են եղել»¹⁹²: Աբաքայը հավելում է, որ մոր գաղտնիքը հրապարակելուն իր ազգականների մի մասը բացասաբար է վերաբերվել: Բռնի իսլամացված հայուհիների պատմություններին հատուկ մի քանի բնորոշ գիծ ակնհայտ է այս գրքում ևս: Նախ, ինչպես նշում է հեղինակը, մայրը 82 տարի շրջապատից ու ընտանիքից թաքցրել է իր գաղտնիքը, իր հայկական ծագումը¹⁹³: Այս պատմության մեջ որպես գաղտնիներ հանդես է գալիս ոչ թե թռուներից մեկը, այլ կրտսեր որդին՝ Ահմեթ Աբաքայը: 2001 թ. Հոշանան իրեն այցելած կրտսեր որդուն ցածրաձայն սկսում է պատմել իր կյանքի գաղտնիքը և սկսում է այդ պատմությունը հետևյալ կերպ. «Ահմեթ, գիտե՞ս իմ մոր հայրը հայ էր»¹⁹⁴: Մակայն դրան հետևած որդու հարցերը մորը հասցնում են լարված իրավիճակի և 82-ամյա կինն ասում է այն նույն խոսքերը, որոնք սովորական են իր նման ճակատագիր ունեցող մյուս հայուհիների համար և որոնք բխում են շարունակական վախից. «Մինչև իմ մեռնելը այս մասին ոչ մեկի հետ մի խոսիր, իմ մեռնելուց հետո ինչ ուզում ես արա: Կարծեցի թե դու նորմալ մարդ ես դրա համար ասացի, հիմա լռիր, ձայնդ կտրիր»¹⁹⁵: Ինչպես պարզվում է մոր կցկտուր պատմածից, ցեղապանության ժամանակ նրա մայրը հղի է եղել իրենով: Խուսափելու համար սպանողից իրենց գյուղի ժողովուրդը բռնել է գաղթի ուղին,

¹⁹² Abakay A., Hoşana'nın Son Sözü, İstanbul, 2013, 2-inci Baskı, s. 7.

¹⁹³ Նույն տեղում, էջ 9:

¹⁹⁴ Նույն տեղում, էջ 33:

¹⁹⁵ Նույն տեղում, էջ 35:

փորձել ապաստանել մուսուլմանական գյուղերում, սակայն թուրք ոստիկանները սպանել են տարագիր հայ տղամարդկանց և միայն մի մասին է հաջողվել փրկվել: Սակայն փաստագրական հիմք ունեցող այս գրքի, ըստ էության շատ փոքր մասն է նվիրված Հոշանայի կոնկրետ պատմության և Հայոց ցեղասպանության նկարագրությանը կամ հայկական թեմատիկային: Հեղինակը նշում է, որ իր պատմությունը սկսելու հաջորդ օրը Հոշանան սայթաքում և ընկնում է ու ստացած վնասվածքներից կորցնում հիշողությունը, իսկ որոշ ժամանակ անց մահանում: Այսինքն՝ կարելի է ասել, որ ավելի քան 300 էջանոց գրքում ընդամենը երկու-երեք էջ է նվիրված Հոշանայի պատմությանը, Հայոց ցեղասպանության մի դրվագի նկարագրությանը, իսկ մնացածը հեղինակի քաղաքական գործունեության և գաղափարների նկարագրությունն ու շարադրանք է, որը լիովին զուրկ է գեղարվեստականությունից և բռնի իսլամացված հայուհու պատմության հետ կապից: Հեղինակի ջանքերը թեկուզ անուղղակի իր քաղաքական գործունեությունը կապել Հոշանայի պատմության հետ դատապարտվել են անհաջողության: Կարող ենք ասել, որ մեծ անուն հանած գրքի հեղինակը թեկուզ և ունեցել է ազնիվ մղումներ իր մոր պատմությունը ներկայացնելու և այդպիսով հայերի բռնի իսլամացման մի դրվագ պատկերելու, սակայն նախ դա խիստ թերի է և պատմությունը չի ստացվել, երկրորդ՝ զուրկ է գեղարվեստականությունից, իսկ փաստագրական կողմը աննշան է և երրորդ՝ հեղինակը ըստ երևույթին ցանկացել է հայերի բռնի իսլամացման թեմայի շուրջ եղած հետաքրքրությունից օգտվելով գովազդել իր գիրքը, որում ներկայացված են, ինչպես նշվեց, նրա անձնական և քաղաքական կենսագրության որոշակի դրվագներ:

Ամփոփելով՝ նշենք, որ կարծես հենց այս գրքերի համար է գրականագետ Մուրադ Բելգեի բնորոշումը, համաձայն որի դրանք չեն ստացվել ո՛չ գեղարվեստական, ո՛չ գաղափարական և ո՛չ էլ իմաստային-տրամաբանական տեսանկյունից:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆԵՐԸ

Ինչպես վկայում են մի շարք աղբյուրներ, այդ թվում և թուրքական, Հայոց ցեղասպանության տարիներին մեծ թվով հայ երեխաներ են առևանգվել թուրքերի և քրդերի կողմից, այնուհետև բռնի իսլամացվել: Որք մնացած հայ երեխաների մի մասը օսմանյան իշխանությունների հրամանով և նախաձեռնությամբ բաժանվել է մուսուլման ընտանիքներին¹⁹⁶, ինչպես նաև հավաքվել են թուրքական որբանոցներում և իսլամացվել:

Հայ որբերի դաժան ողիսականների և բռնի իսլամացման մասին ևս վերջին շրջանի թուրքական/թուրքերեն փաստագեղարվեստական գրականության մեջ մի շարք օրինակների ենք հանդիպում: Դրանցից է 2005 թվականին Թուրքիայում տպագրված «Մ. Ք.» անունով երեխայի աքսորի հուշերը» գիրքը, որը գրվել է 1906 թ. Ադանայում ծնված Մանվել Քրքյաշարյանի հուշերի հիման վրա: 1980 թ. Ավստրալիայի Սիդնեյ քաղաքում բնակվող Մանվելը ցեղասպանության և դրան հաջորդած տարիներին իր ապրած կյանքի մասին հիշողությունները ձայնագրել է և ավելի ուշ՝ 2005 թ. թուրք հայտնի հրապարակախոս Բասքըն Օրանը (ծնվ. 1945 թ.) այն պատրաստել է հրատարակության: Գրքում տեղ է գտել նաև Քրքյաշարյանի հուշերի ձայնագրության խտասկավառակը, որտեղ նա բարբառային թուրքերենով պատմում է իր ողիսականը: Ինը տարեկան հասակում Մանվելն իր ընտանիքի հետ բռնում է աքսորի ճամփան, որի ընթացքում տեսնում է մոր՝ Մարիամի ինքասպանությունը, հոր՝ Ստեփանի, մահը, իրենց քարավանի սպանող և այլ սարսափներ: Հրաշքով փրկվելով՝ 9-ամյա երեխան ենթարկվում է անասելի տառապանքների՝ մեկ վաճառվելով ստրուկների շուկայում, մեկ «որդեգրվելով» տարբեր մուսուլմանների կողմից և, ի վերջո, տասը

¹⁹⁶ Başyurt E., Ermeni Evlatlıklar, İstanbul, 2006, s. 36.

տարի դեգերելուց հետո գտնում է իր ազգականներին: Գրքի կազմող Բասքըն Օրանն իրավացիորեն նկատում է, որ փոքրիկ երեխան ուղղակի ենթազիտակցորեն փնտրել է իր արմատները, իր ազգականներին և վերջապես գտել նրանց¹⁹⁷: Այս պատմությունը մեկն է տառապանքի այն հազարավոր օրինակներից, որոնց հայ երեխաները ենթարկվել են Հայոց ցեղասպանության տարիներին, սակայն Մանվել Քրքյաշարյանի հուշերի, թերևս ամենակարևոր, առանձնահատկությունը ապրած վախի խորքային պատկերումն է: Այսպես, ցեղասպանությունից տասնամյակներ անց Ավստրալիայում բնակվող արդեն 74-ամյա Մանվել Քրքյաշարյանը որոշում է իր հուշերը ժապավենին հանձնել, սակայն նույնիսկ առաջացած տարիքը և Թուրքիայից հազարավոր կլիմատերերի հեռավորությունը նրա միջից չեն հանել վախի այն ահռելի զգացումը, որը նա ձեռք է բերել 1915-ին: Սկսելով իր պատմությունը՝ նա վախենում է ասել իր ամբողջական անուն, ազգանունը, այլ նշում է դրանց միայն սկզբնատառերը՝ «Իմ անունը Մ. Ք. է»¹⁹⁸: Գրքում նշվում է նաև, որ Մանվելը մինչև կյանքի վերջ ամեն գիշեր մղձավանջներ է տեսել, արթնացել, ստուգել տան դռները, պատուհանները, երեխաներին, թոռներին: Մա կրկնվել է ամեն օր գիշեր ժամը 2-ին, և դրա բացատրությունն այն է, որ 1915-ին աքսորի ժամանակ օրերից մի օր հենց գիշերվա 2-ին է, որ արթնանալով՝ 9-ամյա Մանվելը իր կողքին տեսել է մահացած հորը և այդ մտապատկերը մինչև կյանքի վերջ ուղեկցել է նրան: Մանվել Քրքյաշարյանը լինելով մուսուլմանական գերության մեջ՝ ոչ միայն պահել է քրիստոնյա լինելու գիտակցումը և ձգտել գտնել իր ազգականներին, այլև փորձել է ինչ-որ կերպ՝ ավելի շատ խորհրդանշական, շարունակականություն ապահովել իր կյանքի 1915-ին նախորդած և հաջորդած շրջանների միջև: Ահա հենց այդ նպատակով էլ Մանվել Քրքյաշարյանը տարիներով փնտրում և, ի վերջո, Կիպրո-

¹⁹⁷ Oran B., “M.K.” Adli Çocuğun Tehcir Anıları: 1915 ve Sonrası, İstanbul, 2005, s.14.

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 14:

սում գտնում է իրենց նախկին հարևանի աղջիկ Զարուհուն, որին Մանվելի մայրը դեռևս 1914 թվականին նրա ծնվելուց հետո ոչ պաշտոնական խոսքկապ է¹⁹⁹ արել այն նպատակով, որ հետագայում աղջկան ամուսնացնի իր որդի Մանվելի հետ: Ցեղասպանությունից ավելի քան 20 տարի անց՝ 1937 թվականին Մանվելը Կիպրոսում ամուսնանում է Զարուհու հետ և այդպիսով՝ հեռակա կարգով, կատարում մոր իղձը: Հետագայում՝ արդեն 1968 թ. Քրքյաշարյանները ընտանյոք հանդերձ հաստատվում են Ավստրալիայում, Միդնեյ քաղաքում, որտեղ Մանվելը ապրում է մինչև 1997 թվականը և մահանում 91 տարեկան հասակում: Մահանալուց առաջ Մանվելն ասում է. «Ես պետք է մահանայի 9 տարեկանում և ապրած տարիները Աստծո բարեհաճությունն են իմ նկատմամբ»: Գրքի կազմող Բասքըն Օրանն իր ընդարձակ նախաբանում ենթատեքստերում կամ բացահայտ ընդհանրացումներ է անում ցեղասպանության հարցի շուրջ, փորձում անուղղակիորեն ներկայացնել թուրքական պաշտոնական տեսակետները, սակայն գրքի իրական արժեքը՝ վերապրած Մանվել Քրքյաշարյանի պատմություններն են՝ առանց մեկնաբանությունների: Նա իր պատմությունը սկսում է իրենց ընտանիքի տեղահանության նկարագրությամբ և դեպքերի բնական շարունակականությունը մի փոքր խախտելով է ներկայացնում իրադարձությունները: Մանվելի խոսքից պարզ է դառնում, որ իրենց քարավանը ուղղվել է դեպի Տեր-Ջոր և մանրամասնորեն նկարագրում է Ռես-ուլայն նահանգում տեղի ունեցածները: Քրքյաշարյանի պատմության մեջ շատ է խոսվում նրանց քարավանը ուղեկցող չեչենների մասին, սակայն պետք է ենթադրել, որ դրանք հյուսիսկովկասցի մուսուլմաններն են՝ առավելապես չերքեզները, որոնց համախմբին նա երբեմն անվանում է չեչեններ, երբեմն՝ չերքեզներ: Մանվելը նկարագ-

¹⁹⁹ Ժողովրդի մեջ այս երևույթը երբեմն անվանում են «բաշիքյարթմա» (հայերեն՝ օրորոցախազ), որը թուրքերեն beşik kertme այսինքն՝ օրորոցից նշանված բառակապակցության աղավաղված ձևն է:

րում է չէջենների վայրագությունները. «Վերջապես գարուն եկավ (խոսքը 1916 թվականի գարնան մասին է - Ռ. Մ., Ն. Պ.): Այս չէջենները ցերեկները շրջում էին գաղթականների մեջ և իրենց նկատած գեղեցիկ կանանց ու աղջիկներին գիշերը գալիս փախցնում էին: Մի հայ կին Աստվածաշունչ էր կարդում և մի չերքեզ նրան հարցրեց. «Էդ ի՞նչ ես կարդում, ա՛յ կին», «Աստվածաշունչ», - պատասխանեց կինը: «Ի՞նչ է գրված», - հարցրեց չերքեզը, «Աստծո խոսքը», - ասաց կինը: «Տուր տեսնեմ այդ գիրքը ինձ», - ասաց չերքեզը և վերցնելով Աստվածաշունչը՝ սկսեց պատռել ու հողին նետել նրա էջերը: «Մա՛ էր ձեզ փրկելու», - վիրավորական ասաց նա»²⁰⁰: Մանվել Քրքյաշայանի գրքում բազմաթիվ են այն նկարագրությունները, որտեղ հասարակ մուսուլման ժողովուրդը թալանում է անպաշտպան գաղթական հայերին. «Ումանք հետ էին մնում և քարավանի ետևից եկող չերքեզները կրկին նրանց ստուգում էին, որպեսզի եթե նրանց մոտ փող լիներ՝ վերցնեին: Եթե գաղթականներն այլևս չէին կարողանում քայլել, քարավանի ետևից եկող արաբները մահակներով հարվածում էին նրանց գլխին, վերցնում էին հագուստները և նրանց մերկ թողնում: Իհարկե, մահակի հարվածն ուտելուց և այդ ցրտին մերկ մնալուց հետո ապրելն այլևս անհնար էր»²⁰¹: Մանվելի մոտ վառ է մնացել մոր ինքնասպանության պահը, որը նա գրքում պատմում է երկու անգամ: Աքսորի ճանապարհին անվերջ քայլելուց ու ժասպառ դարձած մայրը նախընտրում է ինքնասպան լինել. «Մայրս այլևս չէր կարողանում քայլել, ոտքերը ուռել էին, մեր կողքից մի գետ էր հոսում՝ Մուրադը (նկատի ունի Եփրատը կամ դրա վտակներից մեկը - Ռ. Մ., Ն. Պ.): Մայրս ասաց հորս. «Առավոտյան ինձ այս գետի ափ տար, նետվեմ ջուրը: Մեկ է, եթե մնամ, արաբները ինձ չարչարելով կսպանեն (ըստ երևույթի նկատի ունեմ նաև բռնաբարվելու հավանականությունը - Ռ. Մ., Ն. Պ.):»: Մակայն հայրս չտարավ,

²⁰⁰ Նույն տեղում, էջ 47-48:

²⁰¹ Նույն տեղում, էջ 51:

չէր ուզում տանել: Մայրս ասաց, որ եթէ չտանի՝ կանիծի: Մենք մի համերկրացի ունեինք, որը երկու զավակ ուներ՝ մեկը տղա, մյուսը աղջիկ: Տղան իմ դասընկերն էր: Անունը Եզնիկ էր, հիշում եմ: Այս մարդը մորս իր հետև գցեց, ես էլ նրանց հետ, որոշեցինք տանել գետի ափ: Տեր հայր կանչեցինք: Մայրս հաղորդություն ստացավ, այնուհետև մորս այդ մարդու հետ գետի ափ տարանք: Դեմքս մի կողմ թեքեցի, որպեսզի չտեսնեմ, թե ինչպես է մայրս իրեն ջուրը նետում: Մայրս իրեն ջուրը նետեց: Թեքվեցի նայեցի, ա՛խ մայրս: Մորս գետը տանում էր»²⁰²: Մոր մահից հետո փոքրիկ Մանվելն ապրում է նաև երկրորդ ցնցումը. «Տողովուրդը շարունակում էր քայլել: Գնում էինք, սակայն ո՞ւր: Մոված, ծարավ: Վերջապես մի տեղ հասանք, դադար տվեցինք: Այնտեղ արաբները հաց, բլղուր էին բերում և փոխանակում հագուստների հետ: Իմ ոտքին մի գույգ կարմիր կոշիկ կար: Դրանք մի թաս բլղուրի հետ փոխանակեցինք: Հաջորդ օրը ճանապարհը շարունակեցինք: Մի տեղ կրկին դադար տվեցինք և գիշերը այնտեղ քնեցինք: Առավոտյան կողմ զարթնեցի տեսա, որ հայրս մահացել էր»²⁰³: Մանվել Քրքյաշարյանն աքսորի ճանապարհի բոլոր գրկանքների ու սարսափների կողքին ակնհայտ է եղել նաև ստրկավաճառության բազմաթիվ օրինակների և հենց ինքն էլ վաճառվել է նման կերպով: Մասնավորապես՝ նրանց ուղեկցող չեչենները սկսել են այդ վայրերում բնակվող արաբների հետ բանակցել հայ երեխաներին և կանանց վաճառելու հարցի շուրջ: «Մեկ էլ տեսանք արաբները չեչենների հետ միասին սկսեցին ժողովրդի մեջ շրջել: Նրանք սկսեցին գննել տղա և աղջիկ երեխաներին: Նրանց, որոնց հավանում էին՝ ասում էին չեչենին. «Ես ուզում եմ այս երեխային վերցնել»: Չեչենն էլ թարգմանություն էր անում, որովհետև չեչենները արաբերեն, չեչեներեն և թուրքերեն գիտեին: Երեխայի մորը և հորը, կամ էլ տիրոջը ասում էին. «Այս երեխային տվեք այս

²⁰² Նույն տեղում, էջ 51-52, 54-55:

²⁰³ Նույն տեղում, էջ 52:

արաբին, առանց այդ էլ դուք, ա՛յ անհավատներ, մեռնելու եք»: Երեխայի տերերից ոմանք համաձայնվում էին, ոմանք՝ ոչ: Երբ արաբը վերցնում էր երեխային՝ չեչենն էլ արաբից գանձում էր միջնորդավճար»²⁰⁴: Աքսորի ճանապարհի մի հատվածում Մանվելն այլևս ի վիճակի չլինելով քայլել՝ որոշում է մնալ այդ վայրում: Քիչ անց քրդերը և չեչենները սպանում են այնտեղ մնացած հայ գաղթականների մի մասին, իսկ երեխաներին բաժանում իրար մեջ: Մանվելին մոտակա գյուղից մի քուրդ է վերցնում և ցանկանում տանել իր տուն, սակայն ճանապարհին միտքը փոխում է և որոշում թալանել Մանվելին: Որբ մնացած 9-ամյա հայ երեխայի մոտ բացի հագուստներից ուրիշ ոչինչ չի լինում և այդ քուրդը վերցնում է Մանվելի շորերը, իսկ նրան կիսամերկ թողնում ճանապարհին: Դրանից հետո Մանվելը մնում է միայնակ և պատսպարվում մի քարանձավում, որտեղ հաջորդ օրը նրան գտնում է մոտակա գյուղից մի մուսուլման և տանում իր տուն: Օրեր անց հարևան Սարմըսաք գյուղից, որն այսօր գտնվում է Սիրիայի և Թուրքիայի սահմանին, մի քանի քուրդ են գալիս և վերցնում Մանվելին որպես աղախին: Գյուղի ճանապարհին Մանվելը տեսնում է սպանված կամ կիսամեռ մարդկանց և հասկանում, որ դա իրենց քարավանն էր, որին չեչենները բերել և հանձնել էին քրդերին, որոնք էլ հայ գաղթականների շորերը թալանելուց հետ բոլորին սպանել էին²⁰⁵: Նույն օրվա երեկոյան, երբ Մանվելին տանում են Սարմըսաք գյուղը, սկսվում է մի իրարանցում. «Մեկը քրդերեն բղավում էր՝ հասեք, հասեք, օգնեք: Բոլորը վազում էին ձայնի ուղղությամբ: Պարզվում է, որ քուրդը տեսել է 14-15 տարեկան լիովին մերկ մի հայ պատանու, որը պատահաբար ողջ էր մնացել սպանողի ժամանակ: Գյուղացիները գնացին և քարկոծելով սպանեցին պատանուն»²⁰⁶: Մեկ օր այդ գյուղում մնալուց հետո առավոտյան Մանվելին

²⁰⁴ Նույն տեղում, էջ 53-54:

²⁰⁵ Նույն տեղում, էջ 60:

²⁰⁶ Նույն տեղում:

վերցրած քուրդ գյուղացու երկու երեխաները՝ տղա և աղջիկ, նրան գյուղից դուրս են տանում և հարձակվում վրա, որպեսզի խլեն նրա միակ «հարստությունը»՝ շավվարը և վարտիքը: Մանվելը ստիպված է լինում նրանց տալ իր վերջին շորերը և երեխաները վերադառնում են գյուղ, իսկ Մանվելը մորեմերկ մնում է ճանապարհին: Քիչ անց այդ ճանապարհին նա տեսնում է մի քուրդ տղամարդու, որի կողքին կար հաճնցի մի հայուհի: Մանվելի աչքի առաջ քուրդը ձեռքին եղած մահակով խփում է կնոջ գլխին և գետին գցելուց հետո մի քանի անգամ դանակահարելով՝ սպանում, այնուհետև վերցնում նրա շորերը և գնում: Մանվելը մոտենում է սպանված հայուհուն և նստում կողքին: Այդ ժամանակ նրանց կողքով են անցնում չորս քուրդ կանայք, որոնցից ամենաերիտասարդը վերցնելով քարի մի կտոր՝ ցանկանում է հարվածել Մանվելի գլխին և սպանել նրա, սակայն մյուսները չեն թողնում, իսկ նրանցից մեկը Մանվելին է տալիս իր երեխայի շորերից մի կտոր, որպեսզի նա ծածկվի: Այդ նույն կինը Մանվելին վերցնում է իր հետ և տանում է իրենց գյուղ՝ Հայաք, որտեղ էլ որոշ ժամանակ ապրում է Մանվելը²⁰⁷: Նկարագրված տեսարանները լավագույնս փաստում են, որ մուսուլմանական հասարակության տարբեր շերտերի և տարիքային խմբերի ներկայացուցիչներ են ընդգրկված եղել ցեղասպանության իրականացման գործում: Զարհուրելի է այն հանգամանքը, որը ընդամենը հագուստի համար շատ քրդեր, արաբներ, թուրքեր հեշտությամբ սպանել են հայերի: Այս բոլոր սարսափների միջով անցնելով և հրաշքով փրկվելով՝ Մանվելը ապաստանում է այդ քրդական գյուղում, աշխատում գյուղացիների տներում որպես աղախին, սակայն ամենաուշագրավն այն է, որ ամեն հնարավորություն օգտագործում է իր ազգակիցներին գտնելու համար: Տառապանքների տասը տարիների ընթացքում ազգային և կրոնական ինքնագիտակցությունը պահպանելու հարցում Մանվելի համար կարևոր դեր է խաղացել քրիստոնեական դաստիարակու-

²⁰⁷ Նույն տեղում, էջ 61-62:

թյունը. «Երբեք չէի մոռանում Հայր մերը ասել, շարունակ կրկնում էի այն»²⁰⁸: Փոքրիկ երեխայի մեջ հայությունը ասոցացվել է քրիստոնեության հետ և նա զգուշորեն սկսել է իր շրջապատում հետաքրքրվել, թե որտե՞ղ կան քրիստոնյաներ, որպեսզի այդ միջոցով գտնի նաև իր ազգակիցներին: Ի վերջո, փնտրտուքները Մանվելին հասցնում են Մոսուլ և տեղի հայկական եկեղեցու քահանան վերցնելով նրա տվյալները՝ խոստանում է օգնել: Եվ իրոք, որոշ ժամանակ անց պարզվում է, որ Մանվելի ազգականներից մի քանիսը գտնվում են Հալեպում և շուրջ տասը տարի տառապելուց ու դեգերելուց հետո նա, ի վերջո, գտնում է ազգականներին: Այնուհետև Մանվելը իմանում է, որ իր երկու քույրերից մեկը՝ Օժենը Կիպրոսում է, իսկ մյուս քույրը՝ Սիրուհին՝ ԱՄՆ-ում: 1925թ. Մանվելը գնում է Կիպրոս, հաստատվում այնտեղ, ամուսնանում, երեխաներ ունենում և արդեն 1968 թ. տեղափոխվում է Ավստրալիա: Վերջում արժե հավելել, որ իր ազգականներին փնտրելու և գտնելու կամքը Մանվելին ուղեկցում է ամբողջ կյանքում և 1985 թ. արդեն 79-ամյա Մանվելը այցելում է ԱՄՆ-ում գտնվող քրոջը՝ Սիրուհուն, որին վերջին անգամ տեսել էր 2 տարեկան հասակում:

Ցեղասպանության ականատեսները և նրանց սերունդները ոչ բոլորն են կարողացել կամ համարձակություն ունեցել գրի առնել իրենց վերապրածներն ու իմացածները, ուստի հաճախ լռել են, սակավ դեպքերում՝ դիմել ուրիշներին: 2008 թվականին Թուրքիայում տպագրվեց «Սարգիսը այս հողերը սիրում էր» վերնագրով մի հուշագրություն, որտեղ Գերմանիայում բնակվող հայազգի Սարգիս Իմասը վերապատմում է ցեղասպանության մասին իր ընտանիքի հուշերը: Իր գրի առած նյութերը նա ուղարկում է թուրք լրագրող և հրապարակախոս Ֆարուք Բիլդիրիջիին՝ խնդրելով խմբագրել և հրատարակության պատրաստել դրանք: Սարգիս Իմասի և Ֆարուք Բիլդիրիջիի միջև հաստատվում է նամակագրական և հեռախո-

²⁰⁸ Նույն տեղում, էջ 82:

սային կապ ու թուրք լրագրողը ստանձնում է հուշերի հրատարակման գործը, սակայն, ցավոք, մինչև գրքի տպագրվելը Մարգիս Իմասը վախճանվում է: Չնայած նրան, որ գրքի կազմողն առաջաբանում որոշ համահավասարեցնող մեկնաբանություններ է արել և փորձել է հասկապես վեր հանել Մարգիս Իմասի հուշերում առկա բարեկամության, եղբայրության կոչերը, սակայն, այնուամենայնիվ, գիրքը նախ թուրք գրականության հուշագրական ժանրի մեջ ավելացնում է հայկական թեմատիկայով գրված ստեղծագործությունների թիվը և, բացի այդ, ունի աղբյուրագիտական արժեք ցեղասպանության պատմության համար: Մարգիս Իմասի մայրական պապը՝ Ասատուրը, Խարբերդի շրջանի Քոնաքավազ գյուղի ջրաղացպանն է եղել և հենց այդ հանգամանքն էլ նրան փրկել է աքսորից: Ասատուրը կնոջ մահից հետո հիմնականում բնակվել է գյուղից դուրս գտնվող ջրաղացում և երբ ոստիկանները ներխուժել են գյուղ ու բռնություն տեղահանել են՝ նա գյուղում չի եղել: Նրա ընտանիքը՝ մայրը, աղջիկը՝ 7-ամյա Շուշանը, տղան՝ 3-ամյա Անդրանիկը գյուղի մյուս բնակչության հետ բռնել են աքսորի ճամփան և տարվել դեպի Մադեն քաղաք: Նույն օրվա երեկոյան անվերջ քայլելուց ուժասպառ Ասատուրի 70-ամյա մայրը խնդրել է իրենց ուղեկցող ոստիկանից սպանել իրեն, քանի որ այլևս չէր կարողանում քայլել: «Ընդառաջելով» տարեց կնոջ խնդրանքին՝ ոստիկանը հենց թոռների աչքի առաջ սվինահարում է նրան և արյունաշաղախ դիակը թողնում ճանապարհին²⁰⁹: Երկու մանկահասակ երեխաները մնում են տատի անշունչ մարմնի կողքին և չեն հասկանում, թե ինչ է տեղի ունեցել: Մինչև ուշ գիշեր երեխաները փարված տատի մարմնին խնդրում են նրան վեր կենալ և շարունակել ճանապարհը, քանի որ քարավանը գնացել է, իսկ իրենք մնացել են միայնակ: Այդպես մինչև առավոտ երկու երեխաներ տատի մարմնի կողքին կուչ եկած սպասել են՝ ցրտից դողալով: Առավոտյան կողմ Շուշանը եղբոր հետ ստիպված

²⁰⁹ Bildirici F., Serkis Bu Toprakları Sevmiştii, İstanbul, 2008, s. 18.

սկսում է շրջել անծանոթ վայրերում՝ ուտելիք գտնելու հույսով: Երբ հասնում են մոտակա գետակին, նրանց դիմաց են դուրս գալիս երեք քուրդ տղամարդ: Տեսնելով անպաշտպան երեխաներին՝ քրդերը սկսում են իրար մեջ ինչ-որ բան խոսել: Հետագայում պարզվում է, որ Մադեն քաղաքում բնակվող զինվորական բժիշկ Սամի բեյը այս քրդերին պատվիրել է գտնել 7-8 տարեկան աքսորյալ հայ աղջիկ երեխա, որպեսզի նա դառնա իր 3 տարեկան աղջկա ընկերուհին: Մրա դիմաց բժիշկը խոստացել է վճարել քրդերին: Եվ ահա տեսնելով Շուշանին և Անդրանիկին՝ քրդերը հասկացել են, որ գտել են իրենց պատվերը, սակայն նրանց պատվիրված է եղել միայն աղջիկ երեխա, ուստի 3-ամյա Անդրանիկը հարկավոր չէր: Այդ պահին տեղի է ունենում մի դեպք, որի մասին հիշողությունը ամբողջ կյանքում ուղեկցելու էր Շուշանին. մինչ քրդերից երկուսը խոսում էին իրար հետ, երրորդը մոտենում է երեխաներին. «Այդ ընթացքում կարճահասակ երրորդ մարդը մոտեցել էր երեխաներին: Առանց Շուշանին մի բան ասելու, փոքրիկ Անդրանիկին կոպտորեն ձեռքից բռնելով՝ քարշ տվեց քիչ այն կողմ հոսող գետի մոտ: Երեխայի գլուխը մտցրեց ջրի մեջ և այդպես որոշ ժամանակ սպասեց: Անդրանիկը թռչնի ձագի պես գալարվում էր: Շուշանը սարսափահար էր, ո՛չ կարողանում էր բղավել, ո՛չ էլ փախչել: Առանց շարժվելու հետևում էր եղբոր մահը: Մարդը իրական մարդասպան էր, նրա համար իր սիրուն եղբայրը ոչ մի արժեք չուներ: Սպանությունը կատարելիս այնքան հանգիստ էր, ասես անում էր աշխարհի ամենաբնական, ամենահասարակ գործը: Ակնհայտ էր, որ առաջին անգամը չէ որ մարդ էր սպանում: Երբ երեխան անշնչացավ նրա մարմինը դուրս բերեց ջրից և վրան ինչ հագուստ որ կար՝ հանեց: Իսկ փոքրիկ մարմինը արդեն նրան չէր հետաքրքրում վերցրեց ու շարժեց ջրի մեջ»²¹⁰: Այս անմարդկային տեսարանից քարացած Շուշանին ավագակները վերցնում և տանում են քաղաքում գտնվող մի մեծ տուն ու հանձնում մի

²¹⁰ Նույն տեղում, էջ 19:

մարդու, որը վճարում է մարդասպան քրդերին: Դա զինվորական բժիշկ Սամի բեյն էր, որը Շուշանին վերցնում է իր տուն՝ որպես որդեգիր և փոխում է նրա անունը՝ կոչելով Սուզան: Ինչպես Մարգիս Իմասն է պատմում, Շուշանին այդ տանը լավ են վերաբերվել և նա այդտեղ է մնացել 5-6 տարի: Տարիներ անց Մադեն այցելած շրջիկ հայ վաճառականներից մեկը նկատում է, որ երեխան հայերեն է հասկանում: Իսկ մինչ այդ Շուշանի ջրաղացպան հայրը՝ Ասատուրը, շարունակ փնտրել է իր կորած ընտանիքը և այս շրջիկ վաճառականին ևս խնդրել, որ եթե իր երեխաներից կամ մորից լուր իմանա՝ իրեն հայտնի: Խոսելով երեխայի հետ՝ վաճառականը հարցնում է նրա անունը, ինչին երեխան պատասխանում է, թե հիմա իր անունը Սուզան է, սակայն նախկինում իրենց գյուղում իրեն Շուշան էին կոչում²¹¹: Վաճառականն այս լուրը հասցնում է Ասատուրին, որն էլ գնալով Մադեն քաղաք՝ այցելում է բժիշկ Սամի բեյին և ներկայացնում իրավիճակը՝ խնդրելով իրեն վերադարձնել երեխային. «Պարոն, դու էլ ես հայր: Իմ կյանքում այս աղջկանից բացի ոչ ոք չի մնացել: Նա էլ ձեր շնորհիվ է ողջ մնացել: Ի՛նչ կլինի՝ խեղճ ու տկար հորը իր զավակից մի բաժանեք»²¹²: Բժիշկ Սամին տեղի է տալիս, սակայն նշում, որ երեխային Ասատուրին կտա միայն այն պարագայում, եթե աղջիկը ճանաչի նրան: Բժիշկ Սամին և Ասատուրը միասին գնում են տուն և Շուշանը տեսնելով հորը՝ անմիջապես ճանաչում ու հայերեն «հայրիկ, հայրիկ» բղավելով փաթաթվում է նրան: Այս տեսնելով՝ բժիշկ Սամին Շուշանին վերադարձնում է հորը և նրանք գնում են Քոնաքալմազ գյուղ, որն արդեն շատ էր փոխվել. նոր մարդիկ էին տեղ կանգնել հայերի տներին և ունեցվածքին: Մի քանի տարի անց, երբ Շուշանը մեծանում է՝ նրան ամուսնացնում են Խարբերդի Թիք գյուղից հայազգի Մարտիրոսի հետ, որը ևս ցեղասպանությունից փրկված հայ երեխաներից է լինում:

²¹¹ Նույն տեղում, էջ 20-21:

²¹² Նույն տեղում, էջ 21:

Գրքում առկա է նաև Շուշանի խորթ մոր՝ Յեղսայի վերապրածները: Խարբերդի Նաջարան գյուղից Յեղսան ցեղասպանության ժամանակ կորցնում է ամուսնուն և փոքրահասակ աղջկա՝ Մարթայի հետ աքսորվում: Հետագայում Յեղսան իր հուշերում նկարագրում է աքսորի ճանապարհին տեղի ունեցած ստրկավաճառության տարբեր դրվագներ. «Ճանապարհին ցանկացած մուսուլման իր ուզած հայ կնոջը, աղջկան կարող էր հանգիստ վերցնել: Քարավանին ուղեկցող զինվորների ղեկավարին մի քանի գրոշ տալով՝ ասես ձմերուկ կամ սեխ ընտրելու նման, իր ուզած հայ կնոջը վերցնում տանում էին մուսուլմանները»²¹³: Նմանատիպ ճակատագիր է բաժին հասնում Յեղսային, որին մի քանի գրոշով գնում է մի մուսուլման գյուղացի, որը հետո նրան կրոնափոխ է անում և ամուսնանում հետը: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ երկու ամիս իր «ամուսինը» համարված մարդու անունն անգամ չի հիշատակում Յեղսան իր հուշերում և ակնհայտ է, որ նրան տանջում է նաև բարոյական հարցեր. «Խառը զգացումների մեջ երկու ամիս անցկացրեցի, սակայն դրանք ինձ համար հարյուրամյակների չափ երկար թվացին: Թե ինչպես են այդ ամիսները անցել միայն ես և Աստված գիտենք: Ես ինքս ինձ անընդհատ ասում էի. «Միայն իմ մարմինն է պղծվում, հոգիս մասմաքուր է մնալու»»²¹⁴: Այստեղ ի հայտ են գալիս նաև առևանգված և բռնությամբ մուսուլմանի կին դարձած հայուհիների վերինտեգրման խնդիրները, թե ինչպե՞ս են նրանք իրենք իրենց հաղթահարելու և առևանգիչ-մարդասպանի կինը լինելուց հետո ինչպե՞ս են վերադառնալու իրենց նախկին միջավայր: Ահա հենց այս մտորումներն են, որ շատ հայուհիների նույնիսկ հնարավորության դեպքում հետ են պահել մուսուլմանական գերությունից ազատվելու ռեալ հնարավորությունները օգտագործելուց: Յեղսան

²¹³ Նույն տեղում, էջ 137:

²¹⁴ Նույն տեղում, էջ 139:

իր հետ է վերցնում նաև մանկահասակ աղջկան՝ Մարթային, որին ի պահ են տալիս նրա նոր մուսուլման «ամուսնու» ազգականներից մեկին: Որոշ ժամանակ անց հայ աղջիկ երեխային խնամքի վերցրած ընտանիքի տղամարդը բռնաբարում է նրան, վերջինս մի կերպ հասնում է ամառային արոտավայրում գտնվող մոր մոտ, որից հետո նրանք փախչում ու ապաստանում են իրենց հեռավոր ազգական Ասատուրի ջրաղացում: Ավելի ուշ Յեղսան ու Ասատուրն ամուսնանում են, ունենում երկու երեխա, իսկ Մարթան գաղթում է Խորհրդային Հայաստան ու այստեղ ընտանիք ձևավորում:

Մարգիս Իմասի հուշերում նաև տեղ է գտել ուշագրավ մի տեղեկություն այն մասին, թե ինչպես ցեղասպանության ժամանակ Խարբերդի Թիլք գյուղից Ղազար Թորայանը իր մոր և քրոջ հետ մի քանի օր հերոսական դիմադրություն է ցույց տվել քուրդ ջարդարար խաժամուժին, սպանել շատերին և ինքն էլ մահացել զենքը ձեռքին հերոսական մահով:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՎՐԻԺԱՌՈՒԹՅԱՆ ԴՐԴԻՉ ՈՒԺ

Մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումները, սոցիալական անարդարություններն իրենց տարատեսակներով և դրսևորումներով միշտ էլ առկա են եղել ու պարարտ հող ունեցել հանրապետական Թուրքիայում: Եվ որպես այդ ամենին հակազդեցության փորձ, տարբեր ժամանակաշրջաններում գոյություն է ունեցել և երբեմն մեծ ծավալներ ընդգրկել, այսպես կոչված, «ավազակների և ավազակության» խնդիրը: Ավազակները մարդիկ էին, որոնք շատ դեպքերում սոցիալական կամ այլ բնույթի անարդարությունից դրդված՝ բարձրացել են լեռները և զբաղվել ավազակությամբ ու դրանով փորձել են տեր կանգնել ոչ միայն իրենց, այլև ճնշվող հասարակ ժողովրդի օրինական շահերին: «Բարի ավազակները», ի տարբերություն թալանչի ոճրագործների, հասարակության լայն շերտերի մեջ ընդունվել են որպես հասարակ ժողովրդի շահերի պաշտպաններ, սոցիալական կեղեքումների դեմ պայքարող մարտիկներ և, ի վերջո, ժողովրդական վրիժառուի պատվաբեր անուն են ունեցել, ուստի և, ժողովուրդն էլ իր հերթին ավազակների այս «ոռբինհուղյան» տեսակին ցույց է տվել աջակցություն ու դրական վերաբերմունք և հարկ եղած դեպքում օժանդակել նրանց:

Ուշագրավ է, որ տարբեր աղբյուրներում հանդիպում ենք փաստերի, որոնք վերաբերում են նաև հայ «ավազակների» և հատկապես նրանց գործունեությանը Թուրքիայի ծպտյալ կամ իսլամացված հայ բնակչության շրջանում: Իհարկե, նման դեպքում, ինչպես և պետք էր սպասել, թուրքական աղբյուրները, այդ հայերի մասին խոսելով անթաքույց միտումնավորությամբ, նրանց տալիս են «ահաբեկիչ» պիտակը, բայց փաստերի համակողմանի վերլուծությունը պարզում է, որ նրանք, ըստ էության, իրականում ավելի շատ ժողովրդական վրիժառուներ են և իրենց նպատակներն իրագործելու ճանապարհ-

հին ստիպված են եղել համագործակցել, թերևս նույնիսկ անդամակցել նաև ծայրահեղական խմբավորումների: Նրանք երբեմն, իհարկե, ոչ պատահական գուգադիպությամբ, գործել են այն վայրերում, որտեղ բնակվում են ցեղասպանության ժամանակ բռնի կրոնափոխված հայության սերունդներ և ամեն կերպ փորձել են կապեր հաստատել նրանց հետ, օգնել, սաստարել, որպեսզի վերջինները հնարավորինս չհեռանան իրենց ազգային ակունքներից և նույնիսկ հաճախ կոչ են արել բացահայտել իրենց բուն էթնիկ պատկանելությունը:

Տարատեսակ փաստերի համադրումը մեզ թույլ է տալիս ասել, որ Թուրքիայում 20-րդ դարի երկրորդ կեսին գործած հայ վրիժառուների համար դրդիչ գործոն է դարձել Հայոց ցեղասպանության հիշողությունը: Մի շարք թուրք հետազոտողներ, անդրադառնալով վերը նշված խնդրին, հատկապես ուշադրությունը սևեռում են այն հարցի պարզաբանման վրա, թե այդ հայերը ինչի՞ց դրդված են դիմել նման գործողությունների և անդամակցել ծայրահեղական խմբավորումների: Ըստ նրանց բնորոշման և բառապաշարի՝ այդ «ահաբեկիչ, անջատողական, պառակտիչ գործողություններ անող» հայերը շատ հաճախ առաջնորդվել են վրեժխնդրության զգացմունքի թելադրանքով, որի պատճառը, թուրքական ձևակերպմամբ, «1915 թվականի հայերի տեղահանությունն է»: Այս կարծիքն ապացուցելու է գալիս այն փաստը, որ ծայրահեղական կազմակերպությունների ձերբակալված որոշ անդամների մոտից հայտնաբերվել են նաև պաստառներ, որոնց վրա գրված է եղել հետևյալ արտահայտությունը. «Հայոց ցեղասպանության պատասխանը տալու էք»²¹⁵:

Իր կյանքով և գործունեությամբ հատկապես հետաքրքիր է հայ «ավազակ» Օրհան Բաքըրը (իսկական անունն է Արմենակ Բաքըրջյան): Նա ծնվել է 1953 թվականին Դիարբեքիրում, ավելի ուշ Ստամբուլի համալսարանում սովորելուն զուգընթաց նա իր ընկերոջ «Ակօս» թերթի նախկին գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հետ

²¹⁵ Ovunc B., Örgütlerin Ermeni Avı, www.haber7.com/artikel.php?artikel_id=134306

աշխատել է հայկական «Սուրբ Խաչ» վարժարանում որպես դասուսույց և հենց այդ տարիներին էլ նրանք ակտիվորեն զբաղվել ու հետաքրքրվել են Թուրքիայի արևելյան և հարավ-արևելյան շրջաններում ապրող քրդախոս, իսլամացված հայերի խնդրով²¹⁶: Ավելին, ինչպես հետագայում խոստովանել է Հրանտ Դինքը, նրանք բազմիցս այցելել են այդ տարածքները, հավաքել քրդացած հայ մանուկներին և բերել Ստամբուլ՝ «Սուրբ Խաչ» վարժարանում հայկական կրթություն տալու համար²¹⁷: Արմենակը և իր համախոհ ընկերներն այդ տարիներին անդամակցել են ծայրահեղ ձախակողմյա խմբավորումներից մեկին և դրա համար թաքցրել են նաև իրենց հայկական անձնանունները, որպեսզի չվնասեն հայ համայնքին: Որոշ ժամանակ անց, Արմենակը որոշում է «բարձրանալ լեռները», այսինքն՝ դառնալ «ավագակ» և, հետաքրքրական է, որ նա արդեն «Ալի աղա» ծածկանունով հիմնականում գործել է Դերսիմ-Խարբերդ-Երզնկա շրջաններում և, ինչպես նշում են տարբեր աղբյուրներ, կարողացել է կապ հաստատել նաև տեղի ծպտյալ հայերի հետ: Հայոց ցեղասպանության տարիներին հազարավոր հայեր ապաստան են գտել Դերսիմի քուրդ-ալևիների, զազաների մոտ²¹⁸: Հարկ է նկատել, որ բացի բնիկներից՝ հայերից, Դերսիմում բնակություն են հաստատել նաև զազաներ, քրդեր, որոնց շրջանում բավական տարածված է ալևիականությունը, ինչը ենթադրում է հանդուրժողականություն այլակրոնների նկատմամբ: Կրոնա-դավանանքային այս պատկանելությունը զգալիորեն տարբերել է ալևի զազաներին Օսմանյան

²¹⁶ Opçin T., “Kejesi Olmayan Bir Eşkiyaydı”, Chronicle, İstanbul, 2005, sayı 2, s. 102.

²¹⁷ Նույն տեղում, էջ 106 :

²¹⁸ Այստեղ ապաստանած հայերի մասին տարբեր աղբյուրներ նշում են տարբեր թվեր՝ 20 հազարից մինչև 40 հազար: Նրանց մի մասը տարիների ընթացքում ձուլվել է զազաների հետ և մեծապես կորցրել ազգային դիմագիծը, սակայն որոշ մասի մեջ դեռևս պահպանվում են ազգային-կրոնական նկարագրի որոշ նշույլներ: Հայտնի է, որ զազաները հարգանքով են վերաբերվում հայկական քրիստոնեական սրբավայրերին, նրանց խոսվածքում երբեմն հանդիպում են կիսաաղավաղված հայերեն բառեր և այլն:

կայսրության մյուս շրջանների մուսուլմաններից, որոնց մեջ հաճախ գերիշխել է կրոնական մոլեռանդությունը, և այս ամենը վճռորոշ դեր է խաղացել 1915-ին աքսորյալ հայերին ապաստան տալու հարցում:

Անառարկելի մեծ է եղել Արմենակ Բաքրըրջյանի վայելած սերնու հարգանքը հիշյալ տարածաշրջանում, ինչի մասին հիշողություններ պահպանված են առ այսօր: Ժողովրդի կողմից նրա հանդեպ ջերմ վերաբերմունքը փաստում է, որ նա ընկալվել է ոչ թե որպես ահաբեկիչ, թալանչի, ավազակ, այլ՝ ժողովրդական վրիժառու, արդարության համար պայքարող մարտիկ: Արմենակ Բաքրըրջյանը տարիներ շարունակ հետապնդման մեջ է եղել և 1980 թվականի մայիսի 13-ին Խարբերդի նահանգի Քարաքոչյան գավառում, ընկնելով ծուղակի մեջ, զոհվել է: Արմենակի մահից հետո իր ընկերները գաղտնի փախցրել են նրա աճյունը և, իր իսկ կտակի համաձայն, թաղել Ֆարաչ լեռներում: Նրա հուղարկավորությունը վերածվել է մեծ արարողության, որին, ըստ տարբեր աղբյուրներում տեղ գտած փաստերի, մասնակցել են հազարավոր մարդիկ, ենթադրաբար նաև մեծ թվով ծայտյալ հայեր²¹⁹: Սպանվելուց հետո անգամ թուրքական պետության թշնամանքը չի վերացել նորօրյա հայ ֆիդայու նկատմամբ և նրա գերեզմանը երկու անգամ քանդել են, ոսկորները հանել թափել դուրս, սակայն շրջակա բնակչության սերը և հարգանքը այն աստիճան մեծ է եղել Արմենակի նկատմամբ, որ ամեն անգամ հավաքել են ոսկորները և կարգի բերել պղծված գերեզմանը:

Հայոց ցեղասպանության մասին ուղղակի կամ անուղղակի պատմող թուրքերեն գրքերի մեջ առանձնահատուկ և յուրօրինակ տեղ է զբաղեցնում 2005 թվականին Ստամբուլում հրատարակված դերսիմցի զազա հեղինակ Մուրադ Քահրամանի «Ճիչ» վեպը: Այն նվիրված է Դերսիմում 20-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցած դեպքերին և թուրքական պետության ու ծայրահեղական շարժում-

²¹⁹ Նույն տեղում:

ների պայքարի պատմությանը: Մեզ համար գիրքը հատկապես հետաքրքրություն է ներկայացնում այն տեսանկյունից, որ այնտեղ խոսվում է հայ վրիժառոյի՝ Արմենակ Բաքրըջյանի գործունեության մասին: «Ճիչ» փաստագեղարվեստական վեպում նաև բազմաթիվ անդրադարձներ կան ինքնությունը թաքցրած հայության խնդիրներին և նկարագրվում է նրանց վիճակը 1970-80-ական թվականներին: Հատկանշական է, որ Թուրքիայում լայն տարածում և արձագանք չգտած վեպում բազմիցս կիրառվում է Հայոց ցեղասպանություն եզրույթը:

«Ճիչ» գրքում ընդամենը մեկ գլուխ է նվիրված հայազգի վրիժառու Արմենակ Բաքրըջյանի կյանքի որոշակի դրվագի պատկերմանը, սակայն մի քանի էջերի նկարագրության արդյունքում ընթերցողի առաջ վեր է հառնում հերոսի ամբողջական կերպարը: Գրքում հետաքրքիր և դրամատիկ զարգացումներով հագեցված են ներկայացված Արմենակ Բաքրըջյանի և Խարբերդի գյուղերից մեկի մզկիթի հոգևոր սպասավորի՝ իմամի հարաբերությունները: Պարզվում է, որ այդ իմամն իրականում ծպտյալ հայ քրիստոնյա է. նրա ամբողջ ընտանիքը զոհ է գնացել ցեղասպանության տարիներին և ինքն էլ, վիրավոր վիճակում, մի կերպ է փրկվել: Ամենահետաքրքիրն այն է, որ այդ իմամն իրականում հայ քահանա է, ով ցերեկները մզկիթում հանդես է գալիս որպես իմամ, իսկ գիշերներն իր տան նկուղում կառուցած գաղտնի եկեղեցում քահանայություն է անում: Հեղինակը՝ Մուրադ Քահրամանը, համառոտ ներկայացնում է նաև նրա անցյալը. «Վարդանյան: Խարբերդյի Ջևայիրի և Հակոբի որբացած որդին»²²⁰: Ապագա իմամին ցեղասպանության ժամանակ փրկում է Լալեշ անունով մի եզդի, որն ինքը ժամանակին եզդիների կոտորածից հետո փրկվել է՝ ընդունելով իսլամ: Սպանված հայերի դիակների միջից գտնելով 4-ամյա վիրավոր երեխային՝ Լալեշը խնամում է նրան, ապաքինում վերքերը և որդեգրում: Հեղինակը ընդամենը մեկ նախա-

²²⁰ Kahraman M., Çiğlık, İstanbul, 2005, s. 139-140.

դասությամբ, սակայն, մինևույն ժամանակ, խորությամբ ներկայացնում է վերապրած հայ երեխայի հոգեվիճակը. «Մեկ տարի շարունակ երեխան մեկ կետի է նայել և չի խոսել»²²¹: Հետագայում Լալեշը, նրան ուղարկում է ուսանելու հոգևոր դպրոցում, որի ավարտից հետո Վարդանյանը դառնում է մզկիթի իմամ, սակայն մինևույն ժամանակ խորը գիտելիքներ է ձեռք բերում Ավետարանի և եզդիների Սուրբ գրքի վերաբերյալ: Իմանալով երեք կրոններն էլ՝ Վարդանյանը գաղտնի պահպանում է հայ-քրիստոնեությունը, սակայն արտաքուստ լինում մզկիթի մուսուլմանական հոգևորական: Նա իր համար ստեղծում է երկու աշխարհ՝ արտաքին, որտեղ նա իմամ էր և ներքին, որտեղ նա հայ քահանա էր: Ուշագրավ է, որ նա վարել է նաև քրիստոնյա բարձրաստիճան հոգևորականին հարիր կենցաղ և անգամ պահպանել կուսակրոնությունն ու չի ամուսնացել, ինչը տարակուսանք է առաջացրել նրա մուսուլմանական շրջապատում: Այս ամենին զուգահեռ Վարդանյանի մեջ վառ է մնացել ազգային ինքնագիտակցությունը և հենց դա է նրան ստիպել վտանգելով իր հանգիստ, բարեկեցիկ կենցաղը՝ գաղտնի հանդիպել հայազգի վրիժառու Արմենակ Բաբրջյանի հետ: Մուրադ Քահրամանը հետաքրքիր է ներկայացնում Վարդանյանի և Արմենակի գաղտնի հանդիպման տեսարանը: Նախ նկարագրում է հայ ծպտյալ հոգևորականի անհամբեր սպասումներն իր տան նկուղում կառուցված գաղտնի եկեղեցում. «Նրա սպասած հյուրը պետության կողմից հետապնդվող մեկն էր, ով փախել էր բանտից և հեռակա դատապարտվել մահապատժի: Սակայն ամենակարևորն այն էր, որ նա իր սեփական հայրենիքում անիծված մի ազգի պայքարող և մարտնչող զավակն էր»²²²: Վարդանյանը հյուրընկալում է Արմենակին, իր տանն ապաստան տալիս նորօրյա հայ ֆիդայուն, հոգում նրա կարիքները, ապահովում սնունդով և հնարավորություն տալիս թաքնվել, հանգստանալ, բուժել վերքերը և, բացի այդ, նրան

²²¹ Նույն տեղում, էջ 141:

²²² Նույն տեղում, էջ 142:

առաջարկում է նաև իր ֆինանսական աջակցությունը: Փաստորեն՝ այս ամենը հասարակ ժողովրդի և ֆիդայիների հարաբերությունների ու փոխօգնության մեզ ծանոթ ավանդույթների շարունակությունն է: Հեղինակը կարողացել է նաև շատ խորքային կերպով նկարագրել հայ հոգևորականի ակնածանքն ու սերը հայ ֆիդայու նկատմամբ. «Դուրը թակեցին բացելով դռան փականը՝ նա փաթաթվեց շեմին կանգնած երիտասարդին բղավելով՝ «Արմենակ, Արմենակ, վերջապես ինձ մոտ եկար՝ ֆիդայիների ֆիդայի»²²³:

Նրանց հանդիպումները շարունակական են լինում, որի ժամանակ խոսվում է ազգային խնդիրների մասին: Վարդանյանը և Արմենակ Բաքըրջյանը հանդիպում են ընդհատակյա նկուղային եկեղեցում, զրուցում և բանավիճում տարբեր հարցերի շուրջ: Արմենակը ցանկություն է հայտնում, որ հոգևորականը վերադառնա իր իրական ինքնությանը և չթաքցնի իր ծագումը, սակայն ծպտյալ քահանան այդ առաջարկին համաձայն չի լինում. «Բոլորս փլված մի պատի ենք նման որդիս, սակայն մեզնից ոմանք ուղիղ են մնացել, ոմանք՝ ծովել: Ինձ մի փորձիր վերադարձնել իմ իրական ինքնությանը: Ինձ հանգիստ թող: Ես մի ամբողջ կյանք պայքարել եմ, որպեսզի համակերպվեմ ինձ չպատկանող կեղծ կյանքի հետ»²²⁴: Այս ամենին Արմենակը հակադարձում է. «Մակայն մինչև ե՞րբ ենք մեր սեփական արժեքները թաքցնելու ասես մի անիծված մեղք»²²⁵: Փաստորեն, կարող ենք արձանագրել, որ Արմենակ Բաքըրջյանը շարունակել է դեռևս ուսանելու տարիներին սկսած գործունեությունը, այն է՝ վերադարձնել Հայոց մնացորդաց իրենց ազգային ակունքներին:

Գրքից պարզ է դառնում, որ Արմենակին մտահոգել է նաև ցեղասպանության ժամանակ «փրկված» հայ որբերի և, մասնավորապես, տխրահոչակ թուրք գորավար Քազըմ Քարաբեքիրի հայ որբերից

²²³ Նույն տեղում, էջ 153:

²²⁴ Նույն տեղում, էջ 157:

²²⁵ Նույն տեղում, էջ 159:

կազմված «երեխաների բանակի» հարցը: Խոսելով հայ որբերի բռնի իսլամացման և ձուլման մասին՝ Արմենակն իր մտքերն է կիսել ծպտյալ հայ քահանայի հետ. «Մի պահ պատկերացրու երեխայի ներաշխարհը: Ինչ սարսափելի զգացում է իր մորը, քրոջը բռնաբարած, հորը սպանած մի դահճի կոշիկները ներկել, շորերը կարել, նրա հրամանի ներքո և նույնիսկ նրա հետ միասին իր սեփական ժողովրդի դեմ պայքարել»²²⁶: Հայ վրիժառուի և ծպտյալ քահանայի վերջին հանդիպումից հետո, մի քանի ամիս անց Արմենակը Քարաքոչան գավառում ընկնելով ոստիկանության ծուղակը՝ մինչև վերջ մարտնչում և հերոսաբար զոհվում է: Այս լուրը իմանալուց հետո ծպտյալ քահանան մեծ ցնցում է ապրում և որոշում ամեն գնով այցելել Արմենակի շիրիմին, որը գտնվում էր զինվորների կողմից հսկվող Դերսիմի ռազմականացված տարածքում և, ըստ էության, փակ գոտի էր: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ Արմենակի մահից հետո ծպտյալ հայ քահանան որոշում է, ի վերջո, բացահայտել 70 տարի թացրած իրական ինքնությունը և այդպես այցելել Արմենակի շիրիմին: «Ճիշտ» գրքի հեղինակ Մուրադ Քահրամանը տպավորիչ է պատկերում ծերունու հոգում փոթորկող հույզերը և այն, թե նա ինչպես է ազատվում իր կեղծ անցյալից. «Ամբողջ գիշեր ընդհանրապես չքնեց: Գաղտնի եկեղեցում մինչև առավոտ սպանված փախստական երիտասարդի հոգու հանգստության համար աղոթք արեց: Առավոտյան կողմ տանը եղած նավթն ու յուղը լցրեց բոլոր իրերի վրա: Նոր հագուստներ հագավ: Վզին կախեց մեծ խաչը: Ոտքից գլուխ սևերի մեջ պատվեց: Կլոր մորուքը ասես պոկելով կտրեց և դրեց անկյունում: Ձեռքի լուցկին այրեց և պահեց նավթով պատված դռանը: Կարճ ժամանակում տունը բոցավառվեց»²²⁷:

Հեռանալով գյուղից՝ ծպտյալ քահանան ուղղվում է դեպի Դերսիմ և երկար ժամանակ քայլելուց հետո հասնում է զինվորական մի

²²⁶ Նույն տեղում, էջ 176:

²²⁷ Նույն տեղում, էջ 208:

անցակետի, որտեղ նրան հրամայում են կանգ առնել, սակայն ծերունին ասես չլսելով հրամանը՝ շարունակում է քայլել: Անցակետում գտնվող զինվորները հրամայում են «կանգ առ», «հանձնվի՛ր», սակայն անտեսելով նրանց բղավոցները՝ ծերունին իր յուրահատուկ բողոքն ու ըմբոստությունն է հայտնում 70 տարի թաքցրած և վախվորած կյանքի համար. «Երրորդ անգամ լսեց «կանգնի՛ր, հանձնվի՛ր» հրամանը: Շունչը հավաքեց և բղավեց դեպի այն կողմը, որտեղից լսվում էր հրամանը. «Ամբողջ 70 տարի է, ամեն օր հանձնվում եմ, բավական չէ՞...»: Դեռ խոսքերը չավարտած զիջերվա անդորրը խախտող հրազենի ձայներ լավեցին և նա ընկավ գետնին: Չնայած կրծքին ստացած հրազենային վնասվածքին՝ կրկին ոտքի կանգնեց և փորձեց շարունակել քայլել: Մասսկացող հրազենի կրակոցներից տնքալով գետնին տապալվեց: Վզի խաչը վերցրեց ձեռքը, ցանկացավ համբուրել, սակայն չկարողացավ: Ձեռքերը թուլացած ընկան սառը հողին»²²⁸:

Դրամատիկ զարգացմամբ այս ավարտը միևնույն ժամանակ հոգեբանական ուշագրավ մի տեսարան է, որը պատկերում է երկակի ինքնությամբ ապրող մարդու հույսերի վերջնական կորուստը և այդպիսով՝ նրա անկումը: Ուշագրավ է նաև, որ հայ վրիժառու Արմենակ Բաքրբջյանը փաստորեն եղել է շատ հայերի համար իրենց ազգային հպարտությունը սնուցող կարևոր աղբյուր, որի կորուստը շատերի համար նոր մի ցնցում է եղել:

²²⁸ Նույն տեղում, էջ 209:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԹՈՒՐՔ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինքնության փնտրտուքների խաչմերուկներում, որքան էլ զարմանալի թվա, Գերմանիայում հաստատված թուրք գրողների համար ուսումնասիրման և քննարկման առարկա է դառնում Հայոց ցեղասպանության հարցը: Այս թեմային ծավալուն անդրադարձների ենք հանդիպում հատկապես Գերմանիայի թուրք գրողների 1990-ականների կեսերին գրված ստեղծագործություններում: Անշուշտ, ժողովրդավարական ու ազատական եվրոպական հասարակությունը պարարտ հող էր ստեղծում պատմական իրողությունները բազմակողմանի ուսումնասիրելու և օբյեկտիվ գնահատականներ տալու համար: Արդեն եվրոպական նորմերով մեծացած Գերմանիայի թուրք գրողների համար թերևս փոքր-ինչ ավելի հեշտ էր կոտրել Թուրքիայում այդ ժամանակ դեռ խստագույնս պահպանվող ցեղասպանության տաբուն:

Հարկ ենք համարում նշել, որ թուրքական իշխանությունները մշտապես փորձել են երկրից դուրս բնակվող քաղաքացիների շրջանում պահպանել արտաքին և ներքին քաղաքական մի շարք հարցերի շուրջ՝ ինչպես, օրինակ, Քրդական հարցը, Կիպրոսի խնդիրը, Հայոց ցեղասպանության ժխտումը, իրենց ձեռնառու ընկալումները: Այս նպատակով Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցչություններն, իսկ ավելի ուշ նաև պաշտոնական Անկարայի կողմից ֆինանսավորվող ամենատարբեր հասարակական կազմակերպությունները բավական ակտիվ գործունեություն են ծավալել Գերմանիայում թուրքական համայնքի սկզբնավորման դեռևս առաջին տարիներից: Միջանկյալ շեշտենք, որ Թուրքիայի կառավարության 2010 թ. որոշմամբ արտերկրում բնակվող թուրքերի և ազգակից հասարա-

կությունների վարչության²²⁹ ստեղծումից հետո այս գործունեությունը սկսեց ավելի համակարգված և ուղղորդված բնույթ կրել և ներկայումս իրականացվում է ոչ միայն քաղաքական, հասարակական, այլ նաև կրթական ու մշակութային մակարդակով: Բնական է, որ բոլոր այս մակարդակներում գործող ամենատարբեր թուրքական կազմակերպությունների թիրախային կետերից մեկն էլ մշտապես եղել է Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականությունը և հակահայկական լոբբինգը:

Այս պայմաններում, պարզ է, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ոչ թուրքական տարբերակը ներկայացնող ստեղծագործությունները հիմնականում անընդունելի են թուրքական համայնքի համար: Մրան ավելացնելով Թուրքիայից անխուսափելիորեն եկող բացասական անդրադարձը՝ կարող ենք փաստել, որ նույնիսկ Եվրոպայում բնակվող թուրք գրողի համար ցեղասպանության թեմային անդրադարձ կատարելը բավական համարձակ քայլ է:

Գերմանաբնակ թուրք գրողների շարքում Հայոց ցեղասպանության թեման վեր են հանել Ջաֆեր Շենջաքը, Էմինե Սևգի Օզդամարը, Քեմալ Յալչընը: Ընդ որում, եթե Ք. Յալչընի ստեղծագործություններն որոշ չափով հայտնի են հայ ընթերցողին, իսկ նրա «Միրտս քեզնով է խայտում» գիրքը նույնիսկ հասանելի հայերենով, ապա Է. Ս. Օզդամարի և Ջ. Շենջաքի անունները Հայաստանում գրեթե արծարծված չեն: Մինչդեռ նրանց ստեղծագործություններում Հայոց ցեղասպանությանը վերաբերող ակնարկները, առաջին հայացքից հպանցիկ թվացող հիշատակումները բավական ուշագրավ են:

Ցեղասպանության թեմային փոքրիկ ակնարկով անդրադարձել է նաև ավելի վաղ սերնդի գրող Նիհաթ Բեհրանը: Նրա «Օտարություն» գրքի հերոսներից մեկը՝ Մուսան իր որդուն՝ Վեյսելին քառասունքից դուրս գալուց հետո ուղարկում է Կարսի մոտակայքում

²²⁹ Վարչության մասին մանրամասն տես պաշտոնական կայքէջում՝ <http://www.ytb.gov.tr>

գտնվող հայրենի գյուղում ապրող իր տարեց քրոջ մոտ: Քույրը երեխային չորս տարվա ընթացքում հեքիաթի փոխարեն անընդմեջ 1910-ականների հայկական դեպքերն է պատմում. «Գարբիսյանը 30 մարդով Ուզունմինարեն գրավեց: Իմամ Սեիդը մինարեի վրա երեկոյան էգան էր կարդում: Աբբաս Բեյը ձիով դուրս եկավ Միրզա Բեյի մոտ: Լուր տարավ: Ջիմշիթը Բյոյուք դերերում էգանի ավարտին էր սպասում: Հորթերը սկսեցին բառաչել, ոչխարները մկկալ: Ագռավները զգացին արյան հոտը: Գյուղը տակնուվրա եղավ: Ստվերները սև ամպերի նման կախվեցին երկրի վրա: Չագերը կաղկանձում էին, շները ոռնում: Ձիերը խրտնել էին, թխական հավերը ձագերին հավաքելով բներն էին քաշվում: Նազարյանը դանակը կոկորդում ընկավ Ասլան Բեյի դռան մոտ: Չարկերակից հոտող արյունը ձեռքից շուտ հասավ դռան բռնակին... Երեսը մրջյունները պատեցին: Չայնը խռպոտեց, խեղդվեց»²³⁰:

Ձ. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամություն» վեպը Հայոց ցեղասպանությանը անդրադարձող առաջին ստեղծագործություններից է: 1998 թ. գրված այս վեպով ամբողջանում է ավելի վաղ տպագրված «Ներքնաշապիկով մարդը» և «Պրերիա» ստեղծագործությունների գլխավոր հերոսի՝ Սաշայի կերպարը: Մեծ ճանաչում չվայելող գրող Սաշան փորձում է սեփական ես-ը գտնել գերմանական հասարակության ոլորաններում: Թուրք հորից և գերմանացի-հրեա մորից սերող Սաշան ինքն իրեն հասկանալու համար նույնիսկ մեկնում է ԱՄՆ, սակայն այնտեղ էլ չգտնելով իր հարցերի պատասխանը՝ վերադառնում է Գերմանիա:

«Վտանգավոր բարեկամություն» վեպը սկսվում է տխուր իրողության փաստմամբ. Սաշայի տարիներ առաջ բաժանված ծնողները նրա համար անհասկանալի պատճառով նույն ավտոմեքենայով վթարի են ենթարկվում և զոհվում: Նա՝ որպես միակ ժառանգ, ստանում է բավական լուրջ կարողություն: Սակայն, երբևէ գումարի կա-

²³⁰ Behram N. , Gurbet, İstanbul, 1998, s. 35.

րիք չունեցած Սաշայի համար առավել մեծ կարևորություն է ներկայացնում հորից մնացած արծաթյա տուփը, որտեղ պահված են դեռևս 1936 թ. ինքնասպանություն գործած պապի օրագրերը: Գուցե՞ այս «մոխրագույն կազմով, սովորական ֆրանսիական» տետրերի արաբատառ և ռուսատառ գրությունները լույս կսփռեն պապի տարօրինակ ինքնասպանության պատմության վրա և կօգնեն հերոսին ավարտին հասցնել իր ինքնության փնտրտուքները: Գրականագետ Ջեյմս Ջորդանը գրում է. «Սաշան հույս ունի, որ գոյություն ունի բացահայտման կարոտ հստակ ինքնություն և որ ընտանիքի անցյալը պարզելուն պես բոլոր կապերն ինքնըստինքյան կհաստատվեն»²³¹: Տետրերն այնքան կարևոր են թվում հերոսին, որ նա նույնիսկ չի ուզում դրանց որևէ մեկին ցույց տալ. որոշում է ինքնուրույն սովորել թուրքերեն և համադրելով արաբերենի իր ունեցած սակավ գիտելիքներն ապակոդավորել գրությունները, հետո դրանց հիման վրա պապի մասին վեպ գրել: Որոշ ժամանակ անց, սակայն, Սաշան հասկանում է այդ աշխատանքի անիմաստ լինելը և դիմում թարգմանչի օգնությանը: Մի քանի ամսվա ընթացքում մաս-մաս թարգմանվող տետրերից նա անսպասելի բացահայտումներ է անում:

Այդ պատմության ամբողջ ընթացքում, որը ներառում է տուփը ստանալուց մինչև օրագրերի թարգմանությունները, ընթերցողին ներկայացնելու պահը, երկխոսություններ գրեթե չկան, սյուժեն կառուցված է Սաշայի հոգեվիճակը արտացոլող մտորումների ներկայացման վրա: Այդ մտքերն իրականում ոչ միշտ են կապված պապի օրագրերի կամ ինքնության խնդրի հետ. գրքի 35 գլուխներն արտացոլում են գերմանական հասարակությանը հուզող ամենատարբեր խնդիրների վերաբերյալ այդ խնդիրների պրիզմայում բնակվող հրեաթուրքի տեսանկյունը: Գլուխները հստակ տրամաբանական

²³¹ Jordan J., Zafer Şenocak's essays and early prose fiction: from collective multiculturalism to fragmented cultural identities, Zafer Şenocak, editors: CHeesman T, Yeşilada K., Cardiff, 2003, p. 101.

կապ չունեն՝ իրար հաջորդելով ու միախառնվելով քննության են առնվում պապի ինքնասպանությունից մինչև Բեռլինի պատի քանդման պատճառներն ու հետևանքները ներառող հարցեր:

Գրքի ողջ ընթացքում պապը, ում անունն այդպես էլ հայտնի չի դառնում, բայց ով փաստորեն կարևոր գործող անձ է, միայն հպանցիկ է հիշատակվում: Փաստերն ի մի բերելով՝ հասկանում ենք, որ Սաշայի պապը ծագումով Կարսից է (այստեղից էլ ռուսերենի իմացությունը), 1914-1918 թթ. օսմանյան բանակի զինվոր է եղել: Բաց գույնի մաշկ ունենալու և հայերենին ու ռուսերենին լավ տիրապետելու շնորհիվ հետախուզական աշխատանքով է զբաղվել²³²: Պատերազմի տարիներին սպանդի կամ աքսորի ենթակա հայերի առաջին ցուցակը նա է կազմել: «Այդ ցուցակում 500 անուն պետք է լիներ: Մեկը դուրս է մնացել ցուցակից: Մի կնոջ անուն: Բայց ինչո՞ւ»²³³: Այս հարցն ամենասկզբից հուզում է Սաշային: Հատկանշական է, որ նրան չի հետաքրքրում, թե 500 անուն ներառող ցուցակն ինչ նպատակով է կազմվել: Այսինքն՝ ի սկզբանե հեղինակը նպատակ չի դնում ներկայացնել Հայոց ցեղասպանությունը, այն ավելի շուտ ֆունային երևույթ է, քան հիմնական թեմա: Ուստի զարմանալի չէ, որ հեղինակն որևէ բացատրություն էլ չի տալիս: Միայն պապի օրագրից 1921 թ. փետրվարի 21-ին արված մի գրություն է մեջբերում. «Մեր մշակություն մեղավորություն տերմինը չկա: Մենք միայն մեղք գիտենք: Մեղքը մեր կրոնական, աստվածային գոյության առջև ունեցած պատասխանատվության սահմաններն է շրջագծում: Սակայն երբևէ ինքներս մեր առջև պատասխանատվություն չենք զգում: Մեղավորությունը մարդկային հարց է: Մարդն իր մեղքի հետ միշտ դեմ հանդիման է: Մենք միայնակ մնալուն սովոր չենք»²³⁴:

²³² Şenocak Z., Tehlikeli Akrabalık, İstanbul, 2006, s. 37.

²³³ Նույն տեղում, էջ 38:

²³⁴ Նույն տեղում, էջ 110:

1920-ական թվականներին պապն եղել է քեմալական ազգայնամոլական շարժման ակտիվ մասնակից, կռվել «մեծ փրկիչ» Մուսթաֆա Քեմալի կողքին: Ավելին, «մեծ փրկիչը» Սաշայի պապի ու տատի հարսանիքի վկան է եղել: Հանրապետության հռչակումից հետո պապը կարողացել է լուրջ հաջողությունների հասնել, նույնիսկ Ստամբուլում համայնքապետ դառնալ: Պապի կերպարի ողջ նկարագրությունն այսքանով է սահմանափակվում. ամբողջ գրքի ընթացքում պահպանվող այս հստակության բացակայությունը որոշակի ինտրիգ է ստեղծում:

Ջուտ գերմանական խնդիրներին գրքում բավական լուրջ տեղ հատկացնելու փաստը հստակ արտացոլում է հեղինակի դիրքորոշումը. Գերմանիան կարևորագույն դեր ունի նրա կյանքում: Մինչդեռ Թուրքիային շատ քիչ տեղ է հատկացված: Հերոսի համար Թուրքիան հեռու, անձանոթ մի երկիր է՝ նա ոչ թուրքերեն գիտի, ոչ էլ առանձնապես ծանոթ է թուրքական մշակույթին: «Երբեք թուրքերեն որպես այդպիսին չեմ կարողացել սովորել: Միայն մի քանի բառ գիտեմ: Միջին գերմանական տուրիստից ոչ ավելի», - անկեղծորեն ասում է Սաշան²³⁵: Ավելին, Թուրքիան գրքում ներկայացված է հիմնականում բացասական երանգներով: Օրինակ, պապի կենսագրությունը ներկայացնող մի դրվագ հստակ արտացոլում է Թուրքիայում տիրող ոչ ժողովրդավարական մթնոլորտը. «Պապս 35 տարեկան է: Ուժեղ մարդ է: Համայնքապետի թեկնածու: Մրցակիցն էլ է նույն կուսակցությունից: Պապս կեղծիք է անում, որպես կաշառք ընտրողներին ընտրությունից առաջ ձախ ոտքի կոշիկներ է բաժանում է: Մյուսն էլ ընտրությունից հետո է խոստանում տալ: Պապս ընտրությունից առաջ կոշիկի գործարան է հիմնում: Ընտրություններում հաղթում է»²³⁶: Ավելին, մարտահրավեր նետելով Աթաթուրքի կերպարի անձեռնմխելիությանը՝ հեղինակը մի տեսակ հեզնանքով է

²³⁵ Նույն տեղում, էջ 12:

²³⁶ Նույն տեղում, էջ 38:

գրում բոլորին կրթելու, քաղաքակրթելու նրա մոլուցքի մասին. «Մի-
գուցե նա կարողացավ փրկել, բայց քաղաքակրթել՝ երբեք»²³⁷:

Գրքում զարգանում է երկրորդ սյուժետային գիծ, որն անմիջա-
կան կապ ունի հայերի հետ: Մաշայի կինը՝ գերմանուհի Մարին,
վավերագրական ֆիլմ է նկարահանում Թալեաթ փաշայի մասին:
Թալեաթի կերպարի վերաբերյալ Մարիի դիրքորոշումն հստակ է.
հարյուր հազարավոր անմեղ զոհերի համար պատասխանատուն
արդարացում չունի, սակայն այս փաստը զարմանալիորեն տհաճ է
Մաշային: Որքան էլ նա հեռու է իր թուրքական արմատներից, այ-
նուամենայնիվ նա ըմբոստանում է Թալեաթ փաշայի ցեղասպան,
վայրենի թուրքի կերպարի դեմ: Նա նույնիսկ կնոջը մեղադրում է
Թալեաթ փաշայի կերպարը միայն եվրոպական աղբյուրների հի-
ման վրա ձևավորելու մեջ և առաջարկում նրան ծանոթանալ Թա-
լեաթի գործունեությանը նվիրված թուրք հեղինակների անդրա-
դարձներին՝ միակողմանի կարծիքից խուսափելու համար: Դիմելով
կնոջը և կնոջ կերպարում, անշուշտ, ամբողջ Եվրոպային, նա ասում
է. «Իսկական արևելյան ժողովուրդ հայերին արևմտյան են համա-
րում միայն այն բանի համար, որ մուսուլմանների շրջապատում
ապրող քրիստոնյաներ են: Սրա հետ մեկտեղ տարածաշրջանի բո-
լոր ժողովուրդներից առավել ուժեղ արևմտյան կողմնորոշում ունե-
ցող թուրքերին մուսուլման լինելու պատճառով երբեք Եվրոպայի,
Արևմուտքի մաս չեն համարում»²³⁸: Ավելին, ժխտելով հայերին կո-
տորելու թուրքերի միտումը՝ միաժամանակ պատմությունից օրի-
նակներ բերելով, Մաշան ուզում է ցույց տալ, որ նույնիսկ եթե հայե-
րի զանգվածային սպանություններ են եղել, դա դեռ տազնապ բարձ-
րացնելու առիթ չէ. «Ֆրանսիացիներն էլ Ալժիրում են կոտորած կազ-
մակերպել, իսկ բրիտանացիներն ընդհանրապես աշխարհի կեսը
կողոպտել են, սակայն նրանց Եվրոպայի խորհրդից և Եվրոպայի

²³⁷ Նույն տեղում, էջ 30:

²³⁸ Նույն տեղում, էջ 15:

միությունից չեն հանել: Դուք, եվրոպացիներդ, կեղծ խաղ եք խաղում, երկերեսանի եք: Սպիտակ մարդը միշտ երկերեսանի է»²³⁹: Մաշան ինքն իրեն հարցնում է. «Թալեաթ փաշան Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հարյուր հազարավոր հայերի բռնագաղթի համար պատասխանատու է: Ինչպե՞ս կարող էր լուսավորության կողմնակից, հաջողակ քաղաքական գործիչը զանգվածային սպանության կազմակերպիչ լինել»²⁴⁰: Հարցը մնում է անպատասխան: Մարին մեկնում է Սալոնիկ, ապա Թուրքիա նոր նյութեր հավաքելու համար: Ընթերցողը չի իմանում, սակայն, թե ինչեր է նա այնտեղ բացահայտում իր համար, նոր տեղեկություններն ամբաստանում են նրա կարծիքը թե՞ գուցե ստիպում հրաժարվել հստակ գնահատականներից: Կարծես հեղինակը չի ուզում կարծիք պարտադրել, միայն մտածելու համար հիմք է ստեղծում:

Մաշայի մեկը մյուսին հետևող մտքերի հորձանուտում պապի մասին տրվող ցաքուցրիվ տեղեկություններն ամբողջանում են գրքի վերջին գլխում: Տեսրերն ընթերցված են, պապի ու, հետևաբար, նաև ամբողջ ընտանիքի պատմության մի մեծ գլուխ՝ բացահայտված: Փաստորեն, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին որպես օսմանյան զինվոր պապը մասնակցել է հայերի տեղահանությանը: Արդեն հիշատակված ցուցակի նպատակը կազմակերպված աքսորն էր: 500 հոգուց միայն մեկի անունն է ջնջել, մնացածներից և ոչ մեկի չի խղճացել, ոչ մեկի հանդեպ մեղքի զգացում չի ունեցել: Ավելին, չնայած երկիրն աղքատացել է, բայց նա կարողացել է երկրի արևելքում ստեղծված կողոպուտի հնարավորություններն օգտագործել և տեղահանվածների «լքյալ գույքի» հաշվին հարստանալ, քանի որ, իր իսկ վկայությամբ, «նրանց վերադարձն անհնարին է: Դրա համար անհրաժեշտ ամեն ինչ արված է»: Մաշան, վերածնակերպելով պապի նոթերը, գրում է. «Հաշվի չէր առնում, որ մի օր նո-

²³⁹ Նույն տեղում էջ 65:

²⁴⁰ Նույն տեղում, էջ 67:

րից ստիպված է լինելու անցյալի մասին մտածել: Երեկ երեկ էր, այսօր այսօր է, հատկապես, երբ պետք է անցած-գնացածը մոռանալ»: Ավելին, պապը գտնում էր, որ իր երկրի անցյալով կարող է հպարտանալ, քանի որ «նույնիսկ բոլոր պարտություններից հետո ոտքի վրա մնաց: Ամեն անգամ վերջնական հաղթանակին հավատաց: Հաղթեց: Թանկ վճարեց: Սակայն, եթե հաղթանակի համար թանկ չես վճարում, հաղթանակն արժեք չի ունենում: Իրական հաղթանակները ձեռքբերման հետ կապ չունեն: Կորուստներով են լի»²⁴¹:

Պապն էլ, չնայած հաղթանակել է, հերոս է հռչակվել, բայց կորցրել է իր կյանքի ամենակարևոր կնոջը, իր կյանքի իմաստը: Նորից մեջբերելով պապին՝ Մաշան գրում է. «Այն կնոջը սիրում էր: Այն ժամանակ, սակայն, դեռ չգիտեր, թե սերն ինչպիսի զգացմունք է: Կարծում էր, որ այդ զգացմունքն իրեն չի սագում: Սպանելու համար էր պետք պայքարել, ոչ սիրելու: Այն ժամանակ կյանքն իմաստ ուներ»²⁴²: Ճակատագրի հեզնանքով այդ կինը հայուհի է: Նրա անունն է ջնջել տխրահոչակ ցուցակից: Ընթերցողի համար, սակայն, անհայտ մնացող պատճառներով այդ կինն էլ է տարագրվել: 1936 թ. անցյալից ստացված մի նամակ տակնուվրա է անում պապի կարծես թե հաջողված կյանքը: Նամակից ընդամենը մի քանի տող մեջբերելով՝ հեղինակը ներկայացնում է մի ամբողջ կործանված կյանք: Կինը գրում է. «Մեր աղջիկը քեզ չի ճանաչում: Մինչդեռ արդեն 20 տարեկան է: Կարծում է, հայրը մահացել է: Այնքան էլ հեռու չի ճշմարտությունից, այնպես չէ՞: Թե ինձնից անտեղյակ դեռ ապրում ես: Եթե այլևս չկարողանանք միասին լինել, կյանքիդ վերջ ես տալու, չէ՞ իր խոստացել... Փախուստի ճանապարհին հազար անգամ հարձակումների ենթարկվեցի: Գուցե մեր երեխան էլ քեզնից չի, դեմս դուրս եկած դահիճներից և զինվորական համազգեստով վիժվածքներից

²⁴¹ Նույն տեղում, էջ 124:

²⁴² Նույն տեղում, էջ 126:

է»²⁴³: Պապի դասավորված կյանքն մի ակնթարթում տակնուվրա է լինում: «Դողում էր, - պատմում է թոռը,- կյանքի միակ սիրած կինը նա էր: Ինչպե՞ս էր այսքան տարի առանց նրա ապրել: Ինչպես՞ էր կարողացել ուրիշ կնոջից երեխա ունենալ»: Նա այլևս չի կարող սպասել: Նա իրագործում է իր խոստումը:

Գիրքը նման վերջաբան է ունի: Ոչ մի մեկնաբանություն: Ի՞նչ է զգում Սաշան: Ինչպե՞ս է փոխվում նրա աշխարհայացքը: Զոհի ու դահիճի արյունը կրելու գիտակցությունը ի՞նչի կհանգեցնի: Ոչ մի հստակ պատասխան: Ցեղասպանությունը գրքի սյուժեի առանցքային մասն է կազմում, սակայն կարծես չշոշափված է մնում: Չկան մանրամասն նկարագրություններ, փաստեր, թվեր: Ինչո՞ւ, ինչպե՞ս և ո՞ւր են ուղարկել հայերին, ի՞նչ է պատահել նրանց հետ: Այս հարցերի պատասխաններն ամփոփված են վերը նշված հակիրճ նախադասություններում: Հայերը տեղահանվել են, սպանվել, կողոպտվել, ունեզրկվել: Ավելին, երիտթուրքերն ու քեմալականները գրեթե նույնականացված են՝ պապի անցումը մի թևից մյուս թև հեշտ ու բնականոն է թվում: Այս ամենը, սակայն, պարզ գրված չէ, այս ամենը պետք է տեսնել տողատակերում: Գրականագետ Լ. Անդերսոնը գրում է. «Տեքստն (ի նկատի ունի Զ. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամությունը») երբեք հստակ չի ներկայացնում 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Սակայն այն առաջինն է ներկայացնում հայերի տեղահանության ցուցակները»²⁴⁴: Թերևս Զ. Շենոջաքը միտումնավոր չի տալիս պատրաստի լուծումներ՝ թույլ տալով, որ ամեն մարդ ինքն իր համար որոշի հնարավոր հանգուցալուծումը: Այսպիսով, Զ. Շենոջաքի «Վտանգավոր բարեկամություն» վեպը յուրօրինակ անդրադարձ է Հայոց ցեղասպանության թեմային: Գրքում թեև քողարկված, բայց ներկայացված են Հայոց ցեղասպանության հիմնական

²⁴³ Նույն տեղում, էջ 127:

²⁴⁴ Adelson L. A.,_The Turkish Turn in Contemporary German Literature: Toward a New Critical Grammar of Migration, New York, 2005, p. 108.

պատկերները, սակայն չկա որևէ քննադատություն, բացասական վերաբերմունք, բայց միևնույն ժամանակ բացակայում են նաև ստահող ժխտողականությունն ու խեղաթյուրումը:

Հարկ է նշել, որ Հայոց ցեղասպանությանը վերաբերող անդրադարձներ հանդիպում ենք Ջաֆեր Շենոզաքի նաև այլ ստեղծագործություններում: Օրինակ, նրա «Ուր ենք գնում» վեպի գլխավոր հերոսի՝ արվեստի գործերի ոչնչացմամբ զբաղվող թուրք երիտասարդ Ջումեյթի երազների կինը՝ Լարան, ով փոքր հասակում իրեն դայակություն է արել, ծագումով հայ է: Հեղինակը ներկայացնում է Լարայի կյանքի պատմությունը: Նրան գտել են գնչուներն լքված գյուղերից մեկի ավիրված եկեղեցու դռան մոտ՝ մի ծածկոցի մեջ փաթաթված: Գնչուները նրան որոշ ժամանակ իրենց մոտ պահելուց հետո վաճառել են²⁴⁵: Շատ դառը օրեր է ապրել Լարան և որ ամենասարսափելին է ութ տարեկան հասակում ենթարկվել է դաժան սեռական բռնությունների, որի բաց նկարագրությունը տրվում է գրքում²⁴⁶:

Այսպես, ձեռքից ձեռք անցնելով, 15 տարեկանում Լարան հասել է Ջումեյթի տուն, որի ընտանիքում ապրած տարիները Լարայի համար ամենաերջանիկն են եղել: Այդտեղից էլ, սակայն, ստիպված հեռացել է. «... օդանավակայանի ճանապարհին փողոցները դատարկ էին, քանդրտված: Նկատեց, որ հայերին և հույներին պատկանող կամ այդպիսիք համարվող խանութները կողոպտված են...»²⁴⁷ Ինքնաթիռ նստելիս հասկացավ, որ Ստամբուլ այլևս երբեք չի վերադառնալու: Այո՛, այո՛, մի ժամանակ իր ընտանիքի հայրենիքը համարվող, սակայն այժմ արդեն նրան չընդունող, օտարի աչքով նայող այս երկիր չէր վերադառնալու»²⁴⁸: Լարայի հանկարծակի հեռանալու

²⁴⁵ Şenocak Z., Yolculuk Nereye, İstanbul, 2007, s. 37.

²⁴⁶ Նույն տեղում, էջ 31-32:

²⁴⁷ Հավանաբար ի նկատի ունի 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի պոգրոմները:

²⁴⁸ Şenocak Z., նշված աշխ., էջ 36:

գաղտնիքն այդպես էլ չբացահայտված է մնում: Արդեն մեծահասակ Ջումեյթն հիշում է, որ մայրը Լարայի գնալու մասին իր հարցին շատ խորհրդավոր տոնով պատասխանել է, որ Լարայի համար ուրիշ երկրում ապրելն ավելի լավ կլինի, քանի որ նա հայ է²⁴⁹: Նույնիսկ տարիներ հետո Թուրքիայի հետ կապերը լիովին կտրած Ջումեյթի համար այս փաստն անհասկանալի է մնում: Լարայի կերպարը ներկայացնելով՝ Ջ. Շենոջաքը փաստորեն ներկայացնում է հազարավոր հայ երեխաների ճակատագիրը, որոնք դատապարտված են եղել կիսաստրկական կարգավիճակով ապրել թուրքերի ու քրդերի տանը, իրենց ուսերին կրել կենցաղի ծանր բեռը և նույնիսկ դառնալ նրանց սեռական ստրուկները:

Լարայի պատմության մեջ ուշագրավ է այն, որ տարիներ անց նրան հաջողվում է Փարիզում գտնել իր մորն ու մինչև վերջինիս մահը վայելել այն սերն ու ջերմությունը, որ երբեք չէր տեսել: «Այդ երկու տարիները Լարայի կյանքի ամենակարևոր փուլն էին: Մոր հետ երկար-երկար խոսակցությունների ընթացքում ճանաչեց ընտանեկան նկարին պատկերված շատ դեմքեր, բազմիցս լսեց այդ դեմքերի անուններն ու պատմությունները, նրանց տեղավորեց իր հիշողության մեջ և վերագտավ իր ինքնությունը, որի մասին տարիներ շարունակ անտեղյակ էր եղել»²⁵⁰: Ցեղասպանությունից հետո մասնատված ընտանիքների կարևորագույն հարցն էլ՝ վերամիավորումը և ինքնաճանաչումը փաստորեն դուրս չի մնում թուրք գրողի ուշադրությունից:

Ջ. Շենոջաքի Հայոց ցեղասպանությանը կատարած անդրադարձների մասին խոսելիս, կցանկանայինք ներկայացնել նաև 2005 թ. գերմանական թերթերից մեկում տպագրված «Ժխտված ցեղաս-

²⁴⁹ Նույն տեղում, էջ 40:

²⁵⁰ Նույն տեղում, էջ 35:

պանություն» հողվածին²⁵¹: Եթե վեպերում ցեղասպանությունը ներկայացված է փոքր ինչ քողարկված, ապա հողվածում Ջ. Շենոջաքը գրում է, որ Հայոց ցեղասպանության հարցում թուրքական մերժողականությունը, առավել ևս հայկական սփյուռքին ազգայնամոլության մեջ մեղադրելու փորձերը բացահայտ անամոլություն են: Նա շեշտում է, որ Թուրքիայի կողմից ցեղասպանության ճանաչումը հույժ կարևոր է և ոչ մի դեպքում չի կարող փոխարինվել քննարկումներով կամ պատմաբանների տված գնահատականներով: Հեղինակը սակայն ցավով նշում է, որ ժխտողականությունն այնքան խորն է արմատավորվել թուրք հասարակության մեջ, որ դրանից հրաժարվելը դարձել է ինքդ քեզ դավաճանելու պես մի բան: Ամենից շատ Ջ. Շենոջաքին անհանգստացնում է այն փաստը, որ թուրքական իշխանությունները հայերի ողբերգությունն օգտագործում են Գերմանիայում թուրքական ազգայնամոլությունը բորբոքելու համար: Նման վերաբերմունքը սխալ և անթույլատրելի որակելով՝ մտավորականը դա համարում է արտերկրում բնակվող թուրքերի իրական խնդիրների նկատմամբ կատարյալ անտարբերություն և նրանց միայն սեփական շահերը առաջ տանելու գործիքի վերածելու փորձ:

Ինչպես արդեն նշել ենք, Հայոց ցեղասպանության թեման իր արտացոլումն է գտել նաև Էմինե Սևգի Օզդամարի ստեղծագործություններում: Ի տարբերություն Ջ. Շենոջաքի, Է. Ս. Օզդամարն, ապրելով իր գիտակից կյանքի մեծ մասը Թուրքիայում և այնտեղի միջավայրին շատ լավ ծանոթ լինելով, իր ստեղծագործություններում հիմնականում անդրադառնում է թուրքական իրականությանը կամ գոնե խնդիրները ներկայացնում շարքային թուրքի տեսանկյունից: Նրա ստեղծագործություններից անպակաս են Թուրքիայի խուլ գյու-

²⁵¹ Հողվածի ամբողջական տարբերակն հասանելի է <http://www.signandsight.com/features/154.html> կայքում:

դերն իրենց սնապաշտ կենցաղով, Ստամբուլն իր աղմկոտ փողոցներով:

Է. Ս. Օզդամարի ստեղծագործություններում Հայոց ցեղասպանությունը ոչ թե պուժեի բաղադրիչ մասն է, այլ կարծես հերոսների կյանքի լուսանցքներում մնացած դրվագ: Նրա գրքերից տպավորություն է ստեղծվում, որ ցեղասպանության հիշողությունը կարող է ցանկացած թուրք ընտանիքի անցյալի մի մասը լինել՝ հատկապես եթե այդ ընտանիքը սերում է Թուրքիայի արևելյան նահանգներից: Է. Ս. Օզդամարը ցեղասպանությունը ներկայացնում է որպես իր տատի և պապի կենսագրության փոքրիկ, բայց անբաժանելի հատված: Ընդ որում՝ ցեղասպանությանը վերաբերող մեկ-երկու դրվագ կրկնվում են հեղինակի կյանքի տարբեր էտապներ ներկայացնող ինքնակենսագրական վեպերում ու պատմվածքներում:

Է. Ս. Օզդամարի հորական տատը ծագումով Կապադովկիայից է եղել, ուր մեծ թվով հայեր են բնակվել: Ցեղասպանության ժամանակ երիտասարդ աղջիկը ակնատես է եղել սպանդի և դաժանությունների: Տասնամյակներ անց ցեղասպանության պատկերներն հանգիստ չեն տալիս յոթ երեխա կորցրած այս կնոջը: Ուստի զարմանալի չէ, որ տատի մասին խոսելիս, Է. Ս. Օզդամարը ամեն անգամ մեջբերում է հետևյալ տողերը. «Տատս հանկարծակի վեր էր թռչում տեղից, վազում պատուհանի մոտ ու գոռում. «Աբոոոո՛, Աբոոոոոո՛, Աբոոոո՛, հայ հարսներն ինչպես իրենց կամուրջներից զցեցին: Հետո նորից տեղն էր նստում»²⁵²: Մեկ-երկու կարճ նախադասությունն էլ բավական է, որ ընթերցողի աչքի առաջ հառնեն Հայոց ցեղասպանության սարսափագրու տեսարանները: Է. Ս. Օզդամարի վկայությամբ, տատն իրեն պարտավոր էր զգում նաև օգնել Ստամբուլի իրենց բնակարանի շրջակայքում բնակվող հայերին: Հատկապես հաճախ է հեղինակը հիշատակում իրենցից մի քանի

²⁵² Özdamar E. S., Hayat Bir Kervansaray İki Kapısı Var Birinden Girdim Birinden Çıktım, İstanbul, 2007, s. 45.

տուն այն կողմ նկուղում բնակվող ծեր հայուհուն, ով գրպանում միշտ չոր հաց էր պահում, որպեսզի սովից չմեռնի, եթե նորից ստիպված լինի քարանձավում թաքնվել²⁵³:

Եթե Է. Ս. Օզդամարի հորական տատը պարզապես ողբերգական դեպքերի ականատեսն էր եղել և ամբողջ կյանքում փորձել է ինչ-որ կերպ օգնել հայերին և աղոթել զոհերի հոգիների հանգստության համար, ապա մորական պապը ներգրավված է եղել հայերի տեղահանության գործին: Կոտորածի ժամանակ տեսել է կամրջից գետը նետվել ցանկացող հայուհուն և փրկել նրան: Է. Ս. Օզդամարի մայրն այսպես է բնորոշում հորը. «Դաժան մարդ չէր: Երիտասարդ հայ աղջկան կոտորածից փրկելու դիմաց երկրորդ անգամ ամուսնացավ նրա հետ»: Սակայն աղջիկն այդպես էլ չի կարողանում հաշտվել իր ճակատագրի հետ, ամուսնուն չի ներում, իսկ տեղահանության ժամանակ ապրած վախերն անհետևանք չեն անցնում: Նրա հոգեկան աշխարհը խանգարվում է: Գրողի մայրը պատմում է. «Հայ մայրս կարծում էր հողը կրակից է, վախից բակ դուրս չէր գալիս, միշտ տանն էր մնում: Հավատացեք ինձ, հայրս կրակը պակասեցնելու համար նրա ոտքերը սառը ջրով լվանում էր»²⁵⁴: Նույնիսկ հոգատարության նման արտահայտումները չեն ստիպում նրան ներել ամուսնուն կամ գոնե խոսել նրա հետ: Միայն մահից առաջ աղջկան ասում է, որ հորը փոխանցի. «Ասա նրան ներել եմ, ազատ է»²⁵⁵: Այս պատմությունը կրկին ներկայացնում է ցեղասպանության ժամանակ հայ կանանց անելանելի վիճակը, թուրք, քուրդ ու արաբ տղամարդկանց բարեհաճությունից կախված լինելը, հազարավոր խեղձված ճակատագրերի անհայտ մնալը:

²⁵³ Özdamar E. S., Tuhaf Yıldızlar Dünyaya Bakıyorlar Gözlerini Kırpmadan, İstanbul, 2012, s. 194.

²⁵⁴ Özdamar E. S., Hayat..., s. 228.

²⁵⁵ Նույն տեղում:

Հայոց ցեղասպանությանը և առհասարակ Թուրքիայի հայության խնդիրներին Է. Ս. Օզդամարն անդրադառնում է նաև Հրանտ Դինքի սպանության կապակցությամբ գրված իր հոդվածում: Հոդվածը սկսվում է հետևյալ պատկերով. «Սևացավ ծովը... Բեռլինյան տաքսի եմ նստել: Ձեռքիս բաց թերթ: Թերթում մի դիակ: Այնտեղ պառկած է, մեջքով դեպի ինձ: Հրանտ Դինքի մեջքն է: Սպանել են: Մի հունվարյան օր, Ստամբուլում: Ո՛չ Հրանտ Դինք, ո՛չ Հրանտ Դինք, այս երկրում աղավնիներին սպանում են»²⁵⁶: Այնուհետև գրողը սկսում է երևակայության մեջ երկխոսել Սև ծովի հետ: Ծովը լալիս է. «Ամեն արցունքում մի դիակ կա, անգույն և հազագող: Ինչքա՛ն ժամանակ է, գերեզման չունեցող դիակների հետ է ապրում: Այստեղ մնացեք, իմ մեջ այնքան մահ կա որ... Պոնտոսի հույներ, հայեր, թուրքեր, արաբներ, հռոմեացիներ, սլյուֆեր, մաքրոններ, քոլիներ, քարդուքներ, վրացիներ, աբխազներ... նրանց երեսներին նայեք: Շուրթերը դեռ գլուղերի անուններն են մրմնջում: Լսեք, լսեք»²⁵⁷: Ծովը դիմում է մարդկանց. «Է՛յ, ամերիս մոտ այժմ ապրող թուրքեր, Պոնտոսի հույները, հայերը չկան, ձեր արյունը ավելի մաքր՞ւր է, ձեր արյունը մաքրվե՞լ է»²⁵⁸:

Երևակայական երկխոսությունից գրողն անցնում է իրական գրույցի տաքսու վարորդի հետ: Վարորդն ասում է. «Ես էլ լաց եղա, քույրիկ²⁵⁹: Ամաչում եմ, որ մարդասպանը Սև ծովի կողմերից է: Ես էլ եմ Սև ծովից: Հրանտ Դինքը նրանց ի՞նչ է արել: Այդ ֆաշիստը չի կարող սևծովցի լինել: Մենք ֆաշիստ չենք²⁶⁰... Բայց եթե այդպես է, ուրեմն ես այլևս թուրք չեմ»²⁶¹: Տաքսիստը շարունակում է. «Ո՛վ գիտի, Ստամբուլի հայերն ու հրեաները ինչքան են վախենում: Իսկ

²⁵⁶ Özdamar E. S., Aynadaki Avlu, İstanbul, 2012, s. 130.

²⁵⁷ Նույն տեղում, էջ 132:

²⁵⁸ Նույն տեղում, էջ 133:

²⁵⁹ Նույն տեղում:

²⁶⁰ Նույն տեղում, էջ 134:

²⁶¹ Նույն տեղում:

նրանց պետք է պաշտպանել: Նրանք մեր դեմոկրատիայի երաշխիքն են: Եթե մեր հայերին ու քրդերին չկարողացանք պաշտպանել, Թուրքիան ԵՄ ինչպե՞ս կմտնի»²⁶²:

Հայոց ցեղասպանության անբաժան մասը հանդիսացող բռնի իսլամացումները գեղարվեստի նյութ է դարձրել Թուրքիայից Գերմանիա մեկնած, ծագումով քուրդ Քեմալ Յալչընը: Եթե Ջ. Շենոջաքը և Է. Ս. Օզդամարը ցեղասպանության թեմային անդրադառնում են հպանցիկ, փոքրիկ նկարագրությունների ձևով, ապա Ք. Յալչընի «Քեզնով է ուրախանում սիրտս», «Սարը գելին» վեպերում և «Անատոլիայի զավակները. 100-ամյակի վկաները» փաստագեղարվեստական գրքում մանրամասն ներկայացված են իսլամացված հայերի կենցաղը, նրանց կրած զրկանքներն ու կորցրած երազանքները, ցեղասպանությունից մազապուրծ հայերի նկատմամբ թուրքական պետության վարած հետագա քաղաքականությունը:

«Սարը գելին» վեպում Քյոլնում բնակվող Ադյամանցի մի քուրդ ընտանիքի պատմության համատեքստում բացահայտվում է թուրքական պետության վարած իսլամացման քաղաքականության խորքային բնույթը և կրոնափոխվածների ողբերգությունը, որ չի փարատվում նույնիսկ ցեղասպանությունից մեկ դար անց: Գրքի հերոսուհին՝ Շիրինը, դպրոցահասակ տարիքում է իմանում իր հայ լինելու մասին: Հայրը՝ հաջր Իբրահիմն է նրան պատմում. «Աղջիկս, մի ժամանակ մեծ աղետ է եղել, մեր հայ նախնիների մեծ մասը մահացել, սպանվել է... Ես էլ հաստատ չգիտեմ: Եղել անցել է: Կենդանի մնացողները փրկվելու, ապրելու համար իսլամ են ընդունել... Ցերեկը մզկիթ էին գնում, գիշերները տանը գաղտնի-գաղտնի խաչակնքվում... Մի օր չէ, երկու օր չէ... Մարդիկ, որոնք ամբողջ կյանքը ստիպված են շրջապատի մարդկանցից թաքուն ապրել... Ահա մենք այդ մարդկանցից ենք: Իրար գիտենք: Ասեմ հայ ենք, հայ չենք, ասեմ մուսուլման ենք, մուսուլման էլ չենք: Մենք ահա այս բախտի մար-

²⁶² Նույն տեղում:

դիկ ենք... Ազգուտակով, ցեղով, արմատով հայ ենք, լեզվով՝ քուրդ, կրոնով՝ մուսուլման: Մարդ առանց իր ցանկության ինչքան կարող է մուսուլման լինել, այդ չափով էլ մուսուլման ենք»²⁶³: Աղջկա համար վերջապես պարզ է դառնում, թե ո՞վքեր էին այն տարօրինակ «մերոնք», որոնք ժամանակ առ ժամանակ իրենց տուն էին գալիս, և ով, ծնողների հետ խոսելիս, աչքերով խոսելու տարօրինակ, բոլորի համար անհասկանալի, գաղտնի լեզու էին կիրառում²⁶⁴: Թուրքիայում տիրող վախի, անվստահության մթնոլորտն էլ ավելի ակնառու է դառնում, երբ Շիրինն արձակուրդներին գնում է Աղըյաման. հարազատներն անընդհատ խնդրում են նրան զգույշ արտահայտվել, ոչ ոքի չվստահել: Չորս կողմից նրան ասում են. «Աման, աղջիկս, նա տաճիկ է: Մի վստահիր», «Աման, Շիրին, նա մերոնցից չի, լոիր», «Աղջիկս, ձագուկս, այստեղ Գերմանիա չէ: Շատ ուշադիր եղիր, ո՞ւր ես գնում, ի՞նչ ես ասում»²⁶⁵:

Աղյամանցի ծպտյալ հայ-հերոսների պատմությունների միջոցով հեղինակը ներկայացնում է ցեղասպանության հետևանքները: Շիրինը հարազատներից իմանում է, որ տեղի հարուստների ունեցվածքի մեծ մասը հայերին է պատկանել: «Չկարծես, որ այդ տաճիկի հարստությունը հորից է մնացել: Հայ Հակոբի ունեցվածքով հարուստ դարձավ: Սակայն հարամ ունեցվածքը հալալ չի լինում: Աստված տա, մի օր մի ցավի գա, սատկի» կամ «Մի նայի այն աղայի գլուխ գովալուն: Հայ արքորյալների քարավանները կողոպտողների ղեկավարներից է եղել: Հայերի ոսկիները կարասներով է տուն բերել: Բայց Աստված ամեն ինչ գիտի, մի օր պատիժը կստանա»²⁶⁶:

«Անատոլիայի գավակները. 100-ամյակի վկաները» գրքում տեղ է գտել Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկո-

²⁶³ Yalçın K., Sarı Gelin, İstanbul, 2005, s. 59.

²⁶⁴ Նույն տեղում, էջ 49:

²⁶⁵ Նույն տեղում, էջ 94:

²⁶⁶ Նույն տեղում, էջ 95:

պոս Բեքչյանի պատմությունը: «Ես բարեկամներ, քեռիներ, պապիկներ, տատիներ չունեի: Նախանձում էի տատիկ-պապիկ ունեցող երեխաներին: «Մայրիկ, իմ տատիկ, պապիկներն ու՞ր են», - հարցնում էի: Մայրս կամ լռում էր, կամ էլ պատասխանում. «Մահացել են»: Ու սկսում էր լացել: Ոչ մի բան չէի հասկանում»²⁶⁷: Երբ 18 տարեկան դարձա, մայրս ասաց, որ մի շարք հիշողություններ ունի, բայց ինձ չի ուզում պատմել, որ չտխրեցնի: Երբ պնդեցի. «Պատմիր դառը հիշողություններդ, ես էլ եմ ուզում իմանալ», պատմեց: «Որդիս, - ասաց, - իմ կողմը հարուստ, շատ մեծ ընտանիք էր: 8-9 քեռի ունեիր: 1915 թ. նրանք աքսորվեցին և նրանցից լուր էլ չեղավ: Մայրս, այս դառը հիշողություններն պատմելիս, սակայն չասաց, թե ինքն ու հայրս ինչպես են փրկվել: Մի քանի անգամ հարցրի: Ասաց. «Ոչ դու հարցրու, ոչ էլ ես ասեմ»²⁶⁸:

Այսպիսով, կարելի է ասել, որ Հայոց ցեղասպանության խնդիրը 1990-ականների սկզբից եղել է գերմանաբնակ թուրքերի առաջադեմ որոշ ներկայացուցիչների ուշադրության ոլորտում: Թուրք գրողների երբեմն մանրամասն, երբեմն էլ հպանցիկ անդրադարձները մի կողմից մասնագետներին ուսումնասիրման համար բավական հետաքրքիր նյութ են տալիս, մյուս կողմից էլ գերմանացի կամ թուրք ընթերցողին թույլ են տալիս ծանոթանալ XX դարասկզբի մեծ ողբերգության առանձին դրվագների հետ:

²⁶⁷ Yalçın K., Anadolu'nun Evlatları: Yüz yılın Tanıkları, Köln, 2008, s. 112.

²⁶⁸ Նույն տեղում, էջ 113:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գրքեր

Հայերեն

1. Աբելեան Գ., Ցկեանս նահատակութիւն, Այնճար-Լիբանան, 2005:
2. Եալչըն Բ., Հոգիս քեզմով կը խայտայ, Երևան, 2003 (թարգմանիչ՝ Գարեգինարքեպիսկոպոս Բեքչյան):
3. Լեփսիոս Յ., Գերմանիան և Հայաստանը 1914-1918 թթ. (դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու) Հատոր 1, (թարգմանիչ՝ Վ. Մինայան) Երևան, 2006:
4. Խառատյան Հ., Նեյզի Լ., Խոսելով միմյանց հետ՝ անձնական հիշողություններ անցյալի մասին Հայաստանում և Թուրքիայում, Մտամբուլ, 2010:
5. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆեսոր Ջ. Կիրա-կոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972:
6. Մարության Հ., Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում, Երևան, 2006:
7. Մարության Հ., Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Երևան, 2009:
8. Մինախորեան Վ., 1915 թականը. արհաւիրքի օրեր, Թեհրան, 2006:
9. Պալաքյան Գ., Հայ գողգոթան, Երևան, 1991:
10. Սվազյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Երևան, 2000:
11. Օտեան Ե., Անիծեալ տարիներ 1914-1919 (անձնական յիշատակներ), Երեւան, 2004:

Թոնրթրթնն

12. Abakay A., Hoşana'nın Son Sözü, 2-inci baskı, İstanbul, 2013.
13. Adak H., Halide Edib ve Siyasal Şiddet: Ermeni Kırımı, Diktatörlük ve Şiddetsizlik, İstanbul, 2016.
14. Andaç F., Anadolu aydınlanmacısı Fakir Baykurt, İstanbul, 2000.
15. Atnur İ., Türkiyede Ermeni Kadınları ve Çocukları Meselesi (1915-1923), Ankara, 2005.
16. Altınay A., Çetin F., Torunlar, İstanbul, 2009.
17. Bağı Y., Ermeni Kızı. Ağçık, İstanbul, 2007.
18. Bardakçı M., Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, İstanbul, 2009.
19. Başyurt E., Ermeni Evlatlıklar: Saklı Kalmış Hayatlar, 2-inci baskım, İstanbul, 2006.
20. Baykurt F., Çilli, Karın Ağrısı, Cüce, 4. baskı, İstanbul, 1975.
21. Behran N., Gurbet, İstanbul, 1998.
22. Belge M., Edebiyatta Ermeniler, İstanbul, 2013.
23. Bildirici F., Serkis Bu Toprakları Sevmiştii, İstanbul, 2008.
24. Caferoğlu A., Doğu İllerimiz Ağızlarından Toplamalar, Ankara, 1995.
25. Can H., İttihatçı-Kemalist İdeolojiden Kurtulamamış Sosyal Şoven TKP'nin Üyesi Bir Şair: Nazım Hikmet ve Kürtler, 2-inci baskı, İstanbul, 2010.
26. Çelik A., Dinç N. K., Yüz Yıllık Ah: Toplumsal Hafızanın İzinde 1915 Diyarbakir, İstanbul, 2015.
27. Çetin F., Anneannem, 5-inci basım, İstanbul, 2005.
28. Hikmet N., İlk Şiirler, İstanbul, 2000.
29. Holmes M., Urfâ'da Ermeni Yetimhanesi (1919-1921), İstanbul, 2005.
30. Kahraman M., Çiğlik, İstanbul, 2005.
31. Kaplan S., 1915-te ne oldu?, 2-inci baskı, İstanbul, 2005.
32. Karakoyunlu Y., Salkım Hanımın Taneleri, 16. baskı, İstanbul, 2010.
33. Karşı A. K., Vartanuş'un Ali'si, İstanbul, 2014.
34. Kemal O., Kanlı Topraklar, (10. basım), İstanbul, 2012.
35. Kemal O., Ekmek Kavgası, İstanbul, 2013.

36. Kemal Y., Yağmuncuk Kuşu, 4-üncü basım, İstanbul, 1980.
37. Livaneli Z., Serenad, İstanbul, 2011.
38. Miller D., Miller L., Tanıklar Dilinden Ermeni Soykırımı, İstanbul, 2006.
39. Oran B., "M.K." Adlı Çocuğun Tehcir Anıları: 1915 ve Sonrası, İstanbul, 2005.
40. Özdamar E. S., Haliçli Köprü, İstanbul, 2008.
41. Özdamar E. S., Hayat Bir Kervansaray, İstanbul, 2008.
42. Özdamar E.S., Tuhaf Yıldızlar Dünyaya Bakıyorlar Gözlerini Kırpmadan, İstanbul, 2012.
43. Özdamar E. S., Aynadaki Avlu, İstanbul, 2012.
44. Özdamar E. S., Annedili, İstanbul, 2013.
45. Özdem F., Korku Benim Sahibim, İstanbul, 2007.
46. Öztarsu M. F., Fedailer Devrimi, İstanbul, 2015.
47. Palalı İ., Tehcir Çocukları: Nenem bir Ermeniymiş, İstanbul, 2005.
48. Palalı İ., Taşların Ağıtı: Astvadzadzin'in Katli, İstanbul, 2005.
49. Peroomian R., And Those Who Continued Living in Turkey after 1915: The Metamorphosis of the Post-Genocide Armenian Identity as Reflected in Artistic Literature, Yerevan, 2008.
50. Şafak E., Baba ve Piç, İstanbul, 2006.
51. Şenocak Z., Tehlikeli Akrabalık, İstanbul, 2006.
52. Şenocak Z., Yolculuk Nereye, İstanbul, 2007.
53. Şenocak Z., Dünyanın İki Ucu, İstanbul, 2011.
54. Tahir K., Büyük Mal, İstanbul, 1970.
55. Türkali V., Kayıp Romanlar, İstanbul, 2004.
56. Tahir K., Kurt Kanunu, İstanbul, 2005.
57. Tahir K., Esir Şehrin İnsanları, 7-inci baskı, İstanbul, 2007.
58. Tahir K., Damağası, 2-inci baskı, İstanbul, 2007.
59. Tekin G., Kara Kefen, İstanbul, 2008.
60. Yalçın K., Sarı Gelin, Bochum, 2004.
61. Yalçın K., Anadolu'nun Evlatları (Yüz yılın Tanıkları), Köln, 2008.
62. Yalçın K., Yaşama Gücü, İstanbul, 2013.

Հոդվածներ

հայերեն

1. Մարության Հ., Տրավմատիկ հիշողությունն իբրև հայկական ինքնության պահպանման կարևորագույն գործոն Թուրքիայում, Թուրքիայի հայության խնդիրների շուրջ, Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, թիվ 22, Երևան, 2008:

2. Պարսամյան Ս., Միրզոյան Ա., Ազգերի լիզայի փաստաթղթերն ապացուցում Հայոց ցեղասպանության փաստը, http://www.genocidemuseum.am/arm/g-brief_09.php

3. Ունգոր Ու., Կրոնափոխություն և փրկություն. գոյատևման ռազմավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում, Թուրքիայի հայության խնդիրների շուրջ, Տեղեկագիր «Նորավանք» հիմնադրամի, թիվ 22, Երևան, 2008:

ռուսերեն

4. Миндадзе И., Коллективная память и самобытность группы; Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа, Тбилиси, 2005.

թուրքերեն

5. Başlangıç C., Özgürlüğün bu kadarı da fazla!, Radikal, **3. 07. 2006.**
6. Berktaş H., Nâzım, Ermeni kıyımı, bir kolej hikâyesi, Taraf, 12. 01. 2008.
7. Çilingir O., Türk romanında 1915 ve örnek eserler (1), Agos, 04. 01. 2008.
8. Çilingir O., Türk romanında 1915 ve örnek eserler (2), Agos, 11. 01. 2008.
9. Çilingir O., Türk romanında 1915 ve örnek eserler (5), Agos, 01. 02. 2008.
10. Çilingir O., Türk romanında 1915 ve örnek eserler (6), Agos, 08. 02. 2008.
11. Çilingir O., Türk romanında 1915 ve örnek eserler (7), Agos, 15. 02. 2008.
12. Demir A., Armenak'ın kemikleri üşümesin, Agos, 27. 05. 2005.
13. Dink H., Türkler ve Ermeniler: İki Yakın Halk; Türkiye ve Ermenistan: İki Uzak Komşu; Ermeni Sorunu Tartışılırken..., İstanbul, 2006.

14. Ertan O., Ermenileri “ötekileştiren” edebiyat ve “Hayatta Kalanlar”, Agos, 08. 02. 2008.

15. Gönensin O., Ermeni büyükanneler, Vatan, 31. 05. 2009.

16. Güven Ö., “Adı Seher değil Heranus’tu”, Milliyet (Pazar eki), 26.12.2004.

17. Kaplan S., Ben kardeşiniz Serkis İmas böyle doğup böyle büyüdüm, Hürriyet, 30. 10. 2008.

18. Kayıt dışı çocuklar akrabalarını arıyor, Sabah, 09.07.2005.

19. Opçin T., “Kejesi Olmayan Bir Eşkiyaydı”, Chronicle, İstanbul, 2005, sayı 2.

20. Orman H., İnkâr ya da İkrar: Türkiye Edebiyatında Ermeni Soykırımını, Utanç ve Onur 1915-2015 Ermeni Soykırımının 100. Yılı (Hazırlayanlar Aydın Çubukçu, Nevzat Onaran, C. Hakkı Zariç, Onur Öztürk, İstanbul, Evrensel Basın Yayın, 2015, s. 352-365.

21. Ovunç B., Örgütlerin Ermeni Avı, www.haber7.com/artikel.php?artikel_id=134306

22. Türkeş Ö., Hafızanın başkaldırısı, Radikal, 07.09.2007.

Հարցազրույցներ

23. Հարցազրույց «Մեծ մայրիկս» գիրքի հեղինակ Ֆեթիյե Չեթինի հետ, Ազդակ, 27.11. 2006:

24. Dink H., Ölenlerin değil, kalanların üzerinden konuşalım, Zaman, 26. 11. 2005.

25. Türkali V., “Bizim kuşağımız neler olduğunu bilmiyordu”, Agos, 28. 05. 2004; (Հրանտ Դինքի հարցազրույցը թուրք գրող Վեդաթ Թուրքալիի հետ):

26. Zülfü Livaneli: Geçmiş “Olmuş bitmiş canım, unut!” demekle unutmaz, Agos, 01. 04. 2011.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՌՈՒԲԵՆ ՄԵԼՔՈՆՑԱՆ
ՆԱԻՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ
(XX Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XXI Դ. ՍԿԶԲԻՆ)**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալարյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Գ. Գրիգորյանի

Տպագրված է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 6

Ստորագրված է տպագրության՝ 28.12.2016:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 9.25:
Տպաքանակը՝ 150:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y su.am



ԿՐԻՍՏՈՍԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐՔԱՆ 2016
publishing_ysu.am